Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-508-30.01.2023-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2004 թվականի նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետում «աշխատանքի ազատությունը» բառերը փոխարինել «աշխատանքի ազատ ընտրությունը» բառերով.

2) 2-րդ կետում «բռնությունների» բառից հետո լրացնել «, սեռական ոտնձգության» բառերով.

3) 3-րդ կետում «ռասայից, » բառից հետո լրացնել «մաշկի գույնից, » բառերով, իսկ «դավանանքից» բառը փոխարինել «կրոնից» բառով:

Հոդված 2. Օրենսգրքի 3.1-ին հոդվածի 3-րդ մասում «բացառությամբ» բառից հետո լրացնել «սույն օրենսգրքով եւ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի կամ» բառերով:

Հոդված 3. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ՝ նոր 3.3-րդ հոդվածով.

«**Հոդված 3.3. Աշխատանքում բռնության կամ սեռական ոտնձգության արգելքը**

1. Աշխատանքում (աշխատավայրում) բռնությունը կամ սեռական ոտնձգությունն արգելվում են:

2. Բռնությունն աշխատավայրում կամ աշխատանքային պարտականությունների կատարման այլ վայրում (ներառյալ՝ գործուղումները) աշխատողի կամ երրորդ անձի դեմ ուղղված բռնի կամ բռնության սպառնալիք պարունակող մեկանգամյա կամ կրկնվող արարք է, որը

հանգեցնում է կամ կարող է հանգեցնել ֆիզիկական, հոգեկան, սեռական կամ տնտեսական վնասի կամ անձի համար թշնամական կամ նվաստացուցիչ միջավայրի ձեւավորման:

3. Սեռական ոտնձգությունն աշխատավայրում կամ աշխատանքային պարտականությունների կատարման այլ վայրում (ներառյալ՝ գործուղումները) սեռական բնույթի անցանկալի արարք է, որն ունի ֆիզիկական կամ խոսքային կամ ոչ խոսքային դրսեւորում (ներառյալ՝ սեռական բնույթի առաջարկներ, հպումներ) եւ որն ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում է անձի՝ աշխատանքի վերաբերյալ որոշումների կայացման վրա կամ ստեղծում է արժանապատվությունը նվաստացնող կամ սոցիալական մեկուսացման դրդող աշխատանքային միջավայր:»:

Հոդված 4. Օրենսգրքի 7-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասից հանել «(քաղաքացիներ կամ կազմակերպություններ)» բառերը.

2) 4-րդ մասում «կազմակերպությունը» բառից առաջ լրացնել «պետությունում գրանցված կամ միջազգային» բառերով, իսկ «անձը» բառից հետո՝ «(այսուհետ՝ օտարերկրյա գործատու)» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Օրենքի կամ իրավունքի անալոգիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են գործատուների կամ քաղաքացիների իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսվում է նոր պարտականություն կամ պատասխանատվություն, կամ խստացվում են նրանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության, հարկադրանքի միջոցները կամ դրանց կիրառման կարգը, նրանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու պայմանները եւ կարգը:»:

Հոդված 6. Օրենսգրքի 14-րդ հոդվածում՝

1) վերնագրում «հիմքերը» բառից հետո լրացնել «եւ վայրը» բառերով.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մաս.

«1.1. Աշխատանքային հարաբերությունները համարվում են ծագած Հայաստանի Հանրապետությունում, եթե աշխատանքային պայմանագիրը կնքվել կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտն ընդունվել է Հայաստանի Հանրապետությունում: Եթե աշխատանքային պայմանագիրը կնքվել է Հայաստանի

Հանրապետությունից դուրս այլ վայրում կամ սույն օրենսգրքի 85-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգով փոստային կամ էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով փոխանակելով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտն աշխատողին ուղարկվել է սույն մասով սահմանված կապի միջոցներով, ապա աշխատանքային պայմանագիրը կնքված, իսկ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտն ընդունված է համարվում Հայաստանի Հանրապետությունում, եթե՝

1) ռեզիդենտ իրավաբանական անձ հանդիսացող գործատուի գտնվելու վայրը (նրա մշտական գործող մարմնի գտնվելու վայրը) հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը.

2) գործատուն հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը.

3) հիմնարկի պետական հաշվառման վայրը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը.

4) օտարերկրյա պետությունում գրանցված կազմակերպությունների կամ միջազգային կազմակերպությունների՝ գործատու հանդիսացող առանձնացված ստորաբաժանումների եւ հիմնարկների գտնվելու վայրի հասցեն (փոստային հասցեն) Հայաստանի Հանրապետությունում է.

5) ֆիզիկական անձ հանդիսացող գործատուի բնակության վայրը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը:»:

Հոդված 7. Օրենսգրքի 16-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Իրավաբանական անձ չհանդիսացող այլ գործատուների աշխատանքային իրավունակության եւ գործունակության նկատմամբ կիրառվում են իրավաբանական անձ հանդիսացող գործատուի աշխատանքային իրավունակության եւ գործունակության մասին նորմերը, եթե այլ բան չի բխում սույն օրենսգրքից, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներից կամ տվյալ սուբյեկտների առանձնահատկություններից:».

2) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Գործատուները ձեռք են բերում աշխատանքային իրավունքներ եւ կրում են աշխատանքային պարտականություններ, ինչպես նաեւ դրանք իրականացնում են համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձանց, օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ կամ գործատուի

ընդունած ներքին կամ անհատական իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ այդպիսի լիազորություններ ունեցող այլ անձանց, ինչպես նաեւ իրենց մարմինների միջոցով, որոնք ձեւավորվում եւ գործում են օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի, իրավաբանական անձի կանոնադրության կամ գործատուի ընդունած ներքին կամ անհատական իրավական ակտերի հիման վրա:»:

Հոդված 8. Օրենսգրքի 17-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Աշխատող են համարվում նաեւ սույն օրենսգրքի 17.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամանակավոր աշխատանք կատարող անձինք:»:

2) 2.1-ին, 2.2-րդ, 3-րդ եւ 4-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 17.1-ին հոդվածով.

«**Հոդված 17.1. Մինչեւ տասնութ տարեկան անձանց մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների առանձնահատկությունները**

1. Մինչեւ տասնութ տարեկան յուրաքանչյուր անձ ունի իր տարիքային հնարավորություններին, զարգացման առանձնահատկություններին եւ ունակություններին համապատասխան՝ սույն օրենսգրքով եւ Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով չարգելված աշխատանքային գործունեություն ծավալելու իրավունք:

2. Մինչեւ տասնչորս տարեկան անձինք կարող են ընդգրկվել միայն կինեմատոգրաֆիայի, մարզական, թատերական կամ համերգային կազմակերպություններում, կրկեսում, հեռուստատեսությունում կամ ռադիոյում ստեղծագործությունների ստեղծմանը (ստեղծագործական աշխատանք) կամ կատարմանը:

3. Մինչեւ տասնվեց տարեկան անձանց հետ կնքվում է ժամանակավոր աշխատանքային պայմանագիր: Մինչեւ տասնվեց տարեկան անձանց մշտական աշխատանքի ընդունելն արգելվում է: Մինչեւ տասնվեց տարեկան անձինք, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում եւ կարգով, կարող են ընդունվել ժամանակավոր աշխատանքի՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ խնամակալի կամ հոգաբարձուի, իսկ նրանց բացակայության դեպքում՝ մինչեւ տասնվեց տարեկան անձի բնակության վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմնի գրավոր համաձայնությամբ, եթե այն չի խոչընդոտում նրանց պարտադիր կրթության գործընթացին:

4. Մինչեւ տասնվեց տարեկան անձինք ժամանակավոր աշխատանքներում կարող են ընդգրկվել սույն օրենսգրքի 85-րդ հոդվածի 1-ին եւ 1.2-րդ մասերին, 89-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ եւ 5-րդ կետերին, 91-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին, 101-րդ հոդվածին, 140-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերին, 143-րդ հոդվածի 1.1-ին մասին, 148-րդ հոդվածի 3-րդ մասին, 149-րդ հոդվածի 4-րդ մասին, 152-րդ հոդվածի 1.1-ին մասին, 153-րդ հոդվածի 2-րդ մասին, 154-րդ հոդվածի 2-րդ մասին, 155-րդ հոդվածի 7-րդ մասին, 164-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետին, 209-րդ հոդվածի 3-րդ մասին, 240-րդ հոդվածի 2-րդ մասին, 249-րդ հոդվածի 1-ին մասին, 257-րդ հոդվածին համապատասխան:

5. Մինչեւ տասնութ տարեկան անձինք կարող են ընդգրկվել միայն այնպիսի աշխատանքներում, որոնք չեն վտանգում նրանց առողջությունը (այդ թվում՝ ֆիզիկական եւ մտավոր զարգացումը), բարոյականությունը, չեն սպառնում նրանց անվտանգությանը եւ չեն խոչընդոտում նրանց պարտադիր կրթությանը:

6. Մինչեւ տասնութ տարեկան անձինք չեն կարող ընդգրկվել աշխատանքի հանգստյան, ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերին, բացառությամբ մարզական եւ մշակութային միջոցառումներին մասնակցելու դեպքերի:

7. Մինչեւ տասնութ տարեկան անձինք ունեն աշխատանքի արտոնյալ պայմանների իրավունք: Այդ անձանց համար սահմանվում է աշխատաժամանակի կրճատ տեւողություն՝ սույն օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի 1-5-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխան:»:

Հոդված 10. Օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Գործատու կարող են լինել Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած իրավաբանական անձինք՝ անկախ կազմակերպական-իրավական ձեւից, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված հիմնարկները, սույն օրենսգրքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված սուբյեկտները, օտարերկրյա պետությունում գրանցված կազմակերպությունների կամ միջազգային կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով գրանցված կամ հաշվառված առանձնացված ստորաբաժանումները, հիմնարկները, ինչպես նաեւ ֆիզիկական անձինք, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը եւ նոտարները: Որպես գործատու կարող է հանդես գալ նաեւ Հայաստանի Հանրապետությունը եւ համայնքը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության օրենքով աշխատանքային պայմանագիր կնքելու կամ

աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ ընդունելու իրավունք ունեցող այլ սուբյեկտ:»:

Հոդված 11. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 18.1-ին հոդվածով.

«**Հոդված 18.1. Աշխատանքի վայրը (աշխատավայրը)**

1. Աշխատանքի վայրն (աշխատավայրը) այն տեղն է, որտեղ աշխատողը կատարում է աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով սահմանված աշխատանքային գործառույթները կամ որում աշխատողը պետք է գտնվի կամ որտեղ պետք է ներկայանա՝ իր աշխատանքով պայմանավորված եւ որն ուղղակի (անմիջականորեն) կամ անուղղակի կերպով գտնվում է գործատուի կառավարման (ղեկավարման) կամ հսկողության ներքո:

2. Եթե աշխատանքի բնույթով պայմանավորված, միեւնույն գործատուի մոտ աշխատանքի դեպքում աշխատողի համար աշխատավայր են հանդիսանում մեկից ավելի վայրեր (տեղեր), ապա աշխատանքի հիմնական վայր (հիմնական աշխատավայր) է հանդիսանում՝

1) մշտական տեղակայման վայր ունեցող եւ աշխատանքի միջոցներով սարքավորված այն աշխատավայրը, որտեղ աշխատողը սովորաբար անցկացնում է աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով նախատեսված աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ ժամանակահատվածի կեսից ավելին.

2) գործատուի գտնվելու վայրը կամ գործատուի այն կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանման կամ գրասենյակի կամ հիմնարկի գտնվելու վայրը, որում աշխատում է աշխատողը, այն դեպքերում, երբ՝

ա. աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով նախատեսված աշխատանքները կատարելու համար սույն մասի 1-ին կետով նախատեսված ժամանակահատվածի տեւողությունը հնարավոր չէ որոշել.

բ. աշխատանքները հանդիսանում են դաշտային պայմաններում կատարվող կամ տեղափոխման (տեղաշարժման) բնույթ կրող կամ ոչ մշտական տեղակայման վայր ունեցող կամ շրջիկ առեւտրի կետերում աշխատանքներ.

3) կողմերի համաձայնությամբ աշխատանքային պայմանագրում սահմանված աշխատավայրը, այն դեպքում, եթե սույն մասի 1-ին եւ 2-րդ կետերով հնարավոր չէ որոշել աշխատանքի հիմնական վայրը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում, եթե գործատուն անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձ է՝ աշխատանքի հիմնական վայր (հիմնական աշխատավայր) է հանդիսանում նրա մշտական բնակության վայրը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ օրենքով սահմանված պետական միասնական գրանցամատյանում գրառված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասցեն:

4. Գործուղման հետ կապված հարաբերությունների կիրառության իմաստով որպես աշխատանքի հիմնական վայր է դիտարկվում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներին համապատասխանող աշխատավայրի գտնվելու բնակավայրը:»:

Հոդված 12. Օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին եւ 3-րդ կետերում «որոնք» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերով.

2) 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) մասնագիտական աշխատանքային ստաժ, որում հաշվարկվում են քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված մասնագիտական կրթության, իսկ տվյալ աշխատանքի նկարագրով (պաշտոնի անձնագրով) որոշակի մասնագիտական կրթություն նախատեսված լինելու դեպքում՝ այդ կրթության մասին վկայող փաստաթղթում նշված որակավորմանը կամ մասնագիտությանը համապատասխանող աշխատանքային ստաժը, անկախ պետական կամ մասնավոր ոլորտներում կատարած աշխատանքից, ինչպես նաեւ այլ ժամանակահատվածներ, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ թույլատրվում է հաշվարկել տվյալ տեսակի աշխատանքային ստաժում: Մասնագիտական աշխատանքային ստաժը ներառում է համապատասխան որակավորում ստանալուց հետո աշխատած ժամանակահատվածը.».

3) 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 13. Օրենսգրքի 23-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«**Հոդված 23. Աշխատողների ներկայացուցիչները**

1. Աշխատողների իրավունքներն ու շահերը ներկայացնելու եւ աշխատանքային հարաբերություններում դրանք պաշտպանելու իրավունք ունեն արհեստակցական միությունները: Կազմակերպությունում արհեստակցական միության բացակայության դեպքում աշխատողների ժողովի (համաժողովի) կողմից աշխատողների ներկայացուցչության եւ շահերի պաշտպանության

գործառույթները կարող են փոխանցվել համապատասխան ճյուղային կամ տարածքային արհեստակցական միությանը: Այդ դեպքում աշխատողների ժողովը (համաժողովը) ընտրում է ներկայացուցիչ (ներկայացուցիչներ), որը ճյուղային կամ տարածքային արհեստակցական միության պատվիրակության կազմում մասնակցում է տվյալ գործատուի հետ վարվող կոլեկտիվ բանակցություններին:

2. Եթե կազմակերպությունում՝

1) աշխատողները միավորված են միայն մեկ արհեստակցական միությունում եւ այն միավորում է կազմակերպության աշխատողների կեսից ավելիին, ապա կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում այդ արհեստակցական միությունը ներկայացնում եւ պաշտպանում է կազմակերպության բոլոր աշխատողների իրավունքներն ու շահերը.

2) աշխատողները միավորված են միայն մեկ արհեստակցական միությունում, որին անդամակցում են կազմակերպության աշխատողների ոչ ավելին, քան կեսը, ապա կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում տվյալ արհեստակցական միությունը ներկայացնում եւ պաշտպանում է միայն իր անդամների իրավունքները եւ շահերը.

3) աշխատողները միավորված չեն որեւէ արհեստակցական միությունում (այդ թվում՝ ճյուղային կամ տարածքային), ապա կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում բոլոր աշխատողների իրավունքներն ու շահերը ներկայացնելու եւ դրանք պաշտպանելու նպատակով, աշխատողների ժողովի (համաժողովի) կողմից կարող են ընտրվել ներկայացուցիչներ (մարմին):

3. Կազմակերպությունում մեկից ավելի արհեստակցական միության առկայության դեպքում կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում բոլոր աշխատողների իրավունքներն ու շահերը ներկայացնելու եւ դրանք պաշտպանելու նպատակով, սույն օրենսգրքի 56-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով կարող է ստեղծվել աշխատողների ներկայացուցչական միասնական մարմին:

4. Միեւնույն անձը միաժամանակ չի կարող ներկայացնել աշխատողների եւ գործատուների շահերն ու պաշտպանել դրանք:»:

Հոդված 14. Օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 3-րդ կետում «կազմակերպման» բառից հետո լրացնել « եւ աշխատանքի պայմանների» բառերով.

2) 6-րդ կետում «կամ» բառից հետո լրացնել «աշխատողների կամ» բառերով:

Հոդված 15. Օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով եւ 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ կետով.

«8) աշխատողների ներկայացուցիչներին տրամադրել տարածք եւ նյութատեխնիկական միջոցներ՝ իրենց լիազորությունների իրականացման համար՝ կոլեկտիվ պայմանագրով կամ կողմերի համաձայնությամբ սահմանված կարգով:»:

Հոդված 16. Օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունում «կազմակերպության կանոնադրությամբ» բառերը փոխարինել «այլ նորմատիվ իրավական ակտով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ կամ գործատուի ընդունած ներքին կամ անհատական իրավական ակտերով» բառերով:

Հոդված 17. Օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին մասը «աշխատանքային» բառից հետո լրացնել «եւ դրա հետ կապված սոցիալական կամ տնտեսական» բառերով:

Հոդված 18. Օրենսգրքի 45-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «աշխատանքային» բառից հետո լրացնել « եւ դրա հետ կապված սոցիալական կամ տնտեսական» բառերով.

2) 2-րդ մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.
«Կոլեկտիվ բանակցությունների անցկացման մասին ծանուցում ստացած կողմը պարտավոր է սույն օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված ժամկետում կոլեկտիվ բանակցությունների ցանկություն հայտնած կողմին տեղեկացնել կոլեկտիվ բանակցություններին մասնակցելու իր դիրքորոշման մասին:».

3) 7-րդ մասում «կնքելու» բառից հետո լրացնել «կամ կոլեկտիվ պայմանագրում կատարված փոփոխությունները կամ լրացումներն ուժի մեջ մտնելու» բառերով:

Հոդված 19. Օրենսգրքի 49-րդ հոդվածի 3-րդ մասում՝

1) 12-րդ կետում «կոլեկտիվ» բառից հետո լրացնել «աշխատանքային» բառով.

2) 13-րդ կետում «հարցեր» բառը փոխարինել «պայմաններ» բառով:

Հոդված 20. Օրենսգրքի 51-րդ հոդվածում՝

1) վերնագրում «գրանցումը» բառը փոխարինել «հաշվառումը» բառով.

2) 1-ին մասի՝

ա. 1-ին նախադասությունում «գրանցումն իրականացնում է պետական լիազոր մարմինը՝» բառերը փոխարինել «հաշվառումն իրականացնում է տեսչական մարմինը՝» բառերով.

բ. 2-րդ եւ 3-րդ նախադասություններում «գրանցման» բառերը փոխարինել «հաշվառման» բառերով.

3) 2-րդ մասում «գրանցման» բառերը փոխարինել «հաշվառման» բառերով.

4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ մաս.

«3. Հանրապետական, ճյուղային եւ տարածքային կոլեկտիվ պայմանագրերի՝ սույն հոդվածով նախատեսված հաշվառման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 21. Օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասում «պայմանների» բառից հետո լրացնել «կամ դրանց մի մասի» բառերով:

Հոդված 22. Օրենսգրքի 56-րդ հոդվածի 4-րդ մասում «Կազմակերպությունում աշխատողների ներկայացուցիչների բացակայության պատճառով աշխատողների» բառերը փոխարինել «Աշխատողների» բառով:

Հոդված 23. Օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասում «հարցերի» բառը փոխարինել «պայմանների» բառով:

Հոդված 24. Օրենսգրքի 59-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասից հանել «(բացառությամբ կազմակերպության վերակազմակերպման դեպքի, ինչպես նաեւ սույն օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի)» բառերը.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ եւ 7-րդ մասեր.

«6. Կազմակերպության վերակազմակերպման կամ կազմակերպության մասնավորեցման (ապապետականացման) դեպքում կազմակերպության կոլեկտիվ պայմանագիրը շարունակում է գործել մինչեւ իր գործողության մնացած ժամկետի լրանալը կամ մինչեւ նոր կոլեկտիվ պայմանագրի կնքելը, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքի:

7. Այն դեպքում, երբ մինչեւ վերակազմակերպվելը կազմակերպություններում առկա են եղել մեկից ավելի կոլեկտիվ պայմանագրեր, ապա կազմակերպության վերակազմակերպման

դեպքում այդ կոլեկտիվ պայմանագրերը դադարում են գործել, եւ երկամսյա ժամկետում կնքվում է նոր կոլեկտիվ պայմանագիր, որի դրույթները չեն կարող նվազ բարենպաստ լինել, քան վերակազմակերպվող կազմակերպությունների կոլեկտիվ պայմանագրերի դրույթներն են:»:

Հոդված 25. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 59.1-ին հոդվածով.

«**Հոդված 59.1. Կազմակերպության կոլեկտիվ պայմանագրի հաշվառումը**

1. Կազմակերպության կոլեկտիվ պայմանագրի հաշվառումն իրականացնում է տեսչական մարմինը՝ համապատասխան դիմումը եւ կոլեկտիվ պայմանագիրը ներկայացնելու դեպքում: Ներկայացված կոլեկտիվ պայմանագրի հաշվառման մերժումը որեւէ պատճառաբանությամբ արգելվում է:

2. Կազմակերպության կոլեկտիվ պայմանագիրը ստորագրման պահից տասն օրվա ընթացքում հաշվառման է ներկայացնում տվյալ կոլեկտիվ պայմանագրի կողմ հանդիսացող գործատուն:

3. Եթե սույն հոդվածի 2-րդ մասում նշված ժամկետում գործատուն կազմակերպության կոլեկտիվ պայմանագիրը հաշվառման չի ներկայացնում, ապա կազմակերպության կոլեկտիվ պայմանագիրը հաշվառման կարող է ներկայացվել պայմանագրի կողմ հանդիսացող աշխատողների ներկայացուցչի կողմից: Կազմակերպության կոլեկտիվ պայմանագրի կողմ հանդիսացող աշխատողների ներկայացուցիչը պայմանագիրը հաշվառման է ներկայացնում սույն հոդվածի 2-րդ մասում նշված ժամկետը լրանալուց հետո՝ հինգ օրվա ընթացքում:

4. Կազմակերպության կոլեկտիվ պայմանագրի հաշվառման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 26. Օրենսգրքի 61-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «2-րդ եւ 3-րդ մասերով նախատեսված դեպքերի» բառերը փոխարինել «3-րդ մասով նախատեսված դեպքի» բառերով.

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 27. Օրենսգրքի 11-րդ գլխի վերնագրում «**ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**» բառից հետո լրացնել «, **ԳՈՐԾԱԴՈՒԼԸ**» բառը:

Հոդված 28. Օրենսգրքի 64-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«**Հոդված 64. Կոլեկտիվ աշխատանքային վեճը**

1. Կոլեկտիվ աշխատանքային վեճը արհեստակցական միության եւ գործատուի կամ կոլեկտիվ պայմանագիր կնքելու իրավունք ունեցող կողմերի միջեւ տարաձայնություններն են՝ կողմերի ներկայացրած ու չբավարարված պահանջների վերաբերյալ: Դրանք ծագում են աշխատողների աշխատանքի սոցիալ-տնտեսական պայմանների սահմանման, փոփոխման, կոլեկտիվ պայմանագրի կնքման կամ փոփոխման առիթով բանակցությունների, ինչպես նաեւ օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով կամ կոլեկտիվ պայմանագրով սահմանված պայմանների փոփոխման, դադարեցման կամ աշխատանքի նոր պայմանների սահմանման, կոլեկտիվ պայմանագրի կնքման եւ կատարման ընթացքում, այդ թվում՝ կոլեկտիվ պայմանագրի կարգավորման առարկայի շրջանակներում առաջացած, սակայն կողմերի համաձայնությամբ նախօրոք չկարգավորված հարաբերությունների կամ կոլեկտիվ պայմանագրի շրջանակներում չկարգավորված հարաբերությունների հետ կապված:»:

Հոդված 29. Օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «վեճերի» բառից առաջ լրացնել «աշխատանքային» բառով:

Հոդված 30. Օրենսգրքի 73-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«**Հոդված 73. Գործադուլը**

1. Աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք:

2. Գործադուլը մեկ կամ մի քանի գործատուների մոտ աշխատողների կոլեկտիվի կամ աշխատողների որոշակի խմբի՝ կոլեկտիվ գործողությունների միջոցով աշխատանքների լրիվ կամ մասնակի ժամանակավոր դադարեցումն է աշխատողների տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով, այդ թվում՝

1) աշխատանքային վեճն աշխատողի եւ գործատուի համաձայնությամբ չլուծվելու դեպքում.

2) կոլեկտիվ աշխատանքային վեճը չլուծվելու դեպքում.

3) գործատուի կողմից հաշտեցման գործընթաց իրականացնելուց խուսափելու դեպքում.

4) հաշտեցման հանձնաժողովի՝ սույն օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ընդունած որոշումը գործատուի կողմից չկատարելու դեպքում.

5) նախօրոք կնքված կոլեկտիվ աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտավորությունները գործատուի կողմից չկատարելու դեպքում.

6) կոլեկտիվ բանակցություններ վարելու վերաբերյալ գրավոր ծանուցում ստացած գործատուի կողմից սույն օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված ժամկետում կոլեկտիվ բանակցություններին մասնակցելու իր դիրքորոշման մասին կոլեկտիվ բանակցությունների ցանկություն հայտնած կողմին չտեղեկացնելու դեպքում:»:

Հոդված 31. Օրենսգրքի 74-րդ հոդվածում՝

1) 1-ին, 1.1-ին եւ 2-րդ մասերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Գործադուլ հայտարարելու մասին որոշում ընդունելու իրավունք ունի արհեստակցական միությունը՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով: Գործադուլը հայտարարվում է այն դեպքում, եթե այդ մասին որոշումը գաղտնի քվեարկությամբ հավանության է արժանացել՝

1) գործատուի մոտ գործադուլի դեպքում (աշխատողների կոլեկտիվի գործադուլի դեպքում)՝ քվեարկությանը մասնակցած աշխատողների ձայների մեծամասնությամբ, որը չի կարող պակաս լինել աշխատողների ընդհանուր թվի կեսից.

2) գործատուի առանձնացված կամ կառուցվածքային ստորաբաժանումում կամ գրասենյակում կամ գործատուի հիմնարկում գործադուլ հայտարարելիս՝ այդ ստորաբաժանման կամ գրասենյակի կամ հիմնարկի քվեարկությանը մասնակցած աշխատողների ձայների մեծամասնությամբ, որը չի կարող պակաս լինել այդ ստորաբաժանման կամ գրասենյակի կամ հիմնարկի աշխատողների ընդհանուր թվի կեսից: Այն դեպքում, երբ գործատուի առանձնացված կամ կառուցվածքային ստորաբաժանումում կամ գրասենյակում կամ հիմնարկում գործադուլ հայտարարելը խոչընդոտում է գործատուի մյուս ստորաբաժանումների բնականոն գործունեությանը, ապա գործադուլ հայտարարելու որոշումը պետք է հավանության արժանանա այդ ստորաբաժանման կամ գրասենյակի կամ հիմնարկի՝ քվեարկությանը մասնակցած աշխատողների մեծամասնության կողմից, որը չի կարող պակաս լինել գործատուի մոտ աշխատողների ընդհանուր թվի մեկ երրորդից:

1.1. Գործատուի մոտ արհեստակցական միության բացակայության դեպքում գործադուլ հայտարարելու մասին որոշման ընդունումը եւ գործադուլ հայտարարելու հետ կապված այլ գործառույթների իրականացումն աշխատողների ժողովի (համաժողովի) որոշմամբ կարող են վերապահվել համապատասխան ճյուղային կամ տարածքային արհեստակցական միությանը, իսկ նաեւ համապատասխան ճյուղային կամ տարածքային արհեստակցական միության

բացակայության դեպքում գործադուլ հայտարարելու մասին որոշման ընդունումը եւ գործադուլ հայտարարելու հետ կապված այլ գործառույթները կարող են իրականացնել աշխատողների ժողովի (համաժողովի) կողմից ընտրված ներկայացուցիչները (մարմինը):

2. Նախատեսվող գործադուլի մասին արհեստակցական միությունը պարտավոր է գործատուին գրավոր կերպով տեղեկացնել գործադուլն սկսելու օրվանից առնվազն յոթ օր առաջ՝ տեղեկացման հետ միաժամանակ գործատուին տրամադրելով սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված տեղեկությունները պարունակող՝ գործադուլ հայտարարելու մասին որոշումը:».

2) 5-րդ մասի 1-ին կետում «պահանջները» բառից հետո լրացնել «, ընդ որում, հաշտեցման ընթացակարգերի ժամանակ բավարարված պահանջները չեն կարող ներկայացվել» բառերով:

Հոդված 32. Օրենսգրքի 76-րդ հոդվածում՝

1) 1-ին եւ 2-րդ պարբերությունները համարակալել համապատասխանաբար «1.» եւ «2.» թվագրությամբ.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ մաս.

«3. Գործադուլի ավարտից հետո գործադուլային կոմիտեի գործունեությունը համարվում է դադարած:»:

Հոդված 33. Օրենսգրքի 77-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունում «մարմինները» բառից հետո լրացնել «՝ գործատուների եւ աշխատողների համապատասխան ներկայացուցիչների հետ բանակցությունների արդյունքում» բառերով:

Հոդված 34. Օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասում «օրենսգրքով» բառից հետո լրացնել «կամ կոլեկտիվ պայմանագրով» բառերով:

Հոդված 35. Օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով եւ 1-ին մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ կետ.

«4) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով գործադուլը ճանաչվել է անօրինական:»:

Հոդված 36. Օրենսգրքի 82-րդ հոդվածում՝

1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մաս.

«1.1. Եթե սույն օրենսգրքի 78-րդ հոդվածով սահմանված կարգով անօրինական ճանաչված գործադուլը հայտարարելու մասին որոշումն ընդունել են աշխատողների ժողովի (համաժողովի) կողմից ընտրված ներկայացուցիչները (մարմինը) կամ աշխատողների ներկայացուցչական միասնական մարմինը, ապա անօրինական ճանաչված գործադուլին մասնակցած աշխատողները գործատուին պատճառված վնասի համար կրում են համապարտ պատասխանատվություն:».

2) 2-րդ մասում «Կազմակերպության, դրա առանձնացված (կառուցվածքային)» բառերը փոխարինել «Գործատուն, նրա առանձնացված կամ կառուցվածքային» բառերով:

Հոդված 37. Օրենսգրքի 83-րդ հոդվածում «որակավորմամբ» բառը փոխարինել «պաշտոնում, որակավորմամբ կամ որակավորում չպահանջող» բառերով:

Հոդված 38. Օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 2-րդ կետից հանել «նրա ցանկությամբ՝ նաեւ» բառերը.

2) 3-րդ կետում «կազմակերպության» բառը փոխարինել «գործատուի» բառով, իսկ «նրա ցանկությամբ՝ նաեւ» բառերը հանել.

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-ին կետ.

«3.1) աշխատանքի վայրը.».

4) 4-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4) գործատուի այն կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանումը կամ գրասենյակը կամ հիմնարկը (դրանց առկայության դեպքում), որում աշխատելու է աշխատողը.».

5) 6-րդ կետում «գործառույթները» բառից հետո լրացնել «կամ հղում պաշտոնից բխող գործառույթները սահմանող փաստաթղթին» բառերով.

6) 7-րդ կետում «չափը եւ (կամ)» բառերը փոխարինել «չափը (ներառյալ աշխատավարձից վճարվող հարկերը, սոցիալական կամ օրենքով սահմանված պարտադիր այլ վճարները) եւ» բառերով, իսկ «ձեւը» բառից հետո լրացնել «(ժամային, օրական, գործավարձային կամ ամսական դրույքաչափ)» բառերով.

7) 8-րդ կետից հանել «եւ այլն» բառերը.

8) 11-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«11) աշխատաժամանակի ռեժիմը (աշխատաժամանակի նորմալ տեւողություն կամ ոչ լրիվ աշխատաժամանակ կամ աշխատաժամանակի կրճատ տեւողություն կամ աշխատաժամանակի

գումարային հաշվարկ) եւ շաբաթական տեւողությունը (բացառությամբ աշխատաժամանակի գումարային հաշվարկի).».

9) 13-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«13) անհատական իրավական ակտը կամ աշխատանքային պայմանագիրը ստորագրող անձի պաշտոնը, անունը, ազգանունը.».

10) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 14-րդ կետով.

«14) աշխատանքային հարաբերությունների հետ կապված գործատուի եւ աշխատողի կողմից միմյանց ծանուցելու եղանակները:»:

Հոդված 39. Օրենսգրքի 85-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. 1-ին պարբերությունում «մեկի կամ որդեգրողի» բառերը փոխարինել «կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի» բառերով, «օրինակը» բառից հետո լրացնել «, աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո եռօրյա ժամկետում,» բառերով, իսկ «մեկին կամ որդեգրողին» բառերը փոխարինել «կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկին» բառերով.

բ. 2-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին, 1.2-րդ եւ 1.3-րդ մասեր.

«1.1. Աշխատանքային պայմանագիրը կարող է կնքվել նաեւ փոստային կամ էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով այն կողմերի միջեւ փոխանակելով, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու դրա իսկությունը եւ ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է աշխատանքային պայմանագրի կողմից: Սույն մասով սահմանված դեպքերում, աշխատանքային պայմանագիրը ստորագրած կողմը, աշխատանքային պայմանագրի մեկ օրինակը մյուս կողմին է տրամադրում եւ նրա կողմից ստորագրելուց հետո այն ստանում է հետեւյալ մեկ կամ մի քանի եղանակներով՝

1) աշխատանքային պայմանագրի ստորագրված օրինակը պատվիրված նամակով՝ ստանալու մասին ծանուցմամբ, մյուս կողմի տրամադրած (նշած) գտնվելու կամ բնակության վայր ուղարկելու միջոցով.

2) աշխատանքային պայմանագրի ստորագրված օրինակի արտապատկերումը (ֆաքսիմիլ վերարտադրությունը) ֆաքսիմիլ (հեռապատճենային) կապով ուղարկելու միջոցով.

3) աշխատանքային պայմանագրի ստորագրված եւ էլեկտրոնային պատկերատպված (սքանավորված) օրինակը կամ աշխատանքային պայմանագրի էլեկտրոնային թվային ստորագրությամբ օրինակն էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով (այդ թվում՝ «Ինտերնետով հրապարակային եւ անհատական ծանուցման մասին» օրենքով սահմանված պաշտոնական էլեկտրոնային փոստով) ուղարկելու միջոցով:

1.2. Մինչեւ տասնչորս տարեկան անձի հետ սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր կնքելու դեպքում, մինչեւ տասնչորս տարեկան անձի անունից աշխատանքային պայմանագիրը ստանում, ստորագրում եւ դրա մեկ օրինակը գործատուին է հանձնում ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկը կամ խնամակալը:

1.3. Սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր կնքելու դեպքում, աշխատանքային պայմանագիրը համարվում է կնքված այն պահից, երբ պայմանագիրը ստորագրած երկու կողմն էլ ստանում են աշխատանքային պայմանագրի՝ երկու կողմի ստորագրած օրինակը:»:

Հոդված 40. Օրենսգրքի 89-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի՝

ա. 2-րդ կետում 2-րդ «տեղեկանք» բառից հետո լրացնել «, բացառությամբ եթե աշխատանքի ընդունվողը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ եւ փաստացի չի գտնվելու Հայաստանի Հանրապետությունում» բառերով.

բ. 3-րդ կետից հանել «աշխատանքային» բառը.

գ. 4-րդ կետից հանել «(սանիտարական գրքույկ)» եւ «եւ տեղեկանքի (սանիտարական գրքույկի) ձեւը» բառերը, իսկ «սկզբնական» բառը փոխարինել «նախնական» բառով.

դ. 5-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5) մինչեւ տասնվեց տարեկան անձին աշխատանքի ընդունելիս՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ խնամակալի կամ հոգաբարձուի, իսկ նրանց բացակայության դեպքում՝ մինչեւ տասնվեց տարեկան անձի բնակության վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմնի գրավոր համաձայնությունը.».

2) 1.1-ին մասում «1-ին եւ 3-րդ» բառերը փոխարինել «1-3-րդ» բառերով:

Հոդված 41. Օրենսգրքի 92-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «վեց» բառը փոխարինել «տասներկու» բառով.

2) 3-րդ մասի 5-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով եւ 3-րդ մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ կետ.

«6) զինվորական հաշվառման պարտականություններ կատարելու, վարժական հավաքների, զինվորական վարժանքների, զորավարժությունների մասնակցելու, զորահավաքային զինվորական ծառայության զորակոչվելու, որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով Հայաստանի Հանրապետության, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կամ պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու ժամանակահատվածները:»:

Հոդված 42. Օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 43. Օրենսգրքի 99-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«**Հոդված 99. Համատեղությամբ աշխատանքը**

1. Համատեղությամբ աշխատանքը հիմնական աշխատանքից ազատ ժամանակ (բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքի), միեւնույն գործատուի կամ այլ գործատուի մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատողի կատարած աշխատանքն է:

2. Հանրային պաշտոններ եւ հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք համատեղությամբ կատարվող գիտական, կրթական եւ ստեղծագործական աշխատանքը՝ գործատուի ներքին կարգապահական կանոններով կամ կոլեկտիվ պայմանագրով կամ աշխատանքային պայմանագրով սահմանված կարգով, կարող են կատարել նաեւ իրենց հիմնական աշխատանքի աշխատանքային ժամերի ընթացքում:

3. Համատեղությամբ աշխատանքի համար կնքվող աշխատանքային պայմանագրում նշվում է, որ աշխատանքը կատարվում է համատեղությամբ:

4. Համատեղությամբ աշխատանքի դեպքում՝ հիմնական աշխատանք է համարվում այն աշխատանքը, որը կատարվում է առավել վաղ կնքված աշխատանքային պայմանագրի կամ

առավել վաղ ընդունված աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի հիման վրա, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքի:

5. Կողմերի համաձայնությամբ աշխատողի համատեղությամբ աշխատանքը կարող է համարվել հիմնական աշխատանք (որի պարագայում սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված նշումը հանվում է այդ աշխատանքային պայմանագրից), իսկ հիմնական աշխատանքը՝ համատեղությամբ (որի պարագայում աշխատանքային պայմանագրում կատարվում է սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված նշումը):

6. Միեւնույն գործատուի կամ այլ գործատուի մոտ համատեղությամբ աշխատողի ամենամյա արձակուրդը տրամադրվում է հիմնական աշխատանքի համար տրամադրվող ամենամյա արձակուրդի հետ միաժամանակ, բացառությամբ սույն օրենսգրքի 164-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքի:»:

Հոդված 44. Օրենսգրքի 101-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) «այդ ժամանակահատվածում» բառերը հանել.

2) «հիշատակի օրերին» բառերից հետո լրացնել «, բացառությամբ մինչեւ տասնութ տարեկան անձանց, որոնք այդ օրերին կարող են մասնակցել միայն մարզական եւ մշակութային միջոցառումներին» բառերով:

Հոդված 45. Օրենսգրքի 105-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «Արտադրության» բառը փոխարինել «Աշխատանքի» բառով.

2) 2-րդ մասում՝

ա. «անվանումները,» բառից հետո լրացնել «աշխատանքային գործառույթները,» բառերով.

բ. 1-ին կետում «հավելավճարների» բառից հետո լրացնել «, լրավճարների» բառով.

գ. 2-րդ կետում «երբ» բառը փոխարինել «եթե կրճատված աշխատաժամանակի վարձատրությունը եւ» բառերով.

դ. 2-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով եւ 2-րդ մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ կետ.

«3) սույն մասի 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված դեպքերի միաժամանակյա առկայության դեպքում, երբ մյուս պայմանները պահպանվում են:»:

Հոդված 46. Օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասում «նույն աշխատավայրում» բառերը փոխարինել «իր մոտ» բառերով:

Հոդված 47. Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1.1-ին մասում «կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19)» բառերը փոխարինել «վարակիչ հիվանդություններով» բառերով, իսկ «կորոնավիրուսային հիվանդության (COVID-19)» բառերը՝ «վարակիչ հիվանդությունների» բառերով:

Հոդված 48. Օրենսգրքի 108.1-ին հոդվածի 1-ին մասում՝

1) «պահպանվում է,» բառերից հետո լրացնել «աշխատողի (բացառությամբ հանրային ծառայության մեջ գտնվող անձի) վարձատրության հարցը որոշվում է կողմերի համաձայնությամբ,» բառերով.

2) հանել «նաեւ» եւ «անվանական» բառերը:

Հոդված 49. Օրենսգրքի 108.2-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 2-րդ նախադասությունում «ժամանակահատվածում» բառից հետո լրացնել «գործատուի կողմից աշխատողի (բացառությամբ հանրային ծառայության մեջ գտնվող անձի) վարձատրության հարցը որոշվում է կողմերի համաձայնությամբ, իսկ» բառերով, իսկ «աշխատավարձը» բառը փոխարինել «վարձատրությունը» բառով.

2) 4-րդ մասում «լուծելու՝» բառից հետո լրացնել «սույն օրենսգրքով կամ այլ» բառերով:

Հոդված 50. Օրենսգրքի 109-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. 2-րդ կետում «պայմանագրի» բառից առաջ լրացնել «աշխատանքային» բառով.

բ. 8-րդ կետում «մեկը, որդեգրողը» բառերը փոխարինել «կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկը» բառերով, իսկ «խնամակալը» բառից հետո լրացնել «(նրանց բացակայության դեպքում՝ մինչեւ տասնվեց տարեկան անձի բնակության վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմինը)» բառերով.

գ. 10-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

դ. 12-րդ կետում «3-րդ եւ (կամ) 4-րդ» բառերը փոխարինել «3-5-րդ» բառերով, իսկ «աշխատողի ներկայացրած» բառերը՝ «ներկայացված» բառով.

ե. լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 12.2-րդ կետով.

«12.2) օրենքի ուժով՝

ա. սույն օրենսգրքի 111-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված այն դեպքում, երբ գործատուն աշխատողին չի ծանուցել որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին եւ չի ընդունել որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին համապատասխան անհատական իրավական ակտ, իսկ աշխատանքային հարաբերությունները չեն շարունակվել.

բ. սույն օրենսգրքի 111-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված այն դեպքում, երբ աշխատողը չի ծանուցել գործատուին որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին եւ աշխատանքային պայմանագրով նախատեսված վերջին աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրը աշխատողը չի ներկայացել աշխատանքի, իսկ գործատուն չի ընդունել որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտ.

գ. սույն օրենսգրքի 112-րդ հոդվածի 3.2-րդ մասով սահմանված դեպքում.

դ. սույն օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքում.».

2) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածով նախատեսված դեպքերում աշխատողին աշխատանքից ազատելը ձեւակերպվում է գործատուի ընդունած անհատական իրավական ակտով, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 12.2-րդ կետով նախատեսված դեպքերի:».

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ եւ 4-րդ մասերով.

«3. Աշխատողի վերջին աշխատանքային օր է համարվում՝

1) աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում՝ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետի վերջին օրը, եթե այդ ժամկետը լրանալուց հետո աշխատանքային հարաբերությունները չեն շարունակվում սույն օրենսգրքի 111-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան.

2) սույն օրենսգրքի 112-րդ հոդվածի 3.2-րդ մասով սահմանված դեպքում՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին ծանուցման մեջ նշված ժամկետի վերջին օրը.

3) ֆիզիկական անձ գործատուի մահվան դեպքում՝ սույն օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված օրը.

4) սույն մասի 1-3-րդ կետերով չնախատեսված այլ դեպքերում՝ սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան որպես աշխատանքային հարաբերությունների դադարման

ժամկետ հանդիսացող եւ աշխատողին աշխատանքից ազատելու մասին գործատուի անհատական իրավական ակտում նշված օրը, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով:

4. Իրավաբանական անձանց գործադիր մարմինների (կոլեգիալ եւ միանձնյա) անդամների լիազորությունների դադարեցման եւ նրանց հետ կնքված աշխատանքային պայմանագրերի լուծման առանձնահատկությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով եւ այդ իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով:»:

Հոդված 51. Օրենսգրքի 111-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասություններով.

«Գործատուի կողմից սույն մասով սահմանված ծանուցման պահանջը չպահպանելու կամ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտ չընդունելու դեպքում, աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված դրանով սահմանված ժամկետը լրանալու հաջորդ օրը, եթե աշխատանքային հարաբերությունները չեն շարունակվել՝ աշխատողը չի ներկայացել աշխատանքի աշխատանքային պայմանագրով նախատեսված վերջին աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրը կամ գործատուն չի ցանկացել, որպեսզի աշխատանքային հարաբերությունները շարունակվեն եւ աշխատողին թույլ չի տվել շարունակելու աշխատանքը: Այդ դեպքում գործատուն չի ազատվում սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տուժանքի վճարման պարտականությունից:».

2) 4-րդ մասում «դուրս չի եկել» բառերը փոխարինել «չի ներկայացել» բառերով.

3) 5-րդ մասը «ժամկետով:» բառից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Սույն մասը չի տարածվում սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի վրա:»:

Հոդված 52. Օրենսգրքի 112-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել 3-րդ նախադասությունը.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին եւ 2.2-րդ մասերով.

«2.1. Գործատուի առարկության բացակայության դեպքում աշխատանքային պայմանագիրը կարող է լուծվել աշխատողի ծանուցման մեջ (աշխատանքից ազատվելու մասին դիմումում) նշված այլ ժամկետում՝ չպահպանելով սույն հոդվածի 1-2-րդ մասերով սահմանված ժամկետները: Աշխատանքային պայմանագիրը աշխատողի ծանուցման մեջ (աշխատանքից ազատվելու մասին դիմումում) նշված այլ ժամկետում լուծելու վերաբերյալ գործատուի առարկության դեպքում աշխատանքային պայմանագիրը լուծվում է սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով սահմանված ժամկետները լրանալուց հետո:

2.2. Աշխատողի կողմից սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով նախատեսված ժամկետները չպահպանելու եւ աշխատանքային պայմանագիրը աշխատողի ծանուցման մեջ (աշխատանքից ազատվելու մասին դիմումում) նշված այլ ժամկետում լուծելու վերաբերյալ գործատուի առարկության դեպքում՝ աշխատողը պարտավոր է գործատուին վճարել տուժանք՝ ծանուցման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար՝ միջին օրական աշխատավարձի չափով, բայց ոչ ավելի, քան միջին ամսական աշխատավարձը:».

3) 3-րդ մասում «ընթացքում» բառից հետո լրացնել «(բացառությամբ այն դեպքի, եթե աշխատողը ցանկանում է աշխատանքից ազատվել աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը ներկայացնելու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում)» բառերով.

4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-ին եւ 3.2-րդ մասեր.

«3.1. Սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով սահմանված ծանուցման ժամկետը լրանալուց հետո աշխատողն իրավունք ունի դադարեցնելու աշխատանքը, իսկ գործատուն պարտավոր է ձեւակերպել աշխատանքային պայմանագրի լուծումը եւ աշխատողի հետ կատարել վերջնահաշվարկ:

3.2. Եթե սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով սահմանված ծանուցումներում նշված ժամկետը լրանալուց հետո գործատուն չի ընդունում աշխատանքային հարաբերությունները դադարեցնելու մասին համապատասխան անհատական իրավական ակտ, ապա աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված ծանուցմամբ սահմանված ժամկետը լրանալու հաջորդ օրվանից:»:

Հոդված 53. Օրենսգրքի 113-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) գործատուի լուծարման (գործունեության դադարման), պետական հաշվառումից հանվելու, նոտար գործատուի դեպքում՝ պաշտոնից ազատվելու դեպքերում.».

բ. 2-րդ կետում «արտադրության» բառը փոխարինել «աշխատանքի» բառով.

գ. 7-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«7) աշխատողի երկարատեւ անաշխատունակության դեպքում (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության մեջ է գտնվել ավելի քան վեց ամիս անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 180 օր՝ չհաշված հղիության եւ ծննդաբերության արձակուրդի օրերը).».

դ. 8-րդ կետում «գտնվելու» բառից հետո լրացնել «կամ աշխատավայրում կամ աշխատավայրից դուրս աշխատանքային գործառույթներն իրականացնելու» բառերով.

ե. 11-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մաս.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելիս, այլ հավասար պայմանների առկայության դեպքում, աշխատանքում մնալու նախապատվության իրավունքից օգտվում են հաշմանդամության կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողը, ինչպես նաեւ ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակմամբ հաշմանդամության կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողի կամ զոհված (մահացած) կամ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի ընտանիքի անդամը (ամուսին, երեխա, հայր, մայր, հարազատ քույր, հարազատ եղբայր, տատ, պապ), եթե նա՝

1) զբաղված է ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակմամբ հաշմանդամության կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողի խնամքով կամ զոհված (մահացած) կամ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի երեխաների, թոռների, եղբայրների կամ քույրերի խնամքով՝ մինչեւ վերջիններիս տասնութ տարին լրանալը.

2) ունի հաշմանդամություն.

3) ընտանիքի՝ սույն օրենսգրքով սահմանված տարիքի հասած միակ գործունակ աշխատողն է:

Կոլեկտիվ պայմանագրով կարող են սահմանվել այլ հավասար պայմաններում աշխատանքում մնալու նախապատվության իրավունքից օգտվող աշխատողների այլ կատեգորիաներ:»:

3) 2-րդ մասում «, 7-րդ եւ 11-րդ» բառերը փոխարինել «եւ 7-րդ» բառերով:

Հոդված 54. Օրենսգրքի 114-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասում «Կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման) հետեւանքով» բառերը փոխարինել «Սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքերում» բառերով.

2) 4-րդ մասի 4-րդ կետում «ռասան,» բառից հետո լրացնել «մաշկի գույնը,» բառերով, «դավանանքը» բառը փոխարինել «կրոնը» բառով, իսկ «անդամակցելը» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքները, բացառությամբ սույն օրենսգրքով եւ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի» բառերով:

Հոդված 55. Օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունում «, 7-րդ եւ 11-րդ» բառերը փոխարինել «եւ 7-րդ» բառերով:

Հոդված 56. Օրենսգրքի 116-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «Կազմակերպության լուծարման կամ աշխատողների թվաքանակի եւ (կամ)» բառերը փոխարինել «Սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքերում կամ աշխատողների թվաքանակի կամ» բառերով.

2) 2-րդ մասում «եւ» շաղկապը փոխարինել «, այդ թվում՝» բառերով:

Հոդված 57. Օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով չնախատեսված դեպքերում ժամանակավոր անաշխատունակ դարձած աշխատողները պահպանում են իրենց աշխատատեղը եւ պաշտոնը, եթե նրանք ժամանակավոր անաշխատունակության մեջ են գտնվել ոչ ավելի քան վեց ամիս անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ոչ ավելի, քան 180 օր՝ չհաշված հղիության եւ ծննդաբերության արձակուրդի օրերը:»:

Հոդված 58. Օրենսգրքի 119-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. «սույն օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան» բառերը փոխարինել «ինչպես նաեւ այդ լիազորությունների ավարտից հետո վեց ամսվա ընթացքում» բառերով.

բ. «աշխատանքից» բառից հետո լրացնել «գործատուի նախաձեռնությամբ» բառերը.

2) 2-րդ մասում «ներկայացուցչին» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ սույն հոդվածի 4-րդ մասում նշված աշխատողին» բառերը.

3) 3-րդ մասից հանել 2-րդ նախադասությունը.

4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-ին մաս.

«3.1. Կազմակերպությունում գործող աշխատողների ներկայացուցչական մարմիններում ընտրված աշխատողները տարվա ընթացքում ազատվում են աշխատանքային պարտականությունների կատարումից մինչեւ 10 աշխատանքային օր ժամկետով՝ աշխատողների ներկայացուցչական մարմինների միջոցառումներին մասնակցելու կամ որպես աշխատողների ներկայացուցչական մարմնի անդամ՝ որակավորումը բարձրացնելու համար: Այդ ժամանակահատվածների համար աշխատողին վճարվում է նրա միջին օրական աշխատավարձի առնվազն 50 տոկոսի չափով:»:

5) 4-րդ մասը «կիրառվել» բառից հետո լրացնել «նաեւ» բառով, իսկ «չհամարվող» բառից հետո՝ «եւ սույն հոդվածի 1-ին մասում չնշված այլ» բառերով:

Հոդված 59. Օրենսգրքի 122-րդ հոդվածում՝

1) 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) կատարել է այնպիսի արարք, որի հետեւանքով գործատուն կրել է կամ կարող էր կրել նյութական վնաս.».

2) 3-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով եւ Օրենսգրքի 122-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ եւ 5-րդ կետերով.

«4) չի պահպանել (խախտել է) աշխատողների անվտանգության ապահովման եւ առողջության պահպանության մասին իրավական ակտերի, աշխատանքների կազմակերպման եւ իրականացման կանոնների, հրահանգների պահանջները, որն առաջացրել է կամ կարող էր առաջացնել ծանր հետեւանքներ՝ վտանգելով անձանց կյանքն ու առողջությունը կամ իրական սպառնալիք ստեղծելով անձանց կյանքի եւ առողջության համար կամ նրանց կյանքին ու առողջությանը պատճառելով վնաս.

5) անօրինական (առանց համաձայնեցման կամ տեղեկացման) օգտագործել է գործատուի կամ այլ աշխատողների համակարգչային տեխնիկան կամ տեղեկատվական համակարգերը (տեղեկատվական համակարգեր մուտք գործելու միջոցներ (մուտքանուն, գաղտնաբառ եւ այլն)), որի միջոցով ձեռք է բերել աշխատանքային կամ անձնական տվյալներ, իրականացրել է

տվյալների անօրինական օգտագործում, ձայնագրում, ոչնչացում, վերափոխում, ուղեփակում, կրկնօրինակում, տարածում կամ թվային տեխնոլոգիաների միջամտությամբ իրականացրել է գործողություններ, այդ թվում՝ վիրուսային կամ ծրագրային կարգաբերումներ, որոնք կարող էին խաթարել կամ խաթարել են գործատուի բնականոն աշխատանքը։»:

Հոդված 60. Օրենսգրքի 123-րդ հոդվածում «մասի» բառից հետո լրացնել «4-րդ,» բառով:

Հոդված 61. Օրենսգրքի 127-րդ հոդվածում «օրվանից» բառը փոխարինել «օրվան հաջորդող օրվանից՝ մահվան փաստը գրանցող լիազոր մարմնի տրամադրած փաստաթղթի հիման վրա» բառերով:

Հոդված 62. Օրենսգրքի 128-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Ֆիզիկական անձ գործատուի մահվան դեպքում աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված մահվան փաստը գրանցող լիազոր մարմնի փաստաթղթում նշված մահվան օրվան հաջորդող օրվանից։».

2) 2-րդ եւ 3-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 63. Օրենսգրքի 129-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «, 7-րդ եւ 11-րդ» բառերը փոխարինել «եւ 7-րդ» բառերով.

2) 2-րդ մասում «պայմանագրով» բառից հետո լրացնել «կամ կողմերի գրավոր համաձայնությամբ» բառերով, իսկ «եւ (կամ)» բառերը փոխարինել «կամ» բառով:

Հոդված 64. Օրենսգրքի 130-րդ հոդվածի 1.1-ին մասում «գործատուի մոտ» բառերից հետո լրացնել «առանց աշխատանքային պայմանագրի լուծման» բառերով:

Հոդված 65. Օրենսգրքի 134-րդ հոդվածում՝

1) 4-րդ կետում «կազմակերպության ներսում» բառերը փոխարինել «գործատուի մոտ» բառերով.

2) 5-րդ կետում «հատուկ» բառը փոխարինել «այդպիսի» բառով.

3) 7-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«7) աշխատողի անձնական տվյալները փոխանցելիս, այդ թվում՝ աշխատողների ներկայացուցիչներին, սահմանափակվել միայն այն տվյալներով, որոնց փոխանցումը բխում է անձնական տվյալների մշակման նպատակներից կամ անհրաժեշտ է այդ նպատակների իրագործման համար:»:

Հոդված 66. Օրենսգրքի 135-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«**Հոդված 135. Աշխատողի իրավունքները՝ գործատուի մոտ պահպանվող անձնական տվյալների պաշտպանության եւ դրանց վերաբերյալ տեղեկություններ ստանալու հետ կապված**».

2) 1-ին մասում «Գործատուի մոտ պահպանվող անձնական տվյալների անվտանգության ապահովման նպատակով աշխատողն իրավունք ունի՝» բառերը փոխարինել «1. Աշխատողն իրավունք ունի անձամբ կամ լիազորագրով հանդես եկող ներկայացուցչի (իսկ մինչեւ տասնվեց տարեկան աշխատողը՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ խնամակալի կամ հոգաբարձուի) գրավոր հարցման հիման վրա ստանալու ամբողջական տեղեկատվություն գործատուի մոտ պահպանվող իր անձնական տվյալների եւ դրանց մշակման վերաբերյալ, այդ թվում՝» բառերով.

3) 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 67. Օրենսգրքի 138-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 6-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«6) աշխատավայրում կամ ուսումնական հաստատություններում աշխատողի վերապատրաստման, վերաորակավորման, մասնագիտական ուսուցման կամ որակավորման բարձրացման համար անհրաժեշտ ժամանակահատվածը, բացառությամբ աշխատողի նախաձեռնությամբ վերապատրաստման, վերաորակավորման, մասնագիտական ուսուցման կամ որակավորման բարձրացման այն ժամանակահատվածի, երբ վարձատրություն չի նախատեսվում.».

2) 2-րդ մասի 1-ին կետում «ժամանակահատվածը» բառից հետո լրացնել «՝ մեկ աշխատանքային տարվա ընթացքում ոչ ավելի, քան 30 օր» բառերով:

Հոդված 68. Օրենսգրքի 139-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «, այլ իրավական ակտերով եւ կոլեկտիվ պայմանագրով» բառերը փոխարինել «եւ այլ նորմատիվ իրավական ակտերով» բառերով.

2) 5-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Սույն մասով սահմանված պահանջի կատարման պարտականությունը տարբեր գործատուների մոտ երկու եւ ավելի աշխատանքային պայմանագրերով աշխատելու դեպքում կրում է աշխատողը, բացառությամբ այն դեպքի, երբ գործատուն աշխատողի կողմից գրավոր տեղեկացվել է աշխատողի համատեղությամբ աշխատելու վերաբերյալ:»:

Հոդված 69. Օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետում «չորս ժամ» բառերից հետո լրացնել «՝ պարտադիր կրթության համար սահմանված ժամերից դուրս» բառերով.

2) 2-րդ կետում «վեց ժամ» բառերից հետո լրացնել «՝ պարտադիր կրթության համար սահմանված ժամերից դուրս» բառերով.

3) 3-րդ եւ 4-րդ կետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«3) տասներկուսից մինչեւ տասնհինգ տարեկան երեխաների համար՝ օրական մինչեւ չորս ժամ, սակայն շաբաթվա ընթացքում ոչ ավելի, քան տասներկու ժամ՝ պարտադիր կրթության համար սահմանված ժամերից դուրս.

4) տասնհինգից մինչեւ տասնվեց տարեկան երեխաների համար՝ շաբաթական մինչեւ 24 ժամ՝ պարտադիր կրթության համար սահմանված ժամերից դուրս.».

4) 5-րդ կետում «36 ժամ» բառերից հետո լրացնել «՝ պարտադիր կրթության համար սահմանված ժամերից դուրս» բառերով.

5) 6-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով եւ 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ կետով.

«7) Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ դեպքերում:»:

Հոդված 70. Օրենսգրքի 141-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 3-րդ կետում «մեկ» բառը փոխարինել «երկու» բառով.

2) 2-րդ մասի վերջին նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Սույն հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով սահմանված ոչ լրիվ աշխատաժամանակի հատկացման կարգը սահմանվում է կողմերի համաձայնությամբ եւ կարող է ներառվել աշխատանքային պայմանագրում:»:

Հոդված 71. Օրենսգրքի 142-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին նախադասությունում «կազմակերպության» բառը փոխարինել «գործատուի» բառով.

2) 2-րդ մասում «արտադրության» բառից հետո լրացնել «կամ աշխատանքի» բառերով.

3) 3-րդ մասում «Կազմակերպության աշխատանքի» բառերը փոխարինել «Աշխատանքի» բառով.

4) 6-րդ մասում՝

ա. հանել «(կամ)» բառը.

բ. լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Աշխատողների օրական եւ շաբաթական աշխատաժամանակի հաշվառումն իրականացվում է թղթային կամ էլեկտրոնային տարբերակով եւ հիմք է հանդիսանում աշխատավարձի հաշվարկման համար:»:

Հոդված 72. Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասում «կազմակերպության» բառը փոխարինել «գործատուի» բառով:

Հոդված 73. Օրենսգրքի 144-րդ հոդվածում՝

1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին մասով.

«2.1. Սույն օրենսգրքի 145-րդ հոդվածով նախատեսված բացառիկ դեպքերի բացակայության պարագայում աշխատողը կարող է ներգրավվել արտաժամյա աշխատանքի միայն իր գրավոր համաձայնության պարագայում:».

2) 3-րդ մասի 2-րդ կետում «արտադրությունից» բառից հետո լրացնել «կամ աշխատանքից» բառերով.

3) 4-րդ մասում՝

ա. առաջին նախադասությունում «իրենց» բառից հետո լրացնել «գրավոր» բառը.

բ. երկրորդ նախադասությունում «աշխատանքի» բառից հետո լրացնել «միայն իրենց գրավոր համաձայնությամբ» բառերը.

4) 5-րդ մասում՝

ա. «կազմակերպության» բառը փոխարինել «գործատուի» բառով.

բ. հանել 2-րդ նախադասությունը.

գ. լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասություններ.

«Սույն հոդվածի իմաստով գործատուի ղեկավար պաշտոնատար անձինք կարող են համարվել միայն այն աշխատողները, որոնք պաշտոն են զբաղեցնում գործատուի կառավարման մարմիններում կամ որոնք, որպես իրենց պաշտոնական կարգավիճակից բխող աշխատանք, իրականացնում են գործատուի կառավարման կամ ընթացիկ գործունեության ընդհանուր ղեկավարման գործառույթներ կամ հանդիսանում են այդ գործատուի կառուցվածքային կամ տարածքային կամ առանձնացված որեւէ ստորաբաժանման (դեպարտամենտի, վարչության, բաժնի, մասնաճյուղի, ներկայացուցչության կամ այլ միավորի) ղեկավարը՝ բացառությամբ սպասարկման եւ տեխնիկական աջակցության գործառույթներ իրականացնող այն ստորաբաժանումների ղեկավարների, որոնք ուղղակիորեն ներգրավված չեն գործատուի գործառույթների իրականացմանը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Գործատուի ղեկավար պաշտոնների ցանկը սահմանվում է օրենքներով կամ գործատուի ներքին իրավական ակտերով:»:

Հոդված 74. Օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասում «Գործատուի պահանջով» բառերը փոխարինել «Սույն օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ եւ 2.1-ին մասերով նախատեսված դեպքերում» բառերով:

Հոդված 75. Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասում «եւ ոչ լրիվ աշխատանքային ժամանակի պայմաններով» բառերը փոխարինել «, ոչ լրիվ աշխատանքային ժամանակի պայմաններով կամ հերթափոխով» բառերով:

Հոդված 76. Օրենսգրքի 149-րդ հոդվածի 3-րդ մասում «եւ 2-րդ մասերով» բառերը փոխարինել «մասով» բառով, իսկ «140-րդ, 141-րդ հոդվածներով» բառերը փոխարինել «140-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 141-րդ հոդվածով» բառերով:

Հոդված 77. Օրենսգրքի 152-րդ հոդվածում՝

1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մաս.

«1.1. Եթե աշխատանքային օրվա տեւողությունը չի գերազանցում չորս ժամը, ապա աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում հանգստանալու եւ սնվելու համար աշխատողին սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տեւողությամբ ընդմիջում կարող է

տրամադրվել կողմերի համաձայնությամբ, բացառությամբ հղի կանանց եւ մինչեւ տասնութ տարեկան աշխատողների, որոնց հանգստանալու եւ սնվելու համար ընդմիջումը տրամադրվում է իրենց նախընտրած ժամին:».

2) 4-րդ մասում «արտադրության» բառից հետո լրացնել «կամ աշխատանքի» բառերով:

Հոդված 78. Օրենսգրքի 153-րդ հոդվածի 3-րդ մասում «կամ առողջության համար բացասական ներգործություն ունեցող վտանգավոր այլ պայմաններում» բառերը փոխարինել «պայմաններում կամ այն դեպքերում, երբ աշխատավայրում վնասակար գործոնների սահմանային թույլատրելի մակարդակը տեխնիկական կամ այլ պատճառներով հնարավոր չէ իջեցնել աշխատողների առողջության եւ անվտանգության մասին իրավական ակտերով սահմանված առողջության համար անվտանգ մակարդակի» բառերով:

Հոդված 79. Օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «տասնչորսից» բառը:

Հոդված 80. Օրենսգրքի 159-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «Ոչ լրիվ աշխատաժամանակով, ինչպես նաեւ» բառերը փոխարինել «Աշխատաժամանակի կրճատ տեւողությամբ կամ ոչ լրիվ աշխատաժամանակով կամ աշխատաժամանակի գումարային հաշվարկով աշխատող կամ» բառերով.

2) 3-րդ մասից հանել «, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի» բառերը:

Հոդված 81. Օրենսգրքի 164-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Յուրաքանչյուր աշխատանքային տարվա համար ամենամյա արձակուրդը տրամադրվում է տվյալ աշխատանքային տարում՝ ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին աշխատողի կողմից գործատուին ներկայացված դիմումի հիման վրա գործատուի ընդունած անհատական իրավական ակտով, բացառությամբ սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված դեպքի: Աշխատանքային տարին սկսվում է աշխատողի աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով նախատեսված օրն աշխատանքի անցնելու օրվանից եւ ավարտվում է հաջորդ օրացուցային տարվա համապատասխան ամսին եւ ամսաթվին:».

2) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Աշխատանքի առաջին տարվա համար ամենամյա արձակուրդը տրամադրվում է տվյալ գործատուի մոտ անընդհատ աշխատանքի վեց ամիսը լրանալուց հետո, բացառությամբ համատեղությամբ աշխատողների, որոնց ամենամյա արձակուրդը տրամադրվում է սույն օրենսգրքի 99-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պահանջներին համապատասխան, ինչպես նաեւ սույն օրենսգրքով սահմանված այլ դեպքերի: Կողմերի համաձայնությամբ ամենամյա արձակուրդը կարող է տրամադրվել նաեւ մինչեւ աշխատողի՝ տվյալ գործատուի մոտ անընդհատ աշխատանքի վեց ամիսը լրանալը: Երկրորդ եւ յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային տարվա համար ամենամյա արձակուրդը տրամադրվում է աշխատանքային տարվա ցանկացած ժամանակ՝ ամենամյա արձակուրդի տրամադրման հերթականությանը համապատասխան: Հերթականության կարգը սահմանվում է կոլեկտիվ պայմանագրով, իսկ նման պայմանագրի բացակայության դեպքում՝ կողմերի համաձայնությամբ:».

3) 6-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«6. Ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին եւ պրոֆեսորադասախոսական կազմին ամենամյա արձակուրդը տրամադրվում է սովորողների եւ ուսանողների ամառային արձակուրդի ժամանակ, այդ թվում՝ աշխատանքային առաջին տարում, անկախ այն հանգամանքից, թե երբ են այդ աշխատողները սկսել իրենց աշխատանքը:».

4) 7-րդ մասում «դիպլոմային» բառից հետո լրացնել «կամ ավարտական» բառերով, իսկ «աշխատանքների կատարման» բառերից հետո՝ «, ուսումնական պլանով նախատեսված պրակտիկաների» բառերով.

5) 8-րդ մասում «հաշմանդամին» բառը փոխարինել «հաշմանդամություն ունեցող անձին» բառերով.

6) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 9-րդ մաս.

«9. Աշխատավայրում բռնության կամ սեռական ոտնձգության ենթարկված աշխատողին իր ցանկությամբ տրամադրվում է ամենամյա արձակուրդ, անկախ աշխատանքի կատարման ժամանակահատվածից:».

7) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 10-րդ մաս.

«10. Եթե աշխատողը երկուսուկես աշխատանքային տարի անընդմեջ խուսափում է կամ հրաժարվում է իրեն հասանելիք ամենամյա արձակուրդի կամ դրա մի մասի օգտագործումից՝ չներկայացնելով ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին դիմում, եւ այդ դիմումի չներկայացնելը պայմանավորված չէ աշխատողի՝ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում գտնվելու կամ սույն օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի

1-ին, 3-րդ, 4-րդ կետերով սահմանված որեւէ հանգամանքով, ապա տվյալ աշխատողին ամենամյա արձակուրդի տրամադրման ժամանակահատվածը որոշվում է գործատուի կողմից՝ հաշվի առնելով սույն հոդվածի 4-րդ, 6-րդ եւ 8-րդ մասերով սահմանված պահանջները, իսկ ամենամյա արձակուրդը կամ դրա մի մասը տրամադրելու մասին գործատուի անհատական իրավական ակտն ընդունվում է առանց աշխատողի՝ ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին դիմումի առկայության:»:

Հոդված 82. Օրենսգրքի 165-րդ հոդվածի 5-րդ կետում «աշխատանքին վերադառնալու» բառերը փոխարինել «աշխատանքում վերականգնվելու» բառերով:

Հոդված 83. Օրենսգրքի 167-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Ամենամյա արձակուրդի կամ դրա մի մասի տեղափոխումը թույլատրվում է միայն աշխատողի գրավոր դիմումով կամ գրավոր համաձայնությամբ, այդ թվում, երբ աշխատողը՝

1) գտնվում է ժամանակավոր անաշխատունակության վիճակում.

2) ձեռք է բերում սույն օրենսգրքի 171-րդ հոդվածով նախատեսված նպատակային արձակուրդի իրավունք.

3) մասնակցում է տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների եւ արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետեւանքների անհապաղ վերացման աշխատանքներին՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ կարգով է նա ներգրավվել այդ աշխատանքներում.

4) մասնակցում է վարժական հավաքներին կամ զինվորական վարժանքներին կամ զորավարժություններին կամ իրականացնում է զորահավաքային զինվորական ծառայություն կամ որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով մասնակցում է Հայաստանի Հանրապետության, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կամ պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին:».

2) 2-րդ մասում «հնարավոր» եւ «տեղափոխվում է» բառերից առաջ լրացնել «կամ դրա մի մասը» բառերով.

3) 3-րդ մասում «Տեղափոխված ամենամյա արձակուրդը» բառերից հետո լրացնել «կամ ամենամյա արձակուրդի տեղափոխված մասը» բառերը, իսկ «ամենամյա արձակուրդի» բառերը փոխարինել «ամենամյա արձակուրդը կամ դրա» բառերով.

4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ մաս.

«4. Աշխատողը պահպանում է ամենամյա արձակուրդի իրավունքը նույնիսկ այն դեպքում, երբ աշխատողին ամենամյա արձակուրդը չի տրամադրվել սույն օրենսգրքով սահմանված ժամկետներում եւ կարգով:».

5) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ մաս.

«5. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում աշխատողին ամենամյա արձակուրդը կամ ամենամյա արձակուրդի տեղափոխված մասը չտրամադրելու դեպքում գործատուն պարտավոր է այդ ժամկետից հետո կետանցված յուրաքանչյուր օրվա համար աշխատողին վճարել տուժանք՝ աշխատողի միջին ամսական աշխատավարձի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի քան միջին ամսական աշխատավարձը, բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատողին ամենամյա արձակուրդը կամ ամենամյա արձակուրդի տեղափոխված մասը չտրամադրելը պայմանավորված է եղել նշված ամբողջ ժամանակահատվածում աշխատողի՝ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում գտնվելու կամ սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կամ 4-րդ կետերով սահմանված որեւէ հանգամանքով:»:

Հոդված 84. Օրենսգրքի 168-րդ հոդվածում «113-րդ հոդվածի 1-ին մասի» բառերից հետո լրացնել «1-ին, » բառով:

Հոդված 85. Օրենսգրքի 174-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «Միջին մասնագիտական եւ բարձրագույն» բառերը փոխարինել «Մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող» բառերով.

2) 2-րդ մասում՝

ա. «միջին մասնագիտական կամ բարձրագույն» բառերը փոխարինել «մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող» բառերով.

բ. 4-րդ կետում «դիպլոմային» բառից հետո լրացնել «կամ ավարտական» բառերով.

գ. 5-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով եւ 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ կետով.

«6) պրակտիկաների համար՝ ուսումնական պլանով նախատեսված աշխատանքային օրերի քանակով:».

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ մաս.

«4. Գործատուի համաձայնությամբ օտարերկրյա ուսումնական հաստատություններում իր մասնագիտական որակավորումը բարձրացնելու կամ անմիջականորեն աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված նոր գիտելիքներ ձեռք բերելու կամ դրանք զարգացնելու համար աշխատողին կարող է տրամադրվել ուսումնական արձակուրդ ուսման ողջ ժամանակահատվածում, բայց ոչ ավելի քան երկու տարի:»:

Հոդված 86. Օրենսգրքի 175-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.2-րդ կետով.

«4.2) սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով նախատեսված դեպքերում.».

2) 2-րդ մասում՝

ա. «1-ին մասով» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 4.2-րդ կետի, » բառերով.

բ. լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Սույն հոդվածի 1-ին մասի 4.2-րդ կետով նախատեսված դեպքերում աշխատողի վարձատրությունն իրականացվում է սույն օրենսգրքով եւ օրենքով սահմանված կարգով:»:

3) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 87. Օրենսգրքի 176-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. 2-րդ կետում «30» թվից հետո լրացնել «աշխատանքային» բառով.

բ. 4-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4) ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ մինչեւ երեք աշխատանքային օր.».

գ. 5-րդ կետում «չորս» բառից հետո լրացնել «աշխատանքային» բառով եւ վերջակետը փոխարինել միջակետով.

դ. լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ կետ.

«6) համատեղությամբ աշխատողին՝ հիմնական աշխատավայրում գործուղման մեջ գտնվելու դեպքում կամ հիմնական աշխատավայրի աշխատողին՝ համատեղությամբ

աշխատավայրում գործուղման մեջ գտնվելու դեպքում՝ սակայն ոչ ավելի, քան 30 օր աշխատանքային տարվա ընթացքում:»:

2) 3-րդ մասում «մեկ տարվա» բառերը փոխարինել «մեկ աշխատանքային տարվա» բառերով:

Հոդված 88. Օրենսգրքի 179-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել 2-րդ նախադասությունը.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մաս.

«1.1. Սոցիալական գործընկերության հանրապետական մակարդակում սոցիալական գործընկերության կողմերի առաջարկության հիման վրա՝ տնտեսության առանձին ճյուղերում կամ բնակավայրերում աշխատողների կամ առանձին մասնագիտությունների (որակավորումների) համար օրենքով կարող է սահմանվել ամսական նվազագույն աշխատավարձի (ժամավճարի) այլ չափ, որը չի կարող պակաս լինել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված չափից:»:

Հոդված 89. Օրենսգրքի 180-րդ հոդվածի 2-րդ մասում «Ժամային,» բառից հետո լրացնել «օրական,» բառը, իսկ «այլ ձեւեր, » բառերը հանել:

Հոդված 90. Օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասում «տարիֆային» բառը փոխարինել «հիմնական» բառով:

Հոդված 91. Օրենսգրքի 186-րդ հոդվածի 6-րդ մասում «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհաղթահարելի ուժ համարվող պատճառներով» բառերը փոխարինել «Արտակարգ եւ տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքի (անհաղթահարելի ուժի) հետեւանքով» բառերով:

Հոդված 92. Օրենսգրքի 195-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 3-րդ նախադասությունից հանել «եւ այլն» բառերը.

2) 2-րդ մասի 1-ին պարբերությունում «տվյալ գործատուի կողմից» բառերից հետո լրացնել «տվյալ աշխատանքային պայմանագրի շրջանակներում» բառերը, իսկ «եւ այլն» բառերը հանել.

3) 2-րդ մասի 2-րդ պարբերությունում՝

ա. «պարապուրդում» բառից հետո լրացնել «կամ հարկադիր պարապուրդում» բառերը.

բ. լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Հաշվառման ենթակա տասներկու ամիսներում չպետք է ներառվի նաեւ աշխատանքի ընդունման ամիսը:».

4) 4-րդ մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ երրորդ պարբերությամբ.

«Այն դեպքում, երբ միջին ամսական աշխատավարձի հաշվարկման պահանջ առաջանալու ամսվան նախորդող տասներկու ամիսներում աշխատողը չի ունեցել փաստացի հաշվարկված աշխատավարձ, կամ տասներկու ամիսներում առկա են սույն հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունում թվարկված դեպքերը՝ միջին ժամային աշխատավարձը որոշվում է աշխատողի համար օրենսդրությամբ սահմանված պաշտոնային դրույքաչափը կամ աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին իրավական ակտով սահմանված ամսական աշխատավարձը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ կոլեկտիվ պայմանագրով կամ աշխատանքային պայմանագրով կամ գործատուի իրավական ակտով տվյալ աշխատողի համար հաշվարկը կատարելու ամսվա համար սահմանված աշխատանքային ժամերի թվի վրա բաժանելու միջոցով:»:

Հոդված 93. Օրենսգրքի 198-րդ հոդվածում՝

1) վերնագրում «աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարումների» բառերը փոխարինել «գործատուի կողմից վճարման ենթակա այլ գումարների» բառերով.

2) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Եթե գործատուի մեղքով աշխատավարձի եւ գործատուի կողմից վճարման ենթակա այլ գումարների վճարումը կատարվում է սույն օրենսգրքով, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրով կամ կողմերի միջեւ գրավոր կերպով ձեռք բերված համաձայնությամբ սահմանված ժամկետների խախտմամբ, ապա գործատուն վճարման կետանցված յուրաքանչյուր օրվա համար աշխատողին վճարում է տուժանք՝ վճարման ենթակա գումարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա գումարի չափը:»:

Հոդված 94. Օրենսգրքի 200-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. «Հանրակրթական, միջնակարգ-մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորող աշխատողին» բառերը փոխարինել «Հանրակրթական,

մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորող աշխատողներին տրամադրված» բառերով.

բ. «յուրաքանչյուր» բառից հետո լրացնել «աշխատանքային» բառը.

2) 2-րդ մասում «նախաձեռնությամբ» բառից հետո լրացնել «հանրակրթական, մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում» բառերով:

Հոդված 95. Օրենսգրքի 201.1-ին հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«**Հոդված 201.1. Աշխատանքի ընդունվող անձի մասնագիտական ուսուցման կազմակերպումը գործատուի կողմից**

1. Գործատուն նախքան անձին աշխատանքի ընդունելը կարող է իր մոտ կամ այլ վայրում (այդ թվում՝ այլ կազմակերպությունում) կազմակերպել աշխատանքի ընդունվող անձի (այսուհետ՝ աշակերտ) մասնագիտական ուսուցումը մինչեւ հինգ ամիս տեւողությամբ՝ ուսուցման ընթացքում աշակերտին վճարելով վարձատրություն՝ առնվազն օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափով:

2. Մասնագիտական ուսուցման հետ կապված՝ գործատուի եւ աշակերտի հարաբերությունները կարգավորվում են կողմերի միջեւ կնքված գրավոր պայմանագրով (այսուհետ՝ աշակերտի պայմանագիր), որը ենթակա է հաշվառման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Մասնագիտական ուսուցումից հետո գործատուի մոտ աշխատանքի ընդունվելուց հրաժարվելու կամ աշխատանքի ընդունվելուց հետո աշակերտի պայմանագրով նախատեսված ժամանակահատվածում գործատուի մոտ աշխատելու պարտականությունն իր մեղքով չկատարելու դեպքում, մասնագիտական ուսուցում անցած անձը գործատուի պահանջով պարտավոր է աշակերտի պայմանագրով նախատեսված կարգով ու պայմաններով գործատուին հատուցել ոչ ավելի, քան իր մասնագիտական ուսուցումը կազմակերպելու հետ կապված փաստացի ծախսերը:

4. Աշխատանքի ընդունվող անձի մասնագիտական ուսուցման ընթացքում նրա նկատմամբ տարածվում են սույն օրենսգրքով սահմանված՝ աշխատաժամանակի առավելագույն տեւողության, ինչպես նաեւ հանգստանալու եւ սնվելու համար ընդմիջման, ամենօրյա (միջհերթափոխային) եւ ամենշաբաթյա անընդմեջ հանգստի նվազագույն տեւողությունների մասին պահանջները:»:

Հոդված 96. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 201.2-րդ հոդվածով.

«**Հոդված 201.2. Աշխատողների լրացուցիչ մասնագիտական ուսուցումը**

1. Գործատուն աշխատողի համաձայնությամբ կարող է մասնագիտական հմտությունների ձեռք բերման կամ դրանց կատարելագործման կամ աշխատողի վերապատրաստման նպատակով իր մոտ կամ այլ վայրում (այդ թվում՝ օտարերկրյա պետությունում) կազմակերպել աշխատողի լրացուցիչ մասնագիտական ուսուցում:

2. Աշխատողի լրացուցիչ մասնագիտական ուսուցման վերաբերյալ գործատուի եւ աշխատողի միջեւ կնքվում է մասնագիտական ուսուցման մասին պայմանագիր:

3. Աշխատողի լրացուցիչ մասնագիտական ուսուցման ընթացքում պահպանվում է նրա աշխատատեղը (պաշտոնը) եւ վարձատրությունը, բացառությամբ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքի:

4. Սույն հոդվածով սահմանված լրացուցիչ մասնագիտական ուսուցումն աշխատողի համար սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի իմաստով գործուղում չի համարվում:

5. Լրացուցիչ մասնագիտական ուսուցումից հետո, մասնագիտական ուսուցման մասին պայմանագրով նախատեսված ժամանակահատվածում գործատուի մոտ աշխատելու պարտականությունն իր մեղքով չկատարելու դեպքում, լրացուցիչ մասնագիտական ուսուցում անցած անձը պարտավոր է մասնագիտական ուսուցման մասին պայմանագրով նախատեսված կարգով ու պայմաններով գործատուին հատուցել ոչ ավելի, քան իր լրացուցիչ մասնագիտական ուսուցումը կազմակերպելու հետ կապված փաստացի ծախսերը:»:

Հոդված 97. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 201.3-րդ եւ 201.4-րդ հոդվածներով.

«***Հոդված 201.3. Գործատուի կողմից աշխատանքային պրակտիկա կազմակերպելը***

1. Գործատուն իրավունք ունի իր մոտ կազմակերպելու աշխատանքային պրակտիկա՝ կնքելով մինչեւ երկու ամիս ժամկետով պայմանագիր աշխատանքային պրակտիկա անցնող անձի հետ (այսուհետ՝ փորձնակի պայմանագիր), ոչ ավելի քան մեկ անգամ՝ առանց երկարաձգման իրավունքի:

2. Աշխատանքային պրակտիկա անցնող անձը (այսուհետ՝ փորձնակ) այն քաղաքացին է, ով նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական կամ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական

հաստատությունում սովորելու ընթացքում կամ ավարտելուց հետո մեկ տարվա ընթացքում գործատուի կողմից ներգրավվում է աշխատանքի՝ որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնի անվանմամբ աշխատանքային փորձառություն ձեռք բերելու նպատակով, որի դեպքում վարձատրության հարցը որոշվում է կողմերի համաձայնությամբ:

3. Գործատուի մոտ փորձնակների թիվը չի կարող գերազանցել տվյալ պահին աշխատողների թվի տասը տոկոսը:

4. Գործատուի կողմից փորձնակ ներգրավելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են փորձնակի՝ գրավոր ձեւով, երկու օրինակից կնքված քաղաքացիական-իրավական բնույթի պայմանագրով, որի մեկ օրինակը գործատուն հանձնում է փորձնակին:

5. Մինչեւ տասնութ տարեկան անձինք՝ գործատուի կողմից որպես փորձնակ աշխատանքի ներգրավվում եւ աշխատանքային փորձառություն են ձեռք բերում՝ սույն օրենսգրքի 17.1-ին եւ 257-րդ հոդվածներով սահմանված առանձնահատկությունները պահպանելով:

6. Գործատուի մոտ աշխատանքային փորձառություն ձեռք բերելու ժամանակահատվածը փորձնակի համար աշխատանքային ստաժ չի համարվում:

7. Փորձնակը գործատուի մոտ աշխատանքի է ներգրավվում եւ աշխատանքային փորձառություն է ձեռք բերում ոչ ավելի, քան շաբաթական հինգ օր, օրական չորս ժամ եւ շաբաթական քսան ժամ տեւողությամբ՝ պահպանելով հանգստի եւ սնվելու համար ընդմիջումները:

Հոդված 201.4. Փորձնակի պայմանագիրը

1. Աշխատանքային փորձառություն ձեռք բերելու մասին փորձնակի պայմանագիրը կնքվում է գրավոր, որով սահմանվում են աշխատանքային փորձառություն ձեռք բերելու հետ կապված կողմերի իրավունքները եւ պարտականությունները, դրանց փոփոխման եւ դադարման հիմքերն ու կարգը, փորձնակի երաշխիքները, կողմերի համաձայնությամբ վարձատրություն նախատեսված լինելու դեպքում՝ վարձատրության չափը, ինչպես նաեւ աշխատանքային փորձառություն ձեռք բերելու հետ կապված այլ հարաբերությունները:

2. Փորձնակին տրվում է աշխատանքային փորձառություն ձեռք բերելու մասին հավաստագիր, որում նշվում է որպես փորձնակ ներգրավվելու ժամանակահատվածը, մասնագիտական եւ որակավորման կամ պաշտոնի անվանմանը համապատասխան ձեռք բերված գիտելիքների, կարողությունների կամ հմտությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

3. Աշխատանքային փորձառություն ձեռք բերելու մասին պայմանագիրը ենթակա է հաշվառման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

Հոդված 98. Օրենսգրքի 207-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Արյան կամ դրա բաղադրիչների հանձնման օրը պահպանվում է աշխատողի միջին օրական աշխատավարձը:»:

Հոդված 99. Օրենսգրքի 213-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 4-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով եւ 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ կետով.

«5) չաշխատած օրերի համար վճարված գումարը՝ եթե սույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 7-րդ, 12-րդ, 13-րդ կետերով, 111-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ մասերով, 110-րդ հոդվածով եւ 112-րդ հոդվածի 1-ին եւ 2.1-ին մասերով, 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ, 13-րդ կետերով նախատեսված դեպքերում աշխատողն ազատվում է աշխատանքից մինչեւ այն աշխատանքային տարվա ավարտը, որի համար նրան տրամադրվել էր արձակուրդ:».

2) 2-րդ մասի վերջին պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին մաս.

«2.1. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերում նշված դեպքերում գործատուն իրավունք ունի կատարելու պահումներ կամ գանձումներ, եթե կանխավճարի վերադարձման համար սահմանված ժամկետը լրանալու, հաշվարկային մեխանիկական սխալների հետեւանքով կատարված ավել վճարումը կատարելու, կանխավճարի չծախսված եւ ժամանակին չվերադարձված գումարը վերադարձնելու, աշխատողի հասցրած վնասը հայտնաբերվելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, պահումներ կամ գանձումներ կատարելու մասին ընդունել է համապատասխան իրավական ակտ: Սույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում նշված դեպքում գործատուն իրավունք ունի կատարելու պահումներ կամ գանձումներ, եթե մինչեւ սույն օրենսգրքով սահմանված կարգով աշխատողի հետ լրիվ վերջնահաշվարկ կատարելու օրն ընդունել է այդ մասին համապատասխան իրավական ակտ կամ աշխատողին աշխատանքից ազատելու (աշխատանքային պայմանագիրը լուծելու) մասին անհատական իրավական ակտում նշել է պահումներ կամ գանձումներ կատարելու մասին:».

4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ մաս.

«4. Այն դեպքում, երբ աշխատողն ազատվում է աշխատանքից եւ սույն հոդվածով սահմանված կարգով պահումներ կամ գանձումներ կատարելուց հետո գործատուին ունեցած աշխատողի պարտքերը չեն մարվում ամբողջությամբ, ինչպես նաեւ այն դեպքում, երբ պահումներ կամ գանձումներ հնարավոր չէ կատարել, սակայն աշխատողն ունի գործատուի հանդեպ չմարված պարտքեր, ապա գործատուն իրավունք ունի չմարված պարքերը մարելու պահանջով դիմել դատարան:»:

Հոդված 100. Օրենսգրքի 214-րդ հոդվածից հանել «, բացառությամբ սույն օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով նախատեսված դեպքերի» բառերը:

Հոդված 101. Օրենսգրքի 216-րդ հոդվածում «կորոնավիրուսային հիվանդության (COVID-19)» բառերը փոխարինել «վարակիչ հիվանդությունների» բառերով, իսկ «գործատուին» բառից հետո լրացնել «, իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ նորմատիվ իրավական ակտերով, աշխատանքային պայմանագրով (կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով), պաշտոնի անձնագրով, գործատուի ներքին եւ անհատական իրավական ակտերով իրեն վերապահված գործառույթները» բառերով:

Հոդված 102. Օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ մասը «միջոցները,» բառից հետո լրացնել «աշխատողների օրական կամ շաբաթական աշխատաժամանակի հաշվառմանը, աշխատանքում բռնության կամ սեռական ոտնձգության արգելքին,» բառերով:

Հոդված 103. Օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասը «կատարելը» բառից հետո լրացնել «կամ սույն օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարքագծի կանոնները որեւէ այլ կերպ խախտելը» բառերով:

Հոդված 104. Օրենսգրքի 242-րդ հոդվածում՝

1) վերնագրում եւ տեքստում «անվտանգությունը եւ առողջությունը» բառերը փոխարինել «անվտանգության ապահովումը եւ առողջության պահպանությունը» բառերով.

2) «պահպանման» բառը փոխարինել «պաշտպանության» բառով:

Հոդված 105. Օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ մասում «առողջության եւ անվտանգության» բառերը փոխարինել «անվտանգությունը եւ առողջության» բառերով, «արտադրության» բառից հետո լրացնել «կամ աշխատանքի» բառերը, իսկ «կազմակերպությունում» բառը հանել:

Հոդված 106. Օրենսգրքի 246-րդ հոդվածի 3-րդ մասում «Անվտանգության» բառից հետո լրացնել «ապահովման» բառը:

Հոդված 107. Օրենսգրքի 247-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «կազմակերպություններում» բառը փոխարինել «գործատուների մոտ» բառերով.

2) 3-րդ մասի առաջին նախադասությունում «Աշխատողները» բառը փոխարինել «Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում աշխատողները» բառերով:

Հոդված 108. Օրենսգրքի 248-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Գործատուն պարտավոր է ընդունել աշխատողների անվտանգության ապահովման եւ առողջության պահպանության վերաբերյալ ներքին իրավական ակտեր, եթե գործատուի կողմից իրականացվող գործունեության տվյալ ոլորտի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված են աշխատողների անվտանգության ապահովմանը եւ առողջության պահպանությանը ներկայացվող պահանջներ:»:

Հոդված 109. Օրենսգրքի 249-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Մինչեւ տասնութ տարեկան անձինք աշխատանքի ընդունվելիս պարտավոր են անցնել պարտադիր նախնական բժշկական զննություն: Մինչեւ տասնութ տարեկան աշխատողները պարտավոր են ենթարկվել պարբերական բժշկական զննության՝ յուրաքանչյուր աշխատանքային տարվա ընթացքում մեկ անգամ:».

2) 2-րդ մասում «, իսկ աշխատանքի ընթացքում՝ պարբերաբար, անցնել բժշկական զննություն» բառերը փոխարինել «անցնել նախնական, իսկ աշխատանքի ընթացքում՝ պարբերական բժշկական զննություն» բառերով.

3) 4-րդ մասը «պարբերաբար» բառից հետո լրացնել «, յուրաքանչյուր աշխատանքային տարվա ընթացքում մեկ անգամ» բառերով.

4) 6-րդ մասում՝

ա. «Պարտադիր բժշկական զննումը» բառերը փոխարինել «Պարբերական բժշկական զննությունը» բառերով.

բ. «հաշվին:» բառից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Բժշկական զննության արդյունքները գրանցվում են աշխատողի անձնական սանիտարական (բժշկական) գրքույկում:».

5) 7-րդ մասում «ցանկը, » բառից հետո լրացնել «սանիտարական գրքույկի ձեւը,» բառերով:

Հոդված 110. Օրենսգրքի 250-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «Կազմակերպությունում կամ կազմակերպության ստորաբաժանումներում վտանգ առաջանալու» բառերը փոխարինել «Աշխատավայրում վտանգ առաջանալու կամ աշխատողների աշխատանքային գործառույթների կատարման այլ վայրում վտանգի առաջացման մասին տեղեկություն ստանալու» բառերով.

2) 2-րդ մասի 5-րդ կետում եւ 3-րդ մասի առաջին նախադասությունում «կազմակերպության» բառը փոխարինել «գործատուի» բառով.

3) 3-րդ մասի երկրորդ նախադասությունից հանել «կազմակերպության» բառը.

4) 5-րդ մասում «Յուրաքանչյուր կազմակերպություն» բառերը փոխարինել «Բացառությամբ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձ գործատուների, յուրաքանչյուր գործատու» բառերով.

5) 6-րդ մասում «կազմակերպությունները, որտեղ արտադրվում, օգտագործվում, պահպանվում են» բառերը փոխարինել «գործատուները, որոնք արտադրում կամ օգտագործում կամ պահպանում են» բառերով.

6) 7-րդ մասում «փակցվեն» բառից հետո լրացնել «աշխատողների համար» բառերով, իսկ «Կազմակերպության» բառը փոխարինել «Գործատուի» բառով.

7) 9-րդ մասում «արտադրությունում դժբախտ պատահարները» բառերը փոխարինել «աշխատանքի վայրում դժբախտ դեպքերը» բառերով:

Հոդված 111. Օրենսգրքի 251-րդ հոդվածում՝

1) վերնագրում եւ 3-րդ մասում «Կազմակերպության» բառը փոխարինել «Գործատուի» բառով.

2) 1-ին մասում «Կազմակերպությունում աշխատողների» բառերը փոխարինել «Աշխատողների» բառով, «սահմանված» բառից հետո լրացնել «դեպքերում եւ» բառերը, իսկ «համար» բառից հետո լրացնել «գործատուի մոտ» բառերը.

3) 2-րդ մասում «կազմակերպությունում» բառը փոխարինել «գործատուի մոտ» բառերով:

Հոդված 112. Օրենսգրքի 253-րդ հոդվածի վերջին նախադասությունում «Գործատուն» բառից հետո լրացնել «իր մոտ» բառերը, իսկ «կազմակերպության» բառը հանել:

Հոդված 113. Օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասում «կազմակերպություն» բառը փոխարինել «մոտ» բառով, իսկ «կազմակերպությունում» բառը՝ «գործատուի մոտ» բառերով:

Հոդված 114. Օրենսգրքի 255-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «կազմակերպությունում» բառը փոխարինել «գործատուի մոտ» բառերով.

2) 1-ին եւ 2-րդ մասերում «անվտանգության եւ առողջության պահպանության» բառերը փոխարինել «անվտանգության ապահովման եւ առողջության պահպանության» բառերով:

Հոդված 115. Օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասը «Աշխատանքի վայրում» բառերից հետո լրացնել «կամ աշխատանքային գործառույթները կատարելիս այլ վայրում» բառերով:

Հոդված 116. Օրենսգրքի 257-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«**Հոդված 257. Մինչեւ տասնութ տարեկան անձանց համար արգելված աշխատանքները**

1. Արգելվում է մինչեւ տասնութ տարեկան անձանց ներգրավել ալկոհոլային խմիչքների, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, ծխախոտի, ծխախոտային այլ արտադրատեսակների կամ դրանց փոխարինիչների, էրոտիկա, պոռնոգրաֆիա, սարսափ բովանդակող տպագիր հրատարակությունների, ֆիլմերի, տեսահոլովակների, հեռուստառադիոհաղորդումների, պոռնկագրական բնույթի այլ նյութերի կամ առարկաների արտադրության, օգտագործման, գովազդի, առեւտրի կամ ցանկացած այլ եղանակով

տարածմանը կամ իրացմանն ուղղված աշխատանքներում, ինչպես նաեւ մոլեխաղեր կազմակերպելուն կամ դրա գովազդելուն ուղղված աշխատանքներին:

2. Արգելվում է մինչեւ տասնութ տարեկան անձանց ներգրավել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներում, ինչպես նաեւ մինչեւ տասնութ տարեկան անձանց համար ծանր եւ վնասակար համարվող աշխատանքներում: Մինչեւ տասնութ տարեկան անձանց համար ծանր եւ վնասակար համարվող աշխատանքների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 117. Օրենսգրքի 258-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Արգելվում է հղի կամ մինչեւ մեկ տարեկան երեխա խնամող կանանց ներգրավել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներում, ինչպես նաեւ հղի կամ մինչեւ մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր եւ վնասակար համարվող աշխատանքներում: Հղի կամ մինչեւ մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր եւ վնասակար համարվող աշխատանքների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

2) 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5. Մինչեւ երկու տարեկան երեխա ունեցող կնոջը, բացի հանգստի եւ սնվելու համար տրամադրվող ընդմիջման ժամերից, յուրաքանչյուր երեք ժամը մեկ տրամադրվում է լրացուցիչ ընդմիջում՝ կես ժամից ոչ պակաս տեւողությամբ: Կնոջ ցանկությամբ այդ ընդմիջումները կարող են միավորվել եւ միացվել հանգստի եւ սնվելու համար ընդմիջմանը կամ տրամադրվել աշխատանքային օրվա սկզբին կամ տեղափոխվել աշխատանքային օրվա վերջ՝ աշխատանքային օրվա տեւողության համապատասխան կրճատումով: Սույն մասով սահմանված ընդմիջումների ժամանակահատվածում աշխատողը վարձատրվում է միջին ժամային աշխատավարձի չափով:»:

Հոդված 118. Օրենսգրքի 260-րդ հոդվածում՝

1) 1-ին եւ 2-րդ մասերը «Աշխատանքի վայրում» բառերից հետո լրացնել «կամ աշխատանքային գործառույթները կատարելիս այլ վայրում» բառերով.

2) 1-ին մասում «կազմակերպության» բառը փոխարինել «գործատուի» բառով:

Հոդված 119. Օրենսգրքի 261-րդ հոդվածի 1-ին մասում «Կազմակերպությունում» բառը փոխարինել «Գործատուի մոտ» բառերով:

Հոդված 120. Օրենսգրքի 262-րդ հոդվածի՝

1) վերնագրում «անվտանգության» բառից հետո լրացնել «ապահովման» բառը.

2) 1-ին մասում «Աշխատողների անվտանգության» բառերից հետո լրացնել «ապահովման» բառը:

Հոդված 121. Օրենսգրքի 264-րդ հոդվածում՝

1) վերնագրում «մարմինը» բառից հետո լրացնել «եւ աշխատանքային վեճերի հաշտարարությունը» բառերով.

2) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Աշխատանքային վեճերով կարող է իրականացվել նաեւ հաշտարարություն՝ «Հաշտարարության մասին» օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 122. Օրենսգրքի 265-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Աշխատանքի պայմանների փոփոխման կամ աշխատանքային հարաբերությունների դադարեցման հետ համաձայն չլինելու դեպքերում աշխատողը աշխատանքի պայմանների փոփոխման կամ աշխատանքից ազատման (կամ աշխատանքային պայմանագրի լուծման) մասին անհատական իրավական ակտը ստանալու օրվանից հետո երկու ամսվա ընթացքում, իսկ սույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 12.2-րդ կետով սահմանված դեպքերում՝ աշխատանքային պայմանագիրն օրենքի ուժով լուծված համարվելու օրվանից հետո երկու ամսվա ընթացքում իրավունք ունի դիմելու դատարան:»:

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մաս.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում, եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են կամ աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցվել են առանց օրինական հիմքերի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ գործատուի ներքին կամ անհատական իրավական ակտերով կամ աշխատանքային պայմանագրով սահմանված պահանջների խախտմամբ, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքերում աշխատողի օգտին

գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը տվյալ գործատուի մոտ կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք:».

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ մաս.

«3. Սույն հոդվածի 1.1-ին եւ 2-րդ մասերով նախատեսված միջին աշխատավարձի չափը որոշելու համար հաշվի է առնվում մինչեւ աշխատանքային պայմանագրի լուծումը աշխատողի համար հաշվարկված աշխատավարձի չափը՝ սույն օրենսգրքի 195-րդ հոդվածով սահմանված կարգով: Սույն հոդվածի 1.1-ին եւ 2-րդ մասերով նախատեսված դեպքերում միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի քանակով բազմապատկելու միջոցով:»:

Հոդված 123. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երկու ամիս հետո, բացառությամբ սույն օրենքի 20-րդ, 25-րդ հոդվածների, 81-րդ հոդվածի 7-րդ կետի, 83-րդ հոդվածի 5-րդ կետի, 95-րդ, 97-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

2. Աշխատանքային հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում ծագած համարվելու մասին սույն օրենքի 6-րդ հոդվածի դրույթները տարածվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո կնքված աշխատանքային պայմանագրերի եւ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ընդունված աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերի հիման վրա ծագած աշխատանքային հարաբերությունների վրա:

3. Սույն օրենքի 122-րդ հոդվածի գործողությունը չի տարածվում մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ ծագած աշխատանքային վեճերի վրա: Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ ծագած աշխատանքային վեճերի նկատմամբ կիրառվում են Օրենսգրքի՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան նախորդող օրվա դրությամբ գործող խմբագրությամբ սահմանված նորմերը:

4. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից՝ վեցամսյա ժամկետում:

Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-508-30.01.2023-ԱՍ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2004 թվականի նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետում «աշխատանքի ազատությունը» բառերը փոխարինել «աշխատանքի ազատ ընտրությունը» բառերով.

2) 2-րդ կետում «բռնությունների» բառից հետո լրացնել «, ~~այդ թվում՝~~ սեռական ոտնձգության» բառերով.

3) 3-րդ կետում «ռասայից, » բառից հետո լրացնել «մաշկի գույնից, » բառերով, իսկ «դավանանքից» բառը փոխարինել «կրոնից» բառով:

Հոդված 2. Օրենսգրքի 3.1-ին հոդվածի 3-րդ մասում «բացառությամբ» բառից հետո լրացնել «սույն օրենսգրքով եւ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի կամ» բառերով:

Հոդված 3. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ՝ նոր 3.3-րդ հոդվածով.

«**Հոդված 3.3.** ~~Բռնության կամ ոտնձգության արգելքն աշխատանքային հարաբերություններում~~**Աշխատանքում բռնության կամ սեռական ոտնձգության արգելքը**

~~1. Աշխատանքային հարաբերություններում բռնությունը կամ ոտնձգությունն արգելվում են:~~

1. Աշխատանքում (աշխատավայրում) բռնությունը կամ սեռական ոտնձգությունն արգելվում են:

~~2. Բռնությունը կամ ոտնձգությունն աշխատավայրում կամ աշխատանքային պարտականությունների կատարման այլ վայրում (ներառյալ՝ գործուղումները) գործատուի կամ աշխատողի կողմից մեկանգամյա կամ կրկնվող գործողություն է, որը նվաստացնում կամ վիրավորում է անձի արժանապատվությունը, ստեղծում է թշնամական կամ նվաստացուցիչ միջավայր, կամ որը նպատակ ունի հանգեցնելու, հանգեցնում է կամ կարող է հանգեցնել ֆիզիկական կամ հոգեկան կամ սեռական կամ ծառայողական կախվածության կամ վնասի կամ այդպիսի արարքի սպառնալիք է, որն ուղղված է աշխատողի կամ երրորդ անձի դեմ:~~

2. Բռնությունն աշխատավայրում կամ աշխատանքային պարտականությունների կատարման այլ վայրում (ներառյալ՝ գործուղումները) աշխատողի կամ երրորդ անձի դեմ ուղղված բռնի կամ բռնության սպառնալիք պարունակող մեկանգամյա կամ կրկնվող արարք է, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել ֆիզիկական, հոգեկան, սեռական կամ տնտեսական վնասի կամ անձի համար թշնամական կամ նվաստացուցիչ միջավայրի ձեւավորման:

~~3. Սեռական ոտնձգությունը, սեռի վրա հիմնված, սեռական բնույթի ցանկացած ֆիզիկական, բանավոր կամ ոչ բանավոր կամ այլ վարքագիծ է, որն ազդում է կանանց եւ տղամարդկանց արժանապատվության վրա, որն անցանկալի, անհիմն եւ վիրավորական է ստացողի եւ անձի կողմից մերժման կամ ենթարկվելու համար. նման վարքագիծն օգտագործվում է բացահայտ կամ անուղղակիորեն որպես հիմք՝ տվյալ անձի աշխատանքի վրա ազդող որոշման համար. կամ վարքագիծ, որն ստացողի համար ստեղծում է վախեցնող, թշնամական կամ նվաստացուցիչ աշխատանքային միջավայր:~~

3. Սեռական ոտնձգությունն աշխատավայրում կամ աշխատանքային պարտականությունների կատարման այլ վայրում (ներառյալ՝ գործուղումները) սեռական բնույթի անցանկալի արարք է, որն ունի ֆիզիկական կամ խոսքային կամ ոչ խոսքային դրսեւորում (ներառյալ՝ սեռական բնույթի առաջարկներ, հպումներ) եւ որն ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում է անձի՝ աշխատանքի վերաբերյալ որոշումների կայացման վրա կամ ստեղծում է արժանապատվությունը նվաստացնող կամ սոցիալական մեկուսացման դրդող աշխատանքային միջավայր:»:

Հոդված 4. Օրենսգրքի 7-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասից հանել «(քաղաքացիներ կամ կազմակերպություններ)» բառերը.

2) 4-րդ մասում «կազմակերպությունը» բառից առաջ լրացնել «պետությունում գրանցված կամ միջազգային» բառերով, իսկ «անձը» բառից հետո՝ «(այսուհետ՝ օտարերկրյա գործատու)» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Օրենքի կամ իրավունքի անալոգիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են գործատուների կամ քաղաքացիների իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսվում է նոր պարտականություն կամ պատասխանատվություն, կամ խստացվում են նրանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության, հարկադրանքի միջոցները կամ դրանց կիրառման կարգը, նրանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու պայմանները եւ կարգը:»:

Հոդված 6. Օրենսգրքի 14-րդ հոդվածում՝

1) վերնագրում «հիմքերը» բառից հետո լրացնել «եւ վայրը» բառերով.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մաս.

«1.1. Աշխատանքային հարաբերությունները համարվում են ծագած Հայաստանի Հանրապետությունում, եթե աշխատանքային պայմանագիրը կնքվել կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտն ընդունվել է Հայաստանի Հանրապետությունում: Եթե աշխատանքային պայմանագիրը կնքվել է Հայաստանի Հանրապետությունից դուրս այլ վայրում կամ սույն օրենսգրքի 85-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգով փոստային ~~եղանակով~~ կամ էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով փոխանակելով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտն աշխատողին ուղարկվել է սույն մասով սահմանված կապի միջոցներով, ապա աշխատանքային պայմանագիրը կնքված, իսկ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտն ընդունված է համարվում Հայաստանի Հանրապետությունում, եթե՝

1) ռեզիդենտ իրավաբանական անձ հանդիսացող գործատուի գտնվելու վայրը (նրա մշտական գործող մարմնի գտնվելու վայրը) հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը.

2) գործատուն հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը.

3) հիմնարկի պետական հաշվառման վայրը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը.

4) օտարերկրյա պետությունում գրանցված կազմակերպությունների կամ միջազգային կազմակերպությունների՝ գործատու հանդիսացող առանձնացված ստորաբաժանումների եւ հիմնարկների գտնվելու վայրի հասցեն (փոստային հասցեն) Հայաստանի Հանրապետությունում է.

5) ֆիզիկական անձ հանդիսացող գործատուի բնակության վայրը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը:»:

Հոդված 7. Օրենսգրքի 16-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Իրավաբանական անձ չհանդիսացող այլ գործատուների աշխատանքային իրավունակության եւ գործունակության նկատմամբ կիրառվում են իրավաբանական անձ հանդիսացող գործատուի աշխատանքային իրավունակության եւ գործունակության մասին նորմերը, եթե այլ բան չի բխում սույն օրենսգրքից, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներից կամ տվյալ սուբյեկտների առանձնահատկություններից:».

2) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Գործատուները ձեռք են բերում աշխատանքային իրավունքներ եւ կրում են աշխատանքային պարտականություններ, ինչպես նաեւ դրանք իրականացնում են ~~իրենց մարմինների,~~ համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձանց, ~~ինչպես նաեւ~~ օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ կամ գործատուի ընդունած ներքին կամ անհատական իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ այդպիսի լիազորություններ ունեցող այլ անձանց, ինչպես նաեւ իրենց մարմինների միջոցով, որոնք ձեւավորվում եւ գործում են օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի, ~~գործատուի~~ իրավաբանական անձի կանոնադրության ~~եւ նրա հաստատած~~ կամ գործատուի ~~(~~ընդունած~~)~~ ներքին կամ անհատական իրավական ակտերի հիման վրա:»:

Հոդված 8. Օրենսգրքի 17-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Աշխատող են համարվում նաեւ սույն օրենսգրքի 17.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամանակավոր աշխատանք կատարող անձինք:»:

2) 2.1-ին, 2.2-րդ, 3-րդ եւ 4-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 17.1-ին հոդվածով.

«**Հոդված 17.1. Մինչեւ տասնութ տարեկան անձանց մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների առանձնահատկությունները**

1. Մինչեւ տասնութ տարեկան յուրաքանչյուր անձ ունի իր տարիքային հնարավորություններին, զարգացման առանձնահատկություններին եւ ունակություններին համապատասխան՝ սույն օրենսգրքով եւ Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով չարգելված աշխատանքային գործունեություն ծավալելու իրավունք:

2. Մինչեւ տասնչորս տարեկան անձինք կարող են ընդգրկվել միայն կինեմատոգրաֆիայի, մարզական, թատերական կամ համերգային կազմակերպություններում, կրկեսում, հեռուստատեսությունում կամ ռադիոյում ստեղծագործությունների ստեղծմանը (ստեղծագործական աշխատանք) կամ կատարմանը:

3. Մինչեւ տասնվեց տարեկան անձանց հետ կնքվում է ժամանակավոր աշխատանքային պայմանագիր: Մինչեւ տասնվեց տարեկան անձանց մշտական աշխատանքի ընդունելն արգելվում է: Մինչեւ տասնվեց տարեկան անձինք, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում եւ կարգով, կարող են ընդունվել ժամանակավոր աշխատանքի՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ խնամակալի կամ հոգաբարձուի, իսկ նրանց բացակայության դեպքում՝ մինչեւ տասնվեց տարեկան անձի բնակության վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմնի գրավոր համաձայնությամբ, եթե այն չի խոչընդոտում նրանց պարտադիր կրթության գործընթացին:

4. Մինչեւ տասնվեց տարեկան անձինք ժամանակավոր աշխատանքներում կարող են ընդգրկվել սույն օրենսգրքի 85-րդ հոդվածի 1-ին եւ 1.2-րդ մասերին, 89-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ եւ 5-րդ կետերին, 91-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին, 101-րդ հոդվածին, 140-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերին, 143-րդ հոդվածի 1.1-ին մասին, 148-րդ հոդվածի 3-րդ մասին, 149-րդ հոդվածի 4-րդ մասին, 152-րդ հոդվածի 1.1-ին մասին, 153-րդ հոդվածի 2-րդ մասին, 154-րդ հոդվածի 2-րդ մասին, 155-րդ հոդվածի 7-րդ մասին, 164-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետին, 209-րդ հոդվածի 3-րդ մասին, 240-րդ հոդվածի 2-րդ մասին, 249-րդ հոդվածի 1-ին մասին, 257-րդ հոդվածին համապատասխան:

5. Մինչեւ տասնութ տարեկան անձինք կարող են ընդգրկվել միայն այնպիսի աշխատանքներում, որոնք չեն վտանգում նրանց առողջությունը (այդ թվում՝ ֆիզիկական եւ մտավոր զարգացումը), բարոյականությունը, չեն սպառնում նրանց անվտանգությանը եւ չեն խոչընդոտում նրանց պարտադիր կրթությանը:

6. Մինչեւ տասնութ տարեկան անձինք չեն կարող ընդգրկվել աշխատանքի հանգստյան, ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերին, բացառությամբ մարզական եւ մշակութային միջոցառումներին մասնակցելու դեպքերի:

7. Մինչեւ տասնութ տարեկան անձինք ունեն աշխատանքի արտոնյալ պայմանների իրավունք: Այդ անձանց համար սահմանվում է աշխատաժամանակի կրճատ տեւողություն՝ սույն օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի 1-5-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխան:»:

~~8. Արգելվում է մինչեւ տասնութ տարեկան անձանց ներգրավել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներում, ինչպես նաեւ նրանց համար ծանր եւ վնասակար համարվող աշխատանքներում: Մինչեւ տասնութ տարեկան անձանց համար ծանր եւ վնասակար համարվող աշխատանքների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

~~9. Արգելվում է մինչեւ տասնութ տարեկան անձանց ներգրավել ալկոհոլային խմիչքների, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, ծխախոտի, ծխախոտային այլ արտադրատեսակների կամ դրանց փոխարինիչների, էրոտիկա, պոռնոգրաֆիա, սարսափ բովանդակող տպագիր հրատարակությունների, ֆիլմերի, տեսահոլովակների, հեռուստառադիոհաղորդումների, պոռնկագրական բնույթի այլ նյութերի կամ առարկաների արտադրության, օգտագործման, գովազդի, առեւտրի կամ ցանկացած այլ եղանակով տարածմանը կամ իրացմանն ուղղված աշխատանքներում, ինչպես նաեւ մոլեխաղեր կազմակերպելուն կամ դրա գովազդելուն ուղղված աշխատանքներին:»:~~

Հոդված 10. Օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝.

«2. Գործատու կարող են լինել Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած իրավաբանական անձինք՝ անկախ կազմակերպական-իրավական ձեւից, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված հիմնարկները, սույն օրենսգրքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված սուբյեկտները, օտարերկրյա պետությունում գրանցված կազմակերպությունների կամ միջազգային կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով գրանցված կամ հաշվառված առանձնացված ստորաբաժանումները, հիմնարկները, ինչպես նաեւ ֆիզիկական անձինք, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը եւ նոտարները: Որպես գործատու

կարող է հանդես գալ նաեւ Հայաստանի Հանրապետությունը եւ համայնքը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության օրենքով աշխատանքային պայմանագիր կնքելու կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ ընդունելու իրավունք ունեցող այլ սուբյեկտ:»:

Հոդված 11. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 18.1-ին հոդվածով.

«**Հոդված 18.1. Աշխատանքի վայրը (աշխատավայրը)**

1. Աշխատանքի վայրն (աշխատավայրը) այն տեղն է, որտեղ աշխատողը կատարում է աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով սահմանված աշխատանքային գործառույթները կամ որում աշխատողը պետք է գտնվի կամ որտեղ պետք է ներկայանա՝ իր աշխատանքով պայմանավորված եւ որն ուղղակի (անմիջականորեն) կամ անուղղակի կերպով գտնվում է գործատուի կառավարման (ղեկավարման) կամ հսկողության ներքո:

2. Եթե աշխատանքի բնույթով պայմանավորված, միեւնույն գործատուի մոտ աշխատանքի դեպքում աշխատողի համար աշխատավայր են հանդիսանում մեկից ավելի վայրեր (տեղեր), ապա աշխատանքի հիմնական վայր (հիմնական աշխատավայր) է հանդիսանում՝

1) մշտական տեղակայման վայր ունեցող եւ աշխատանքի միջոցներով սարքավորված այն աշխատավայրը, որտեղ աշխատողը սովորաբար անցկացնում է աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով նախատեսված աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ ժամանակահատվածի կեսից ավելին.

2) գործատուի գտնվելու վայրը կամ գործատուի այն կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանման կամ գրասենյակի կամ հիմնարկի գտնվելու վայրը, որում աշխատում է աշխատողը, այն դեպքերում, երբ՝

ա. աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով նախատեսված աշխատանքները կատարելու համար սույն մասի 1-ին կետով նախատեսված ժամանակահատվածի տեւողությունը հնարավոր չէ որոշել.

բ. աշխատանքները հանդիսանում են դաշտային պայմաններում կատարվող կամ տեղափոխման (տեղաշարժման) բնույթ կրող կամ ոչ մշտական տեղակայման վայր ունեցող կամ շրջիկ առեւտրի կետերում աշխատանքներ.

3) կողմերի համաձայնությամբ աշխատանքային պայմանագրում սահմանված աշխատավայրը, այն դեպքում, եթե սույն մասի 1-ին եւ 2-րդ կետերով հնարավոր չէ որոշել աշխատանքի հիմնական վայրը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում, եթե գործատուն անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձ է՝ աշխատանքի հիմնական վայր (հիմնական աշխատավայր) է հանդիսանում նրա մշտական բնակության վայրը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ օրենքով սահմանված պետական միասնական գրանցամատյանում գրառված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասցեն:

4. Գործուղման հետ կապված հարաբերությունների կիրառության իմաստով որպես աշխատանքի հիմնական վայր է դիտարկվում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներին համապատասխանող աշխատավայրի գտնվելու բնակավայրը:»:

Հոդված 12. Օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին եւ 3-րդ կետերում «որոնք» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերով.

2) 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) մասնագիտական աշխատանքային ստաժ, որում հաշվարկվում են քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված մասնագիտական կրթության, իսկ տվյալ աշխատանքի նկարագրով (պաշտոնի անձնագրով) որոշակի մասնագիտական կրթություն նախատեսված լինելու դեպքում՝ այդ կրթության մասին վկայող փաստաթղթում նշված որակավորմանը կամ մասնագիտությանը համապատասխանող աշխատանքային ստաժը, անկախ պետական կամ մասնավոր ոլորտներում կատարած աշխատանքից, ինչպես նաեւ այլ ժամանակահատվածներ, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ թույլատրվում է հաշվարկել տվյալ տեսակի աշխատանքային ստաժում: Մասնագիտական աշխատանքային ստաժը ներառում է համապատասխան որակավորում ստանալուց հետո աշխատած ժամանակահատվածը.».

3) 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 13. Օրենսգրքի 23-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«**Հոդված 23. Աշխատողների ներկայացուցիչները**

1. Աշխատողների իրավունքներն ու շահերը ներկայացնելու եւ աշխատանքային հարաբերություններում դրանք պաշտպանելու իրավունք ունեն արհեստակցական միությունները: Կազմակերպությունում արհեստակցական միության բացակայության դեպքում աշխատողների ժողովի (համաժողովի) կողմից աշխատողների ներկայացուցչության եւ շահերի պաշտպանության գործառույթները կարող են փոխանցվել համապատասխան ճյուղային կամ տարածքային արհեստակցական միությանը: Այդ դեպքում աշխատողների ժողովը (համաժողովը) ընտրում է ներկայացուցիչ (ներկայացուցիչներ), որը ճյուղային կամ տարածքային արհեստակցական միության պատվիրակության կազմում մասնակցում է տվյալ գործատուի հետ վարվող կոլեկտիվ բանակցություններին:

2. Եթե կազմակերպությունում՝

1) աշխատողները միավորված են միայն մեկ արհեստակցական միությունում եւ այն միավորում է կազմակերպության աշխատողների կեսից ավելիին, ապա կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում այդ արհեստակցական միությունը ներկայացնում եւ պաշտպանում է կազմակերպության բոլոր աշխատողների իրավունքներն ու շահերը.

2) աշխատողները միավորված են միայն մեկ արհեստակցական միությունում, որին անդամակցում են կազմակերպության աշխատողների ոչ ավելին, քան կեսը, ապա կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում տվյալ արհեստակցական միությունը ներկայացնում եւ պաշտպանում է միայն իր անդամների իրավունքները եւ շահերը.

3) աշխատողները միավորված չեն որեւէ արհեստակցական միությունում (այդ թվում՝ ճյուղային կամ տարածքային), ապա կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում բոլոր աշխատողների իրավունքներն ու շահերը ներկայացնելու եւ դրանք պաշտպանելու նպատակով, աշխատողների ժողովի (համաժողովի) կողմից կարող են ընտրվել ներկայացուցիչներ (մարմին):

3. Կազմակերպությունում մեկից ավելի արհեստակցական միության առկայության դեպքում կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում բոլոր աշխատողների իրավունքներն ու շահերը ներկայացնելու եւ դրանք պաշտպանելու նպատակով, սույն օրենսգրքի 56-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով կարող է ստեղծվել աշխատողների ներկայացուցչական միասնական մարմին:

4. Միեւնույն անձը միաժամանակ չի կարող ներկայացնել աշխատողների եւ գործատուների շահերն ու պաշտպանել դրանք:»:

Հոդված 14. Օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 3-րդ կետում «կազմակերպման» բառից հետո լրացնել « եւ աշխատանքի պայմանների» բառերով.

2) 6-րդ կետում «կամ» բառից հետո լրացնել «աշխատողների կամ» բառերով:

Հոդված 15. Օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով եւ 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ կետով.

«8) աշխատողների ներկայացուցիչներին տրամադրել տարածք եւ նյութատեխնիկական միջոցներ՝ իրենց լիազորությունների իրականացման համար՝ կոլեկտիվ պայմանագրով կամ կողմերի համաձայնությամբ սահմանված կարգով:»:

Հոդված 16. Օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունում «կազմակերպության կանոնադրությամբ» բառերը փոխարինել «այլ նորմատիվ իրավական ակտով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ կամ գործատուի ընդունած ներքին կամ անհատական իրավական ակտերով» բառերով:

Հոդված 17. Օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին մասը «աշխատանքային» բառից հետո լրացնել «եւ դրա հետ կապված սոցիալական կամ տնտեսական» բառերով:

Հոդված 18. Օրենսգրքի 45-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «աշխատանքային» բառից հետո լրացնել « եւ դրա հետ կապված սոցիալական կամ տնտեսական» բառերով.

2) 2-րդ մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Կոլեկտիվ բանակցությունների անցկացման մասին ծանուցում ստացած կողմը պարտավոր է սույն օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված ժամկետում կոլեկտիվ բանակցությունների ցանկություն հայտնած կողմին տեղեկացնել կոլեկտիվ բանակցություններին մասնակցելու իր դիրքորոշման մասին:».

3) 7-րդ մասում «կնքելու» բառից հետո լրացնել «կամ կոլեկտիվ պայմանագրում կատարված փոփոխությունները կամ լրացումներն ուժի մեջ մտնելու» բառերով:

Հոդված 19. Օրենսգրքի 49-րդ հոդվածի 3-րդ մասում՝

1) 12-րդ կետում «կոլեկտիվ» բառից հետո լրացնել «աշխատանքային» բառով.

2) 13-րդ կետում «հարցեր» բառը փոխարինել «պայմաններ» բառով:

Հոդված 20. Օրենսգրքի 51-րդ հոդվածում՝

1) վերնագրում «գրանցումը» բառը փոխարինել «հաշվառումը» բառով.

2) 1-ին մասի՝

ա. 1-ին նախադասությունում «գրանցումն իրականացնում է պետական լիազոր մարմինը՝» բառերը փոխարինել «հաշվառումն իրականացնում է տեսչական մարմինը՝» բառերով.

բ. 2-րդ եւ 3-րդ նախադասություններում «գրանցման» բառերը փոխարինել «հաշվառման» բառերով.

3) 2-րդ մասում «գրանցման» բառերը փոխարինել «հաշվառման» բառերով.

4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ մաս.

«3. Հանրապետական, ճյուղային եւ տարածքային կոլեկտիվ պայմանագրերի՝ սույն հոդվածով նախատեսված հաշվառման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 21. Օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասում «պայմանների» բառից հետո լրացնել «կամ դրանց մի մասի» բառերով:

Հոդված 22. Օրենսգրքի 56-րդ հոդվածի 4-րդ մասում «Կազմակերպությունում աշխատողների ներկայացուցիչների բացակայության պատճառով աշխատողների» բառերը փոխարինել «Աշխատողների» բառով:

Հոդված 23. Օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասում «հարցերի» բառը փոխարինել «պայմանների» բառով:

Հոդված 24. Օրենսգրքի 59-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասից հանել «(բացառությամբ կազմակերպության վերակազմակերպման դեպքի, ինչպես նաեւ սույն օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի)» բառերը.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ եւ 7-րդ մասեր.

«6. Կազմակերպության վերակազմակերպման կամ կազմակերպության մասնավորեցման (ապապետականացման) դեպքում կազմակերպության կոլեկտիվ պայմանագիրը շարունակում է

գործել մինչեւ իր գործողության մնացած ժամկետի լրանալը կամ մինչեւ նոր կոլեկտիվ պայմանագրի կնքելը, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքի:

7. Այն դեպքում, երբ մինչեւ վերակազմակերպվելը կազմակերպություններում առկա են եղել մեկից ավելի կոլեկտիվ պայմանագրեր, ապա կազմակերպության վերակազմակերպման դեպքում այդ կոլեկտիվ պայմանագրերը դադարում են գործել, եւ երկամսյա ժամկետում կնքվում է նոր կոլեկտիվ պայմանագիր, որի դրույթները չեն կարող նվազ բարենպաստ լինել, քան վերակազմակերպվող կազմակերպությունների կոլեկտիվ պայմանագրերի դրույթներն են:»:

Հոդված 25. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 59.1-ին հոդվածով.

«**Հոդված 59.1. Կազմակերպության կոլեկտիվ պայմանագրի հաշվառումը**

1. Կազմակերպության կոլեկտիվ պայմանագրի հաշվառումն իրականացնում է տեսչական մարմինը՝ համապատասխան դիմումը եւ կոլեկտիվ պայմանագիրը ներկայացնելու դեպքում: Ներկայացված կոլեկտիվ պայմանագրի հաշվառման մերժումը որեւէ պատճառաբանությամբ արգելվում է:

2. Կազմակերպության կոլեկտիվ պայմանագիրը ստորագրման պահից տասն օրվա ընթացքում հաշվառման է ներկայացնում տվյալ կոլեկտիվ պայմանագրի կողմ հանդիսացող գործատուն:

3. Եթե սույն հոդվածի 2-րդ մասում նշված ժամկետում գործատուն կազմակերպության կոլեկտիվ պայմանագիրը հաշվառման չի ներկայացնում, ապա կազմակերպության կոլեկտիվ պայմանագիրը հաշվառման կարող է ներկայացվել պայմանագրի կողմ հանդիսացող աշխատողների ներկայացուցչի կողմից: Կազմակերպության կոլեկտիվ պայմանագրի կողմ հանդիսացող աշխատողների ներկայացուցիչը պայմանագիրը հաշվառման է ներկայացնում սույն հոդվածի 2-րդ մասում նշված ժամկետը լրանալուց հետո՝ հինգ օրվա ընթացքում:

4. Կազմակերպության կոլեկտիվ պայմանագրի հաշվառման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 26. Օրենսգրքի 61-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «2-րդ եւ 3-րդ մասերով նախատեսված դեպքերի» բառերը փոխարինել «3-րդ մասով նախատեսված դեպքի» բառերով.

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 27. Օրենսգրքի 11-րդ գլխի վերնագրում «**ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**» բառից հետո լրացնել «, **ԳՈՐԾԱԴՈՒԼԸ**» բառը:

Հոդված ~~27~~28. Օրենսգրքի 64-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.՝

«**Հոդված 64. Կոլեկտիվ աշխատանքային վեճը**

1. Կոլեկտիվ աշխատանքային վեճը արհեստակցական միության եւ գործատուի կամ կոլեկտիվ պայմանագիր կնքելու իրավունք ունեցող կողմերի միջեւ տարաձայնություններն են՝ կողմերի ներկայացրած ու չբավարարված պահանջների վերաբերյալ: Դրանք ծագում են աշխատողների աշխատանքի սոցիալ-տնտեսական պայմանների սահմանման, փոփոխման, կոլեկտիվ պայմանագրի կնքման կամ փոփոխման առիթով բանակցությունների, ինչպես նաեւ օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով կամ կոլեկտիվ պայմանագրով սահմանված պայմանների փոփոխման, դադարեցման կամ աշխատանքի նոր պայմանների սահմանման, կոլեկտիվ պայմանագրի կնքման եւ կատարման ընթացքում, այդ թվում՝ կոլեկտիվ պայմանագրի կարգավորման առարկայի շրջանակներում առաջացած, սակայն կողմերի համաձայնությամբ նախօրոք չկարգավորված հարաբերությունների կամ կոլեկտիվ պայմանագրի շրջանակներում չկարգավորված հարաբերությունների հետ կապված:»:

Հոդված ~~28~~29. Օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «վեճերի» բառից առաջ լրացնել «աշխատանքային» բառով:

Հոդված ~~29~~30. Օրենսգրքի 73-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«**Հոդված 73. Գործադուլը**

1. Աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք:

2. Գործադուլը մեկ կամ մի քանի գործատուների մոտ աշխատողների կոլեկտիվի կամ աշխատողների որոշակի խմբի՝ կոլեկտիվ գործողությունների միջոցով աշխատանքների լրիվ կամ մասնակի ժամանակավոր դադարեցումն է աշխատողների տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով, այդ թվում՝

1) աշխատանքային վեճն աշխատողի եւ գործատուի համաձայնությամբ չլուծվելու դեպքում~~,~~.

2) կոլեկտիվ աշխատանքային վեճը չլուծվելու դեպքում.,

3) գործատուի կողմից հաշտեցման գործընթաց իրականացնելուց խուսափելու դեպքում,.

4) հաշտեցման հանձնաժողովի՝ սույն օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ընդունած որոշումը գործատուի կողմից չկատարելու դեպքում,.

5) նախօրոք կնքված կոլեկտիվ աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտավորությունները գործատուի կողմից չկատարելու դեպքում,.

6) կոլեկտիվ բանակցություններ վարելու վերաբերյալ գրավոր ծանուցում ստացած գործատուի կողմից սույն օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված ժամկետում կոլեկտիվ բանակցություններին մասնակցելու իր դիրքորոշման մասին կոլեկտիվ բանակցությունների ցանկություն հայտնած կողմին չտեղեկացնելու դեպքում:»:

Հոդված 3031. Օրենսգրքի 74-րդ հոդվածում՝

1) 1-ին, 1.1-ին եւ 2-րդ մասերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Գործադուլ հայտարարելու մասին որոշում ընդունելու իրավունք ունի արհեստակցական միությունը՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով: Գործադուլը հայտարարվում է այն դեպքում, եթե այդ մասին որոշումը գաղտնի քվեարկությամբ հավանության է արժանացել՝

1) գործատուի մոտ գործադուլի դեպքում (աշխատողների կոլեկտիվի գործադուլի դեպքում)՝ քվեարկությանը մասնակցած աշխատողների ձայների մեծամասնությամբ, որը չի կարող պակաս լինել աշխատողների ընդհանուր թվի կեսից.

2) գործատուի առանձնացված կամ կառուցվածքային ստորաբաժանումում կամ գրասենյակում կամ գործատուի հիմնարկում գործադուլ հայտարարելիս՝ այդ ստորաբաժանման կամ գրասենյակի կամ հիմնարկի քվեարկությանը մասնակցած աշխատողների ձայների մեծամասնությամբ, որը չի կարող պակաս լինել այդ ստորաբաժանման կամ գրասենյակի կամ հիմնարկի աշխատողների ընդհանուր թվի կեսից: Այն դեպքում, երբ գործատուի առանձնացված կամ կառուցվածքային ստորաբաժանումում կամ գրասենյակում կամ հիմնարկում գործադուլ հայտարարելը խոչընդոտում է գործատուի մյուս ստորաբաժանումների բնականոն գործունեությանը, ապա գործադուլ հայտարարելու որոշումը պետք է հավանության արժանանա այդ ստորաբաժանման կամ գրասենյակի կամ հիմնարկի՝ քվեարկությանը մասնակցած աշխատողների մեծամասնության կողմից, որը չի կարող պակաս լինել գործատուի մոտ աշխատողների ընդհանուր թվի մեկ երրորդից:

1.1. Գործատուի մոտ արհեստակցական միության բացակայության դեպքում, գործադուլ հայտարարելու մասին որոշման ընդունումը եւ գործադուլ հայտարարելու հետ կապված այլ գործառույթների իրականացումն աշխատողների ժողովի (համաժողովի) որոշմամբ կարող են վերապահվել համապատասխան ճյուղային կամ տարածքային արհեստակցական միությանը, իսկ նաեւ համապատասխան ճյուղային կամ տարածքային արհեստակցական միության բացակայության դեպքում գործադուլ հայտարարելու մասին որոշման ընդունումը եւ գործադուլ հայտարարելու հետ կապված այլ գործառույթները կարող են իրականացնել աշխատողների ժողովի (համաժողովի) կողմից ընտրված ներկայացուցիչները (մարմինը):

2. Նախատեսվող գործադուլի մասին արհեստակցական միությունը պարտավոր է գործատուին գրավոր կերպով տեղեկացնել գործադուլն սկսելու օրվանից առնվազն յոթ օր առաջ՝ տեղեկացման հետ միաժամանակ գործատուին տրամադրելով սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված տեղեկությունները պարունակող՝ գործադուլ հայտարարելու մասին որոշումը:».

2) 5-րդ մասի 1-ին կետում «պահանջները» բառից հետո լրացնել «, ընդ որում, հաշտեցման ընթացակարգերի ժամանակ բավարարված պահանջները չեն կարող ներկայացվել» բառերով:

Հոդված 3132. Օրենսգրքի 76-րդ հոդվածում՝

1) 1-ին եւ 2-րդ պարբերությունները համարակալել համապատասխանաբար «1.» եւ «2.» թվագրությամբ.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ մաս.

«3. Գործադուլի ավարտից հետո գործադուլային կոմիտեի գործունեությունը համարվում է դադարած:»:

Հոդված 3233. Օրենսգրքի 77-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունում «մարմինները» բառից հետո լրացնել «՝ գործատուների եւ աշխատողների համապատասխան ներկայացուցիչների հետ բանակցությունների արդյունքում» բառերով:

Հոդված 3334. Օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասում «օրենսգրքով» բառից հետո լրացնել «կամ կոլեկտիվ պայմանագրով» բառերով:

Հոդված 3435. Օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով եւ 1-ին մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ կետ.

«4) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով գործադուլը ճանաչվել է անօրինական:»:

Հոդված ~~35~~36. Օրենսգրքի 82-րդ հոդվածում՝

1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մաս.

«1.1. Եթե սույն օրենսգրքի 78-րդ հոդվածով սահմանված կարգով անօրինական ճանաչված գործադուլը հայտարարելու մասին որոշումն ընդունել են աշխատողների ժողովի (համաժողովի) կողմից ընտրված ներկայացուցիչները (մարմինը) կամ աշխատողների ներկայացուցչական միասնական մարմինը, ապա անօրինական ճանաչված գործադուլին մասնակցած աշխատողները գործատուին պատճառված վնասի համար կրում են համապարտ պատասխանատվություն:».

2) 2-րդ մասում «Կազմակերպության, դրա առանձնացված (կառուցվածքային)» բառերը փոխարինել «Գործատուն, նրա առանձնացված կամ կառուցվածքային» բառերով:

Հոդված ~~36~~37. Օրենսգրքի 83-րդ հոդվածում «որակավորմամբ» բառը փոխարինել «պաշտոնում, որակավորմամբ կամ որակավորում չպահանջող» բառերով:

Հոդված ~~37~~38. Օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 2-րդ կետից հանել «նրա ցանկությամբ՝ նաեւ» բառերը.

2) 3-րդ կետ~~ից~~ում «կազմակերպության» բառը փոխարինել «գործատուի» բառով, իսկ ~~հանել~~ «նրա ցանկությամբ՝ նաեւ» բառերը հանել~~, իսկ «կազմակերպության» բառը փոխարինել «գործատուի» բառով~~.

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-ին կետ.

«3.1) աշխատանքի վայրը.».

4) 4-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4) գործատուի այն կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանումը կամ գրասենյակը կամ հիմնարկը (դրանց առկայության դեպքում), որում աշխատելու է աշխատողը.».

5) 6-րդ կետում «գործառույթները» բառից հետո լրացնել «կամ հղում պաշտոնից բխող գործառույթները սահմանող փաստաթղթին» բառերով.

6) 7-րդ կետում «չափը եւ (կամ)» բառերը փոխարինել «չափը (ներառյալ աշխատավարձից վճարվող հարկերը, սոցիալական կամ օրենքով սահմանված պարտադիր այլ վճարները) եւ»

բառերով, իսկ «ձեւը» բառից հետո լրացնել «(ժամային, օրական, գործավարձային կամ ամսական դրույքաչափ)» բառերով.

7) 8-րդ կետից հանել «եւ այլն» բառերը.

8) 11-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«11) աշխատաժամանակի ռեժիմը (աշխատաժամանակի նորմալ տեւողություն կամ ոչ լրիվ աշխատաժամանակ կամ աշխատաժամանակի կրճատ տեւողություն կամ աշխատաժամանակի գումարային հաշվարկ) եւ շաբաթական տեւողությունը (բացառությամբ աշխատաժամանակի գումարային հաշվարկի).».

9) 13-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝.

«13) անհատական իրավական ակտը կամ աշխատանքային պայմանագիրը ստորագրող անձի պաշտոնը, անունը, ազգանունը.».

10) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 14-րդ կետով.

«14) աշխատանքային հարաբերությունների հետ կապված գործատուի եւ աշխատողի կողմից միմյանց ծանուցելու եղանակները:»:

Հոդված ~~38~~39. Օրենսգրքի 85-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. 1-ին պարբերությունում «մեկի կամ որդեգրողի» բառերը փոխարինել «կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի» բառերով, «օրինակը» բառից հետո լրացնել «, աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո եռօրյա ժամկետում,» բառերով, իսկ «մեկին կամ որդեգրողին» բառերը փոխարինել «կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկին» բառերով.

բ. ~~1-ին մասի~~ 2-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին, 1.2-րդ եւ 1.3-րդ մասեր.

«1.1. Աշխատանքային պայմանագիրը կարող է կնքվել նաեւ փոստային ~~եղանակով~~ կամ էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով այն կողմերի միջեւ փոխանակելով, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու դրա իսկությունը եւ ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է աշխատանքային պայմանագրի կողմից: Սույն մասով սահմանված դեպքերում, աշխատանքային պայմանագիրը ստորագրած կողմը, աշխատանքային պայմանագրի մեկ օրինակը մյուս կողմին է տրամադրում եւ նրա կողմից ստորագրելուց հետո այն ստանում է հետեւյալ մեկ կամ մի քանի եղանակներով՝

1) աշխատանքային պայմանագրի ստորագրված օրինակը պատվիրված նամակով՝ ստանալու մասին ծանուցմամբ, մյուս կողմի տրամադրած (նշած) գտնվելու կամ բնակության վայր ուղարկելու միջոցով.

2) աշխատանքային պայմանագրի ստորագրված օրինակի արտապատկերումը (ֆաքսիմիլ վերարտադրությունը) ֆաքսիմիլ (հեռապատճենային) կապով ուղարկելու միջոցով.

3) աշխատանքային պայմանագրի ստորագրված եւ էլեկտրոնային պատկերատպված (սքանավորված) օրինակը կամ աշխատանքային պայմանագրի էլեկտրոնային թվային ստորագրությամբ օրինակն էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով (այդ թվում՝ «Ինտերնետով հրապարակային եւ անհատական ծանուցման մասին» օրենքով սահմանված պաշտոնական էլեկտրոնային փոստով) ուղարկելու միջոցով:

1.2. Մինչեւ տասնչորս տարեկան անձի հետ սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր կնքելու դեպքում, մինչեւ տասնչորս տարեկան անձի անունից աշխատանքային պայմանագիրը ստանում, ստորագրում եւ դրա մեկ օրինակը գործատուին է հանձնում ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկը կամ խնամակալը:

1.3. Սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր կնքելու դեպքում, աշխատանքային պայմանագիրը համարվում է կնքված այն պահից, երբ պայմանագիրը ստորագրած երկու կողմն էլ ստանում են աշխատանքային պայմանագրի՝ երկու կողմի ստորագրած օրինակը:»:

Հոդված ~~39~~40. Օրենսգրքի 89-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի՝

ա. 2-րդ կետում 2-րդ «տեղեկանք» բառից հետո լրացնել «, բացառությամբ եթե աշխատանքի ընդունվողը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ եւ փաստացի չի գտնվելու Հայաստանի Հանրապետությունում~~.~~» բառերով.

բ. 3-րդ կետից հանել «աշխատանքային» բառը.

գ. 4-րդ կետից հանել «(սանիտարական գրքույկ)» եւ «եւ տեղեկանքի (սանիտարական գրքույկի) ձեւը» բառերը, իսկ «սկզբնական» բառը փոխարինել «նախնական» բառով.

դ. 5-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5) մինչեւ տասնվեց տարեկան անձին աշխատանքի ընդունելիս՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ խնամակալի կամ հոգաբարձուի, իսկ նրանց բացակայության դեպքում՝ մինչեւ տասնվեց տարեկան անձի բնակության վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմնի գրավոր համաձայնությունը.».

2) 1.1-ին մասում «1-ին եւ 3-րդ» բառերը փոխարինել «1-3-րդ» բառերով:

Հոդված 4041. Օրենսգրքի 92-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «վեց» բառը փոխարինել «տասներկու» բառով.

2) 3-րդ մասի 5-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով եւ 3-րդ մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ կետ.

«6) զինվորական հաշվառման պարտականություններ կատարելու, վարժական հավաքների, զինվորական վարժանքների, զորավարժությունների մասնակցելու, զորահավաքային զինվորական ծառայության զորակոչվելու, որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով Հայաստանի Հանրապետության, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կամ պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու ժամանակահատվածները:»:

Հոդված 4142. Օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4243. Օրենսգրքի 99-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«**Հոդված 99. Համատեղությամբ աշխատանքը**

1. Համատեղությամբ աշխատանքը հիմնական աշխատանքից ազատ ժամանակ (բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքի), միեւնույն գործատուի կամ այլ գործատուի մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատողի կատարած աշխատանքն է:

2. Հանրային պաշտոններ եւ հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք համատեղությամբ կատարվող գիտական, կրթական եւ ստեղծագործական աշխատանքը՝ գործատուի ներքին կարգապահական կանոններով կամ կոլեկտիվ պայմանագրով կամ

աշխատանքային պայմանագրով սահմանված կարգով, կարող են կատարել նաեւ իրենց հիմնական աշխատանքի աշխատանքային ժամերի ընթացքում:

3. Համատեղությամբ աշխատանքի համար կնքվող աշխատանքային պայմանագրում նշվում է, որ աշխատանքը կատարվում է համատեղությամբ:

4. Համատեղությամբ աշխատանքի դեպքում՝ հիմնական աշխատանք է համարվում այն աշխատանքը, որը կատարվում է առավել վաղ կնքված աշխատանքային պայմանագրի կամ առավել վաղ ընդունված աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի հիման վրա, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքի:

5. Կողմերի համաձայնությամբ աշխատողի՝ համատեղությամբ աշխատանքը կարող է համարվել հիմնական աշխատանք (որի պարագայում սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված նշումը հանվում է այդ աշխատանքային պայմանագրից), իսկ հիմնական աշխատանքը՝ համատեղությամբ (որի պարագայում աշխատանքային պայմանագրում կատարվում է սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված նշումը):

6. Միեւնույն գործատուի կամ այլ գործատուի մոտ համատեղությամբ աշխատողի ամենամյա արձակուրդը տրամադրվում է հիմնական աշխատանքի համար տրամադրվող ամենամյա արձակուրդի հետ միաժամանակ, բացառությամբ սույն օրենսգրքի 164-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքի:»:

Հոդված 4344. Օրենսգրքի 101-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) «այդ ժամանակահատվածում» բառերը հանել.

2) «հիշատակի օրերին» բառերից հետո լրացնել «, բացառությամբ մինչեւ տասնութ տարեկան անձանց, որոնք այդ օրերին կարող են մասնակցել միայն մարզական եւ մշակութային միջոցառումներին» բառերով:

Հոդված 4445. Օրենսգրքի 105-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «Արտադրության» բառը փոխարինել «Աշխատանքի» բառով.

2) 2-րդ մասում՝

ա. «անվանումները,» բառից հետո՝ լրացնել «աշխատանքային գործառույթները,» բառերով.

բ. 1-ին կետում «հավելավճարների» բառից հետո լրացնել «, լրավճարների» բառով.

գ. 2-րդ կետում «երբ» բառը փոխարինել «եթե կրճատված աշխատաժամանակի վարձատրությունը եւ» բառերով.

դ. 2-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով եւ 2-րդ մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ կետ.

«3) սույն մասի 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված դեպքերի միաժամանակյա առկայության դեպքում, երբ մյուս պայմանները պահպանվում են:»:

Հոդված 4~~5~~46. Օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասում «նույն աշխատավայրում» բառերը փոխարինել «իր մոտ» բառերով:

Հոդված 4~~6~~47. Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1.1-ին մասում «կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19)» բառերը փոխարինել «վարակիչ հիվանդություններով» բառերով, իսկ «կորոնավիրուսային հիվանդության (COVID-19)» բառերը՝ «վարակիչ հիվանդությունների» բառերով:

Հոդված 4~~7~~48. Օրենսգրքի 108.1-ին հոդվածի 1-ին մասում՝

1) «պահպանվում է,» բառերից հետո լրացնել «աշխատողի (բացառությամբ հանրային ծառայության մեջ գտնվող անձի) ~~վարձատրությունը~~վարձատրության հարցը որոշվում է կողմերի համաձայնությամբ,» բառերով.

2) հանել «նաեւ» եւ «անվանական» բառերը~~.~~:

~~3) «չափը» բառից հետո լրացնել «(ներառելով նաեւ աշխատավարձից վճարվող հարկերը, սոցիալական կամ օրենքով սահմանված պարտադիր այլ վճարները)» բառերով:~~

Հոդված 4~~8~~49. Օրենսգրքի 108.2-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 2-րդ նախադասությունում «ժամանակահատվածում» բառից հետո լրացնել «գործատուի կողմից աշխատողի (բացառությամբ հանրային ծառայության մեջ գտնվող անձի) ~~վարձատրությունը~~ վարձատրության հարցը որոշվում է կողմերի համաձայնությամբ, իսկ» բառերով, իսկ «աշխատավարձը» բառը փոխարինել «վարձատրությունը» բառով.

2) 4-րդ մասում «լուծելու՝» բառից հետո լրացնել «սույն օրենսգրքով կամ այլ» բառերով:

Հոդված 4~~9~~50. Օրենսգրքի 109-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. 2-րդ կետում «պայմանագրի» բառից առաջ լրացնել «աշխատանքային» բառով.

բ. 8-րդ կետում «մեկը, որդեգրողը» բառերը փոխարինել «կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկը» բառերով, իսկ «խնամակալը» բառից հետո լրացնել «(նրանց բացակայության դեպքում՝ մինչեւ տասնվեց տարեկան անձի բնակության վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմինը)» բառերով.

գ. 10-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

դ. 12-րդ կետում «3-րդ եւ (կամ) 4-րդ» բառերը փոխարինել «3-5-րդ» բառերով, իսկ «աշխատողի ներկայացրած» բառերը՝ «ներկայացված» բառով.

ե. լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 12.2-րդ կետով.

«12.2) օրենքի ուժով՝

ա. սույն օրենսգրքի 111-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված այն դեպքում, երբ գործատուն աշխատողին չի ծանուցել որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին եւ չի ընդունել որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին համապատասխան անհատական իրավական ակտ, իսկ աշխատանքային հարաբերությունները չեն շարունակվել.

բ. սույն օրենսգրքի 111-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված այն դեպքում, երբ աշխատողը չի ծանուցել գործատուին որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին եւ աշխատանքային պայմանագրով նախատեսված վերջին աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրը աշխատողը չի ներկայացել աշխատանքի, իսկ գործատուն չի ընդունել որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտ.

գ. սույն օրենսգրքի 112-րդ հոդվածի 3.2-րդ մասով սահմանված դեպքում.

դ. սույն օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքում.».

2) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածով նախատեսված դեպքերում աշխատողին աշխատանքից ազատելը ձեւակերպվում է գործատուի ընդունած անհատական իրավական ակտով, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 12.2-րդ կետով նախատեսված դեպքերի:».

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ եւ 4-րդ մասերով.

«3. Աշխատողի վերջին աշխատանքային օր է համարվում՝

1) աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում՝ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետի վերջին օրը, եթե այդ ժամկետը լրանալուց հետո աշխատանքային հարաբերությունները չեն շարունակվում սույն օրենսգրքի 111-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան.

2) սույն օրենսգրքի 112-րդ հոդվածի 3.2-րդ մասով սահմանված դեպքում՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին ծանուցման մեջ նշված ժամկետի վերջին օրը.

~~3) աշխատողի մահվան դեպքում՝ սույն օրենսգրքի 127-րդ հոդվածով սահմանված օրը.~~

~~4~~3) ֆիզիկական անձ գործատուի մահվան դեպքում՝ սույն օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված օրը.

~~5~~4) սույն մասի 1-~~4~~3-րդ կետերով չնախատեսված այլ դեպքերում՝ սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան որպես աշխատանքային հարաբերությունների դադարման ժամկետ հանդիսացող եւ աշխատողին աշխատանքից ազատելու մասին գործատուի անհատական իրավական ակտում նշված օրը, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով:

4. Իրավաբանական անձանց գործադիր մարմինների (կոլեգիալ եւ միանձնյա) անդամների լիազորությունների դադարեցման եւ նրանց հետ կնքված աշխատանքային պայմանագրերի լուծման առանձնահատկությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով եւ այդ իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով:»:

Հոդված ~~50~~51. Օրենսգրքի 111-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությ~~ամբ~~ուններով.

«Գործատուի կողմից սույն մասով սահմանված ծանուցման պահանջը չպահպանելու կամ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտ չընդունելու դեպքում, աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված դրանով սահմանված ժամկետը լրանալու հաջորդ օրը, եթե աշխատանքային հարաբերությունները չեն շարունակվել՝ աշխատողը չի ներկայացել աշխատանքի աշխատանքային պայմանագրով նախատեսված վերջին աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրը կամ գործատուն չի ցանկացել, որպեսզի աշխատանքային հարաբերությունները շարունակվեն եւ աշխատողին թույլ չի տվել շարունակելու աշխատանքը: Այդ

դեպքում գործատուն չի ազատվում սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տուժանքի վճարման պարտականությունից:».

2) 4-րդ մասում «դուրս չի եկել» բառերը փոխարինել «չի ներկայացել» բառերով.

3) 5-րդ մասը «ժամկետով:» բառից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Սույն մասը չի տարածվում սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի վրա:»:

Հոդված ~~5~~152. Օրենսգրքի 112-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել 3-րդ նախադասությունը.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին եւ 2.2-րդ մասերով.

«2.1. Գործատուի առարկության բացակայության դեպքում աշխատանքային պայմանագիրը կարող է լուծվել աշխատողի ծանուցման մեջ (աշխատանքից ազատվելու մասին դիմումում) նշված այլ ժամկետում՝ չպահպանելով սույն հոդվածի 1-2-րդ մասերով սահմանված ժամկետները: Աշխատանքային պայմանագիրը աշխատողի ծանուցման մեջ (աշխատանքից ազատվելու մասին դիմումում) նշված այլ ժամկետում լուծելու վերաբերյալ գործատուի առարկության դեպքում աշխատանքային պայմանագիրը լուծվում է սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով սահմանված ժամկետները լրանալուց հետո:

2.2. Աշխատողի կողմից սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով նախատեսված ժամկետները չպահպանելու եւ աշխատանքային պայմանագիրը աշխատողի ծանուցման մեջ (աշխատանքից ազատվելու մասին դիմումում) նշված այլ ժամկետում լուծելու՝ վերաբերյալ գործատուի առարկության դեպքում՝ աշխատողը պարտավոր է գործատուին վճարել տուժանք՝ ծանուցման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար՝ միջին օրական աշխատավարձի չափով, բայց ոչ ավելի, քան միջին ամսական աշխատավարձը:».

3) 3-րդ մասում «ընթացքում» բառից հետո լրացնել «, (բացառությամբ այն դեպքի, եթե աշխատողը ցանկանում է աշխատանքից ազատվել աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը ներկայացնելու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում)» բառերով.

4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-ին եւ 3.2-րդ մասեր.

«3.1. Սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով սահմանված ծանուցման ժամկետը լրանալուց հետո աշխատողն իրավունք ունի դադարեցնելու աշխատանքը, իսկ գործատուն պարտավոր է

ձեւակերպել աշխատանքային պայմանագրի լուծումը եւ աշխատողի հետ կատարել վերջնահաշվարկ:

3.2. Եթե սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով սահմանված ծանուցումներում նշված ժամկետը լրանալուց հետո գործատուն չի ընդունում աշխատանքային հարաբերությունները դադարեցնելու մասին համապատասխան անհատական իրավական ակտ, ապա աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված ծանուցմամբ սահմանված ժամկետը լրանալու հաջորդ օրվանից:»:

Հոդված ~~52~~53. Օրենսգրքի 113-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) գործատուի լուծարման (գործունեության դադարման), պետական հաշվառումից հանվելու, նոտար գործատուի դեպքում՝ պաշտոնից ազատվելու դեպքերում.~~Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած իրավաբանական անձի, օտարերկրյա պետությունում գրանցված օտարերկրյա կազմակերպության լուծարման, ինչպես նաեւ պետական մարմնի, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված հիմնարկի, օտարերկրյա պետության դիվանագիտական ներկայացուցչության, միջազգային կազմակերպության, օտարերկրյա պետությունում գրանցված կազմակերպության կամ միջազգային կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված կամ հաշվառված առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի՝ օրենքով սահմանված կարգով գործունեության դադարման կամ պետական հաշվառումից հանվելու (բացառությամբ, երբ այդ անձանց իրավունքները եւ պարտականություններն իրավահաջորդության կարգով անցնում են այլ անձանց), անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման կամ պետական հաշվառումից հանվելու, նոտարի պաշտոնից ազատվելու դեպքերում.~~».

բ. 2-րդ կետում «արտադրության» բառը փոխարինել «աշխատանքի» բառով.

գ. 7-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«7) աշխատողի երկարատեւ անաշխատունակության դեպքում (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության մեջ է գտնվել ավելի քան վեց ամիս անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 180 օր՝ չհաշված հղիության եւ ծննդաբերության արձակուրդի օրերը).».

դ. 8-րդ կետում «գտնվելու» բառից հետո լրացնել «կամ աշխատավայրում կամ աշխատավայրից դուրս աշխատանքային գործառույթներն իրականացնելու» բառերով.

ե. 11-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մաս.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելիս, այլ հավասար պայմանների առկայության դեպքում, աշխատանքում մնալու նախապատվության իրավունքից օգտվում են հաշմանդամության կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողը, ինչպես նաեւ ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակմամբ հաշմանդամության կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողի կամ զոհված (մահացած) կամ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի ընտանիքի անդամը (ամուսին, երեխա, հայր, մայր, հարազատ քույր, հարազատ եղբայր, տատ, պապ), եթե նա՝

1) զբաղված է ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակմամբ հաշմանդամության կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողի խնամքով կամ զոհված (մահացած) կամ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի երեխաների, թոռների, եղբայրների կամ քույրերի խնամքով՝ մինչեւ վերջիններիս տասնութ տարին լրանալը.

2) ունի հաշմանդամություն.

3) ընտանիքի՝ սույն օրենսգրքով սահմանված տարիքի հասած միակ գործունակ աշխատողն է:

Կոլեկտիվ պայմանագրով կարող են սահմանվել այլ հավասար պայմաններում աշխատանքում մնալու նախապատվության իրավունքից օգտվող աշխատողների այլ կատեգորիաներ:»:

3) 2-րդ մասում «, 7-րդ եւ 11-րդ» բառերը փոխարինել «եւ 7-րդ» բառերով:

Հոդված 5354. Օրենսգրքի 114-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասում «Կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման) հետեւանքով» բառերը փոխարինել «Սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքերում» բառերով.

2) 4-րդ մասի 4-րդ կետում «ռասան,» բառից հետո լրացնել «մաշկի գույնը,» բառերով, «դավանանքը» բառը փոխարինել «կրոնը» բառով, իսկ «անդամակցելը» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքները,

բացառությամբ սույն օրենսգրքով եւ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի» բառերով:

Հոդված ~~5~~455. Օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունում «, 7-րդ եւ 11-րդ» բառերը փոխարինել «եւ 7-րդ» բառերով:

Հոդված ~~5~~556. Օրենսգրքի 116-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «Կազմակերպության լուծարման կամ աշխատողների թվաքանակի եւ (կամ)» բառերը փոխարինել «Սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքերում կամ աշխատողների թվաքանակի կամ» բառերով.

2) 2-րդ մասում «եւ» շաղկապը փոխարինել «, այդ թվում՝» բառերով:

Հոդված ~~5~~657. Օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով չնախատեսված դեպքերում ժամանակավոր անաշխատունակ դարձած աշխատողները պահպանում են իրենց աշխատատեղը եւ պաշտոնը, եթե նրանք ժամանակավոր անաշխատունակության մեջ են գտնվել ոչ ավելի քան վեց ամիս անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ոչ ավելի, քան 180 օր՝ չհաշված հղիության եւ ծննդաբերության արձակուրդի օրերը:»:

Հոդված ~~5~~758. Օրենսգրքի 119-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. «սույն օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան» բառերը փոխարինել «ինչպես նաեւ այդ լիազորությունների ավարտից հետո վեց ամսվա ընթացքում» բառերով.

բ. «աշխատանքից» բառից հետո լրացնել «գործատուի նախաձեռնությամբ» բառերը.

2) 2-րդ մասում «ներկայացուցչին» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ սույն հոդվածի 4-րդ մասում նշված աշխատողին» բառերը.

3) 3-րդ մասից հանել 2-րդ նախադասությունը.

4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-ին մաս.

«3.1. Կազմակերպությունում գործող աշխատողների ներկայացուցչական մարմիններում ընտրված ~~աշխատողներն~~աշխատողները տարվա ընթացքում ազատվում են աշխատանքային

պարտականությունների կատարումից մինչեւ 10 աշխատանքային օր ժամկետով՝ աշխատողների ներկայացուցչական մարմինների միջոցառումներին մասնակցելու կամ որպես աշխատողների ներկայացուցչական մարմնի անդամ՝ որակավորումը բարձրացնելու համար: Այդ ժամանակահատվածների համար աշխատողին վճարվում է նրա միջին օրական աշխատավարձի առնվազն 50 տոկոսի ~~ժամային աշխատավարձի առնվազն երկու երրորդի~~ չափով:»:

5) 4-րդ մասը «կիրառվել» բառից հետո լրացնել «նաեւ» բառով, իսկ «չհամարվող» բառից հետո՝ «եւ սույն հոդվածի 1-ին մասում չնշված այլ» բառերով:

~~***Հոդված 58.*** Օրենսգրքի 122-րդ հոդվածի 3-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով եւ Օրենսգրքի 122-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ եւ 5-րդ կետերով.~~

~~«4) չի պահպանել (խախտել է) աշխատողների անվտանգության ապահովման եւ առողջության պահպանության մասին իրավական ակտերի, աշխատանքների կազմակերպման եւ իրականացման կանոնների, հրահանգների պահանջները, որն առաջացրել է կամ կարող էր առաջացնել ծանր հետեւանքներ՝ վտանգելով անձանց կյանքն ու առողջությունը կամ իրական սպառնալիք ստեղծելով անձանց կյանքի եւ առողջության համար կամ նրանց կյանքին ու առողջությանը պատճառելով վնաս.~~

~~5) անօրինական (առանց համաձայնեցման կամ տեղեկացման) օգտագործել է գործատուի կամ այլ աշխատողների համակարգչային տեխնիկան կամ տեղեկատվական համակարգերը (տեղեկատվական համակարգեր մուտք գործելու միջոցներ (մուտքանուն, գաղտնաբառ եւ այլն)), որի միջոցով ձեռք է բերել աշխատանքային կամ անձնական տվյալներ, իրականացրել է տվյալների անօրինական օգտագործում, ձայնագրում, ոչնչացում, վերափոխում, ուղեփակում, կրկնօրինակում, տարածում կամ թվային տեխնոլոգիաների միջամտությամբ իրականացրել է գործողություններ, այդ թվում՝ վիրուսային կամ ծրագրային կարգաբերումներ, որոնք կարող էին խաթարել կամ խաթարել են գործատուի բնականոն աշխատանքը:»:~~

Հոդված 59. Օրենսգրքի 122-րդ հոդվածում՝

1) 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) կատարել է այնպիսի արարք, որի հետեւանքով գործատուն կրել է կամ կարող էր կրել նյութական վնաս.».

2) 3-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով եւ Օրենսգրքի 122-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ եւ 5-րդ կետերով.

«4) չի պահպանել (խախտել է) աշխատողների անվտանգության ապահովման եւ առողջության պահպանության մասին իրավական ակտերի, աշխատանքների կազմակերպման եւ իրականացման կանոնների, հրահանգների պահանջները, որն առաջացրել է կամ կարող էր առաջացնել ծանր հետեւանքներ՝ վտանգելով անձանց կյանքն ու առողջությունը կամ իրական սպառնալիք ստեղծելով անձանց կյանքի եւ առողջության համար կամ նրանց կյանքին ու առողջությանը պատճառելով վնաս.

5) անօրինական (առանց համաձայնեցման կամ տեղեկացման) օգտագործել է գործատուի կամ այլ աշխատողների համակարգչային տեխնիկան կամ տեղեկատվական համակարգերը (տեղեկատվական համակարգեր մուտք գործելու միջոցներ (մուտքանուն, գաղտնաբառ եւ այլն)), որի միջոցով ձեռք է բերել աշխատանքային կամ անձնական տվյալներ, իրականացրել է տվյալների անօրինական օգտագործում, ձայնագրում, ոչնչացում, վերափոխում, ուղեփակում, կրկնօրինակում, տարածում կամ թվային տեխնոլոգիաների միջամտությամբ իրականացրել է գործողություններ, այդ թվում՝ վիրուսային կամ ծրագրային կարգաբերումներ, որոնք կարող էին խաթարել կամ խաթարել են գործատուի բնականոն աշխատանքը:»:

Հոդված ~~59~~60. Օրենսգրքի 123-րդ հոդվածում «մասի» բառից հետո լրացնել «4-րդ,» բառով:

Հոդված ~~60~~61. Օրենսգրքի 127-րդ հոդվածում «օրվանից» ~~բառից հետո լրացնել~~բառը փոխարինել «~~հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում~~օրվան հաջորդող օրվանից՝ մահվան փաստը գրանցող լիազոր մարմնի տրամադրած փաստաթղթի հիման վրա» բառերով:

Հոդված ~~61~~62. Օրենսգրքի 128-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Ֆիզիկական անձ գործատուի մահվան դեպքում աշխատանքային պայմանագիրը ~~լուծվում է՝~~համարվում է լուծված մահվան փաստը գրանցող լիազոր մարմնի փաստաթղթում նշված մահվան ~~օրվանից հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում~~օրվան հաջորդող օրվանից:».

2) 2-րդ եւ 3-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~62~~63. Օրենսգրքի 129-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «, 7-րդ եւ 11-րդ» բառերը փոխարինել «եւ 7-րդ» բառերով.

2) 2-րդ մասում «պայմանագրով» բառից հետո լրացնել «կամ կողմերի գրավոր համաձայնությամբ» բառերով, իսկ «եւ (կամ)» բառերը փոխարինել «(կամ)» բառով:

Հոդված 6364. Օրենսգրքի 130-րդ հոդվածի 1.1-ին մասում «գործատուի մոտ» բառերից հետո լրացնել «առանց աշխատանքային պայմանագրի լուծման» բառերով:

Հոդված 6465. Օրենսգրքի 134-րդ հոդվածում՝

1) 4-րդ կետում «կազմակերպության ներսում» բառերը փոխարինել «գործատուի մոտ» բառերով.

2) 5-րդ կետում «հատուկ» բառը փոխարինել «այդպիսի» բառով.

3) 7-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«7) աշխատողի անձնական տվյալները փոխանցելիս, այդ թվում՝ աշխատողների ներկայացուցիչներին, սահմանափակվել միայն այն տվյալներով, որոնց փոխանցումը բխում է անձնական տվյալների մշակման նպատակներից կամ անհրաժեշտ է այդ նպատակների իրագործման համար:»:

Հոդված 6566. Օրենսգրքի 135-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«**Հոդված 135. Աշխատողի իրավունքները՝ գործատուի մոտ պահպանվող անձնական տվյալների պաշտպանության եւ դրանց վերաբերյալ տեղեկություններ ստանալու հետ կապված**».

2) 1-ին մասում «Գործատուի մոտ պահպանվող անձնական տվյալների անվտանգության ապահովման նպատակով աշխատողն իրավունք ունի՝» բառերը փոխարինել «1. Աշխատողն իրավունք ունի անձամբ կամ լիազորագրով հանդես եկող ներկայացուցչի (իսկ մինչեւ տասնվեց տարեկան աշխատողը՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ խնամակալի կամ հոգաբարձուի) գրավոր հարցման հիման վրա ստանալու ամբողջական տեղեկատվություն գործատուի մոտ պահպանվող իր անձնական տվյալների եւ դրանց մշակման վերաբերյալ, այդ թվում՝» բառերով.

3) 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~66~~67. Օրենսգրքի 138-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 6-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«6) աշխատավայրում կամ ուսումնական հաստատություններում աշխատողի վերապատրաստման, վերաորակավորման, մասնագիտական ուսուցման կամ որակավորման բարձրացման համար անհրաժեշտ ժամանակահատվածը, բացառությամբ աշխատողի նախաձեռնությամբ վերապատրաստման, վերաորակավորման, մասնագիտական ուսուցման կամ որակավորման բարձրացման այն ժամանակահատվածի, երբ վարձատրություն չի նախատեսվում.».

2) 2-րդ մասի 1-ին կետում «ժամանակահատվածը» բառից հետո լրացնել «՝ մեկ աշխատանքային տարվա ընթացքում ոչ ավելի, քան 30 օր» բառերով:

Հոդված ~~67~~68. Օրենսգրքի 139-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «, այլ իրավական ակտերով եւ կոլեկտիվ պայմանագրով» բառերը փոխարինել «եւ այլ նորմատիվ իրավական ակտերով» բառերով.

2) 5-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Սույն մասով սահմանված պահանջի կատարման պարտականությունը տարբեր գործատուների մոտ երկու եւ ավելի աշխատանքային պայմանագրերով աշխատելու դեպքում կրում է աշխատողը, բացառությամբ այն դեպքի, երբ գործատուն աշխատողի կողմից գրավոր տեղեկացվել է աշխատողի համատեղությամբ աշխատելու վերաբերյալ:»:

Հոդված ~~68~~69. Օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետում «չորս ժամ» բառերից հետո լրացնել «՝ պարտադիր կրթության համար սահմանված ժամերից դուրս» բառերով.

2) 2-րդ կետում «վեց ժամ» բառերից հետո լրացնել «՝ պարտադիր կրթության համար սահմանված ժամերից դուրս» բառերով.

3) 3-րդ եւ 4-րդ կետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«3) տասներկուսից մինչեւ տասնհինգ տարեկան երեխաների համար՝ օրական մինչեւ չորս ժամ, սակայն շաբաթվա ընթացքում ոչ ավելի, քան տասներկու ժամ՝ պարտադիր կրթության համար սահմանված ժամերից դուրս.

4) տասնհինգից մինչեւ տասնվեց տարեկան երեխաների համար՝ շաբաթական մինչեւ 24 ժամ՝ պարտադիր կրթության համար սահմանված ժամերից դուրս.».

4) 5-րդ կետում «36 ժամ» բառերից հետո լրացնել «՝ պարտադիր կրթության համար սահմանված ժամերից դուրս» բառերով.

5) 6-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով եւ 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ կետով.

«7) Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ դեպքերում:»:

Հոդված ~~69~~70. Օրենսգրքի 141-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 3-րդ կետում «մեկ» բառը փոխարինել «երկու» բառով.

2) 2-րդ մասի վերջին նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Սույն հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով սահմանված ոչ լրիվ աշխատաժամանակի հատկացման կարգը սահմանվում է կողմերի համաձայնությամբ եւ կարող է ներառվել աշխատանքային պայմանագրում:»:

Հոդված ~~70~~71. Օրենսգրքի 142-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին նախադասությունում «կազմակերպության» բառ~~երը~~ը փոխարինել «գործատուի» բառ~~երով~~ով.

2) 2-րդ մասում «արտադրության» բառից հետո լրացնել «կամ աշխատանքի» բառերով.

3) 3-րդ մասում «Կազմակերպության աշխատանքի» բառերը փոխարինել «Աշխատանքի» բառով.

4) 6-րդ մասում՝

ա. հանել «(կամ)» բառը.

բ. լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Աշխատողների օրական եւ շաբաթական աշխատաժամանակի հաշվառումն իրականացվում է թղթային կամ էլեկտրոնային տարբերակով եւ հիմք է հանդիսանում աշխատավարձի հաշվարկման համար:»:

Հոդված ~~71~~72. Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասում «կազմակերպության» բառը փոխարինել «գործատուի» բառով:

Հոդված ~~72~~73. Օրենսգրքի 144-րդ հոդվածում՝

1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին մասով՝.

«2.1. Սույն օրենսգրքի 145-րդ հոդվածով նախատեսված բացառիկ դեպքերի բացակայության պարագայում աշխատողը կարող է ներգրավվել արտաժամյա աշխատանքի միայն իր գրավոր համաձայնության պարագայում:».

2) 3-րդ մասի 2-րդ կետում «արտադրությունից» բառից հետո լրացնել «կամ աշխատանքից» բառերով.

3) 4-րդ մասում՝

ա. առաջին նախադասությունում «իրենց» բառից հետո լրացնել «գրավոր» բառը.

բ. երկրորդ նախադասությունում «աշխատանքի» բառից հետո լրացնել «միայն իրենց գրավոր համաձայնությամբ» բառերը.

4) 5-րդ մասում՝

ա. «կազմակերպության» բառը փոխարինել «գործատուի» բառով.

բ. հանել 2-րդ նախադասությունը.

գ. լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասություններ.

«Սույն հոդվածի իմաստով գործատուի ղեկավար պաշտոնատար անձինք կարող են համարվել միայն այն աշխատողները, որոնք պաշտոն են զբաղեցնում գործատուի կառավարման մարմիններում կամ որոնք, որպես իրենց պաշտոնական կարգավիճակից բխող աշխատանք, իրականացնում են գործատուի կառավարման կամ ընթացիկ գործունեության ընդհանուր ղեկավարման գործառույթներ կամ հանդիսանում են այդ գործատուի կառուցվածքային կամ տարածքային կամ առանձնացված որեւէ ստորաբաժանման (դեպարտամենտի, վարչության, բաժնի, մասնաճյուղի, ներկայացուցչության կամ այլ միավորի) ղեկավարը՝ բացառությամբ սպասարկման եւ տեխնիկական աջակցության գործառույթներ իրականացնող այն ստորաբաժանումների ղեկավարների, որոնք ուղղակիորեն ներգրավված չեն գործատուի գործառույթների իրականացմանը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Գործատուի ղեկավար պաշտոնների ցանկը սահմանվում է օրենքներով կամ գործատուի ներքին իրավական ակտերով: Այդ անձանց աշխատանքը համարվում է չնորմավորված:»:

Հոդված 7374. Օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասում «Գործատուի պահանջով» բառերը փոխարինել «Սույն օրենսգրքի 1454-րդ հոդվածի 2-րդ եւ 2.1-ին մասերով նախատեսված դեպքերում» բառերով:

Հոդված 75. Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասում «եւ ոչ լրիվ աշխատանքային ժամանակի պայմաններով» բառերը փոխարինել «, ոչ լրիվ աշխատանքային ժամանակի պայմաններով կամ հերթափոխով» բառերով:

Հոդված ~~74~~76. Օրենսգրքի 149-րդ հոդվածի 3-րդ մասում «եւ 2-րդ մասերով» բառերը փոխարինել «մասով» բառով, իսկ «140-րդ, 141-րդ հոդվածներով» բառերը փոխարինել «140-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 141-րդ հոդվածով» բառերով:

Հոդված ~~75~~77. Օրենսգրքի 152-րդ հոդվածում՝

1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մաս.

«1.1. Եթե աշխատանքային օրվա տեւողությունը չի գերազանցում չորս ժամը, ապա աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում հանգստանալու եւ սնվելու համար աշխատողին սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տեւողությամբ ընդմիջում կարող է տրամադրվել կողմերի համաձայնությամբ, բացառությամբ հղի կանանց եւ մինչեւ տասնութ տարեկան աշխատողների, որոնց հանգստանալու եւ սնվելու համար ընդմիջումը տրամադրվում է ~~աշխատանքային օրվա (հերթափոխի) կեսի ավարտից հետո, եթե աշխատանքային օրվա (հերթափոխի) տեւողությունը գերազանցում է 3 ժամը~~ իրենց նախընտրած ժամին:».

2) 4-րդ մասում «արտադրության» բառից հետո լրացնել «կամ աշխատանքի» բառերով:

Հոդված ~~76~~78. Օրենսգրքի 153-րդ հոդվածի 3-րդ մասում «կամ առողջության համար բացասական ներգործություն ունեցող վտանգավոր այլ պայմաններում» բառերը փոխարինել «պայմաններում կամ այն դեպքերում, երբ աշխատավայրում վնասակար գործոնների սահմանային թույլատրելի մակարդակը տեխնիկական կամ այլ պատճառներով հնարավոր չէ իջեցնել աշխատողների առողջության եւ անվտանգության մասին իրավական ակտերով սահմանված առողջության համար անվտանգ մակարդակի» բառերով:

Հոդված ~~77~~79. Օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «տասնչորսից» բառը:

Հոդված ~~78~~80. Օրենսգրքի 159-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «Ոչ լրիվ աշխատաժամանակով, ինչպես նաեւ» բառերը փոխարինել «Աշխատաժամանակի կրճատ տեւողությամբ կամ ոչ լրիվ աշխատաժամանակով կամ աշխատաժամանակի գումարային հաշվարկով աշխատող կամ» բառերով.

2) 3-րդ մասից հանել «, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի» բառերը:

~~***Հոդված 79.*** Օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.~~

~~«2) սույն օրենսգրքի 144-րդ հոդվածի 5-րդ մասում նշված չնորմավորված աշխատանք կատարողներին.»:~~

Հոդված ~~80~~81. Օրենսգրքի 164-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Յուրաքանչյուր աշխատանքային տարվա համար ամենամյա արձակուրդը տրամադրվում է տվյալ աշխատանքային տարում՝ ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին աշխատողի կողմից գործատուին ներկայացված դիմումի հիման վրա գործատուի ընդունած անհատական իրավական ակտով, բացառությամբ սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված դեպքի: Աշխատանքային տարին սկսվում է աշխատողի աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով նախատեսված օրն աշխատանքի անցնելու օրվանից եւ ավարտվում է հաջորդ օրացուցային տարվա համապատասխան ամսին եւ ամսաթվին:».

2) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝.

«2. Աշխատանքի առաջին տարվա համար ամենամյա արձակուրդը տրամադրվում է տվյալ գործատուի մոտ անընդհատ աշխատանքի վեց ամիսը լրանալուց հետո, բացառությամբ համատեղությամբ աշխատողների, որոնց ամենամյա արձակուրդը տրամադրվում է սույն օրենսգրքի 99-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պահանջներին համապատասխան, ինչպես նաեւ սույն օրենսգրքով սահմանված այլ դեպքերի: Կողմերի համաձայնությամբ ամենամյա արձակուրդը կարող է տրամադրվել նաեւ մինչեւ աշխատողի՝ տվյալ գործատուի մոտ անընդհատ աշխատանքի վեց ամիսը լրանալը: Երկրորդ եւ յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային տարվա համար ամենամյա արձակուրդը տրամադրվում է աշխատանքային տարվա ցանկացած ժամանակ՝ ամենամյա արձակուրդի տրամադրման հերթականությանը համապատասխան:

Հերթականության կարգը սահմանվում է կոլեկտիվ պայմանագրով, իսկ նման պայմանագրի բացակայության դեպքում՝ կողմերի համաձայնությամբ:».

3) 6-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«6. Ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին եւ պրոֆեսորադասախոսական կազմին՝ բացառությամբ վարչական աշխատողների, ամենամյա արձակուրդը տրամադրվում է սովորողների եւ ուսանողների ամառային արձակուրդի ժամանակ, այդ թվում՝ աշխատանքային առաջին տարում, անկախ այն հանգամանքից, թե երբ են այդ աշխատողները սկսել իրենց աշխատանքը:».

4) 7-րդ մասում «դիպլոմային» բառից հետո լրացնել «կամ ավարտական» բառերով, իսկ «աշխատանքների կատարման» բառերից հետո՝ «, ուսումնական պլանով նախատեսված պրակտիկաների» բառերով.

5) 8-րդ մասում «հաշմանդամին» բառը փոխարինել «հաշմանդամություն ունեցող անձին» բառերով.

6) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 9-րդ մաս.

«9. Ընտանիքում բռնության ենթարկված աշխատող անձանց ամենամյա արձակուրդն իրենց ցանկությամբ տրամադրվում է անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշման ժամանակահատվածում:».

«9. Աշխատավայրում բռնության կամ սեռական ոտնձգության ենթարկված աշխատողին իր ցանկությամբ տրամադրվում է ամենամյա արձակուրդ, անկախ աշխատանքի կատարման ժամանակահատվածից:».

7) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 10-րդ մաս.

«10. Եթե աշխատողը երկուսուկես աշխատանքային տարի անընդմեջ խուսափում է կամ հրաժարվում է իրեն հասանելիք ամենամյա արձակուրդի կամ դրա մի մասի օգտագործումից՝ չներկայացնելով ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին դիմում, եւ այդ դիմումի չներկայացնելը պայմանավորված չէ աշխատողի՝ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում գտնվելու կամ սույն օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով սահմանված որեւէ հանգամանքով, ապա տվյալ աշխատողին ամենամյա արձակուրդի տրամադրման ժամանակահատվածը որոշվում է գործատուի կողմից՝ հաշվի առնելով սույն հոդվածի 4-րդ, 6-րդ եւ 8-րդ մասերով սահմանված պահանջները, իսկ ամենամյա արձակուրդը կամ դրա մի մասը տրամադրելու մասին գործատուի անհատական

իրավական ակտն ընդունվում է առանց աշխատողի՝ ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին դիմումի առկայության:»:

Հոդված 8182. Օրենսգրքի 165-րդ հոդվածում՝

1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին կետ.

«4.1) մեկ աշխատանքային տարվա ընթացքում մինչեւ 15 օր չվճարվող արձակուրդի ժամանակահատվածը.».

2) 5-րդ կետում «աշխատանքին վերադառնալու» բառերը փոխարինել «աշխատանքում վերականգնվելու» բառերով:

Հոդված 8283. Օրենսգրքի 167-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Ամենամյա արձակուրդի կամ դրա մի մասի տեղափոխումը թույլատրվում է միայն աշխատողի գրավոր դիմումով կամ գրավոր համաձայնությամբ, այդ թվում, երբ աշխատողը՝

1) գտնվում է ժամանակավոր անաշխատունակության վիճակում.

2) ձեռք է բերում սույն օրենսգրքի 171-րդ հոդվածով նախատեսված նպատակային արձակուրդի իրավունք.

3) մասնակցում է տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների եւ արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետեւանքների անհապաղ վերացման աշխատանքներին՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ կարգով է նա ներգրավվել այդ աշխատանքներում.

4) մասնակցում է վարժական հավաքներին կամ զինվորական վարժանքներին կամ զորավարժություններին կամ իրականացնում է զորահավաքային զինվորական ծառայությունն կամ որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով մասնակցում է Հայաստանի Հանրապետության, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կամ պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին:».

2) 2-րդ մասում՝ «հնարավոր» եւ «տեղափոխվում է» բառերից առաջ լրացնել «կամ դրա մի մասը» բառերով.

3) 3-րդ մասում «Տեղափոխված ամենամյա արձակուրդը» բառերից հետո լրացնել «կամ ամենամյա արձակուրդի տեղափոխված մասը» բառերը, իսկ «ամենամյա արձակուրդի» բառերը փոխարինել «ամենամյա արձակուրդը կամ դրա» բառերով.

4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ մաս.

«4. Աշխատողը պահպանում է ամենամյա արձակուրդի իրավունքը նույնիսկ այն դեպքում, երբ աշխատողին ամենամյա արձակուրդը չի տրամադրվել սույն օրենսգրքով սահմանված ժամկետներում եւ կարգով:».

5) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ մաս.

«5. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում աշխատողին ամենամյա արձակուրդը կամ ամենամյա արձակուրդի տեղափոխված մասը չտրամադրելու դեպքում գործատուն պարտավոր է այդ ժամկետից հետո կետանցված յուրաքանչյուր օրվա համար աշխատողին վճարել տուժանք՝ աշխատողի միջին ամսական աշխատավարձի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի քան միջին ամսական աշխատավարձը, բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատողին ամենամյա արձակուրդը կամ ամենամյա արձակուրդի տեղափոխված մասը չտրամադրելը պայմանավորված է եղել նշված ամբողջ ժամանակահատվածում աշխատողի՝ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում գտնվելու կամ սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կամ 4-րդ կետերով սահմանված որեւէ հանգամանքով:»:

Հոդված 8384. Օրենսգրքի 168-րդ հոդվածում «113-րդ հոդվածի 1-ին մասի» բառերից հետո լրացնել «1-ին, » բառով:

Հոդված 8485. Օրենսգրքի 174-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «Միջին մասնագիտական եւ բարձրագույն» բառերը փոխարինել «Մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող» բառերով.

2) 2-րդ մասում՝

ա. «միջին մասնագիտական կամ բարձրագույն» բառերը փոխարինել «մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող» բառերով.

բ. 4-րդ կետում «դիպլոմային» բառից հետո լրացնել «կամ ավարտական» բառերով.

գ. 5-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով եւ 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ կետով.

«6) պրակտիկաների համար՝ ուսումնական պլանով նախատեսված աշխատանքային օրերի քանակով:».

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ մաս.

«4. Գործատուի համաձայնությամբ օտարերկրյա ուսումնական հաստատություններում իր մասնագիտական որակավորումը բարձրացնելու կամ անմիջականորեն աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված նոր գիտելիքներ ձեռք բերելու կամ դրանք զարգացնելու համար աշխատողին կարող է ~~տրվել~~ տրամադրվել ուսումնական արձակուրդ ուսման ողջ ժամանակահատվածում, բայց ոչ ավելի քան երկու տարի:»:

Հոդված ~~85~~86. Օրենսգրքի 175-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.2-րդ կետով.

«4.2) սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով նախատեսված դեպքերում.».

2) 2-րդ մաս~~ը~~ում՝

ա. «1-ին մասով» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 4.2-րդ կետի, » բառերով.

բ. լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Սույն հոդվածի 1-ին մասի 4.2-րդ կետով նախատեսված դեպքերում աշխատողի վարձատրությունն իրականացվում է սույն օրենսգրքով եւ օրենքով սահմանված կարգով:»:

3) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~86~~87. Օրենսգրքի 176-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. 2-րդ կետում «30» ~~բառից~~թվից հետո լրացնել «աշխատանքային» բառով.

բ. 4-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4) ընտանիքի անդամի մահվան դեպքում ~~մահացած անդամի (ամուսին, զավակ, ծնող, որդեգրող, որդեգրված, խնամատար ծնող, հոգեզավակ, խնամակալ, հոգաբարձու, պապ, տատ, թոռ, հարազատ, համահայր կամ համամայր եղբայր կամ քույր) թաղման դեպքում~~՝ մինչեւ երեք աշխատանքային օր.».

գ. 5-րդ կետում «չորս» բառից հետո լրացնել «աշխատանքային» բառով եւ վերջակետը փոխարինել միջակետով.

դ. լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ կետ.

«6) համատեղությամբ աշխատողին՝ հիմնական աշխատավայրում գործուղման մեջ գտնվելու դեպքում կամ հիմնական աշխատավայրի աշխատողին՝ համատեղությամբ աշխատավայրում գործուղման մեջ գտնվելու դեպքում՝ սակայն ոչ ավելի, քան 30 օր աշխատանքային տարվա ընթացքում:»:

2) 3-րդ մասում «մեկ տարվա» բառերը փոխարինել «մեկ աշխատանքային տարվա» բառերով:

Հոդված 8788. Օրենսգրքի 179-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել 2-րդ նախադասությունը.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մաս.

«1.1. Սոցիալական գործընկերության հանրապետական մակարդակում սոցիալական գործընկերության կողմերի առաջարկության հիման վրա՝ տնտեսության առանձին ճյուղերում կամ բնակավայրերում աշխատողների կամ առանձին մասնագիտությունների (որակավորումների) համար օրենքով կարող է սահմանվել ամսական նվազագույն աշխատավարձի (ժամավճարի) այլ չափ, որը չի կարող պակաս լինել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված չափից:»:

Հոդված 8889. Օրենսգրքի 180-րդ հոդվածի 2-րդ մասից«Ժամային,» բառից հետո լրացնել «օրական,» բառը, իսկ հանել «այլ ձեւեր, » բառերը հանել:

Հոդված 8990. Օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասում «տարիֆային» բառը փոխարինել «հիմնական» բառով:

Հոդված 9091. Օրենսգրքի 186-րդ հոդվածի 6-րդ մասում «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհաղթահարելի ուժ համարվող պատճառներով» բառերը փոխարինել «Արտակարգ եւ տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքի (անհաղթահարելի ուժի) հետեւանքով» բառերով:

Հոդված 9192. Օրենսգրքի 195-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 3-րդ նախադասությունից հանել «եւ այլն» բառերը.

2) 2-րդ մասի 1-ին պարբերությունում «տվյալ գործատուի կողմից» բառերից հետո լրացնել «տվյալ աշխատանքային պայմանագրի շրջանակներում» բառերը, իսկ «եւ այլն» բառերը հանել.

3) 2-րդ մասի 2-րդ պարբերությունում՝

ա. «պարապուրդում» բառից հետո լրացնել «կամ հարկադիր պարապուրդում» բառերը.

բ. լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Հաշվառման ենթակա տասներկու ամիսներում չպետք է ներառվի նաեւ աշխատանքի ընդունման ամիսը:».

4) 4-րդ մասը~~ը~~ում լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ երրորդ պարբերությամբ.

«Այն դեպքում, երբ միջին ամսական աշխատավարձի հաշվարկման պահանջ առաջանալու ամսվան նախորդող տասներկու ամիսներում աշխատողը չի ունեցել փաստացի հաշվարկված աշխատավարձ, կամ տասներկու ամիսներում առկա են սույն հոդվածի 2-րդ ~~մա~~մասի երկրորդ պարբերությունում թվարկված դեպքերը՝ միջին ժամային աշխատավարձը որոշվում է՝ աշխատողի համար օրենսդրությամբ սահմանված պաշտոնային դրույքաչափը կամ աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին իրավական ակտով սահմանված ամսական աշխատավարձը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ կոլեկտիվ պայմանագրով կամ աշխատանքային պայմանագրով կամ գործատուի իրավական ակտով տվյալ աշխատողի համար հաշվարկը կատարելու ամսվա համար սահմանված աշխատանքային ժամերի թվի վրա բաժանելու միջոցով:»:

~~***Հոդված 92.*** Օրենսգրքի 197-րդ հոդվածում «անդամին» բառից հետո լրացնել «(ամուսին, զավակ, ծնող, որդեգրող, որդեգրված, պապ, տատ, թոռ, հարազատ, համահայր կամ համամայր եղբայր կամ քույր)» բառերով:~~

Հոդված 93. Օրենսգրքի 198-րդ հոդվածում՝

1) վերնագրում «աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարումների» բառերը փոխարինել «գործատուի կողմից վճարման ենթակա այլ գումարների» բառերով.

2) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Եթե գործատուի մեղքով աշխատավարձի եւ գործատուի կողմից վճարման ենթակա այլ գումարների վճարումը կատարվում է սույն օրենսգրքով, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրով կամ կողմերի միջեւ գրավոր կերպով ձեռք բերված համաձայնությամբ սահմանված ժամկետների խախտմամբ, ապա գործատուն վճարման կետանցված յուրաքանչյուր օրվա համար աշխատողին վճարում է տուժանք՝ վճարման ենթակա գումարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա գումարի չափը:»:

Հոդված 94. Օրենսգրքի 200-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. «Հանրակրթական, միջնակարգ-մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորող աշխատողին» բառերը փոխարինել «Հանրակրթական, մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորող աշխատողներին տրամադրված» բառերով~~,~~.

բ. «յուրաքանչյուր» բառից հետո լրացնել «աշխատանքային» բառը.

2) 2-րդ մասում «նախաձեռնությամբ» բառից հետո լրացնել «հանրակրթական, մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում» բառերով:

Հոդված 95. Օրենսգրքի 201.1-ին հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«**Հոդված 201.1. Աշխատանքի ընդունվող անձի մասնագիտական ուսուցման կազմակերպումը գործատուի կողմից**

1. Գործատուն նախքան անձին աշխատանքի ընդունելը կարող է իր մոտ կամ այլ վայրում (այդ թվում՝ այլ կազմակերպությունում) կազմակերպել աշխատանքի ընդունվող անձի (այսուհետ՝ աշակերտ) մասնագիտական ուսուցումը մինչեւ հինգ ամիս տեւողությամբ՝ ուսուցման ընթացքում ~~աշխատանքի ընդունվող անձին~~աշակերտին վճարելով վարձատրություն՝ առնվազն օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափով:

2. Մասնագիտական ուսուցման հետ կապված՝ գործատուի եւ ~~աշխատանքի ընդունվող անձի~~աշակերտի հարաբերությունները կարգավորվում են կողմերի միջեւ կնքված գրավոր պայմանագրով (այսուհետ՝ աշակերտի պայմանագիր), որը ենթակա է հաշվառման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Մասնագիտական ուսուցումից հետո գործատուի մոտ աշխատանքի ընդունվելուց հրաժարվելու կամ աշխատանքի ընդունվելուց հետո ~~մասնագիտական ուսուցման մասին~~ աշակերտի պայմանագրով նախատեսված ժամանակահատվածում գործատուի մոտ աշխատելու պարտականությունն իր մեղքով չկատարելու դեպքում, մասնագիտական ուսուցում անցած անձը գործատուի պահանջով պարտավոր է~~ մասնագիտական ուսուցման մասին~~ աշակերտի պայմանագրով նախատեսված կարգով ու պայմաններով գործատուին հատուցել ոչ ավելի, քան

իր մասնագիտական ուսուցումը կազմակերպելու հետ կապված փաստացի ծախսերը~~, եթե այլ բան սահմանված չէ կողմերի միջեւ կնքված պայմանագրով~~:

4. Աշխատանքի ընդունվող անձի մասնագիտական ուսուցման ընթացքում նրա նկատմամբ տարածվում են սույն օրենսգրքով սահմանված՝ աշխատաժամանակի առավելագույն տեւողության, ինչպես նաեւ հանգստանալու եւ սնվելու համար ընդմիջման, ամենօրյա (միջհերթափոխային) եւ ամենշաբաթյա անընդմեջ հանգստի նվազագույն տեւողությունների մասին պահանջները:»:

Հոդված 96. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 201.2-րդ հոդվածով.

«**Հոդված 201.2. Աշխատողների լրացուցիչ մասնագիտական ուսուցումը**

1. Գործատուն աշխատողի համաձայնությամբ կարող է մասնագիտական հմտությունների ձեռք բերման կամ դրանց կատարելագործման կամ աշխատողի վերապատրաստման նպատակով իր մոտ կամ այլ վայրում (այդ թվում՝ օտարերկրյա պետությունում) կազմակերպել աշխատողի լրացուցիչ մասնագիտական ուսուցում:

2. Աշխատողի լրացուցիչ մասնագիտական ուսուցման վերաբերյալ գործատուի եւ աշխատողի միջեւ կնքվում է մասնագիտական ուսուցման մասին պայմանագիր:

3. Աշխատողի լրացուցիչ մասնագիտական ուսուցման ընթացքում պահպանվում է նրա աշխատատեղը (պաշտոնը) եւ վարձատրությունը, բացառությամբ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքի:

4. Սույն հոդվածով սահմանված լրացուցիչ մասնագիտական ուսուցումն աշխատողի համար սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի իմաստով գործուղում չի համարվում:

5. Լրացուցիչ մասնագիտական ուսուցումից հետո, մասնագիտական ուսուցման մասին պայմանագրով նախատեսված ժամանակահատվածում գործատուի մոտ աշխատելու պարտականությունն իր մեղքով չկատարելու դեպքում, լրացուցիչ մասնագիտական ուսուցում անցած անձը պարտավոր է մասնագիտական ուսուցման մասին պայմանագրով նախատեսված կարգով ու պայմաններով գործատուին հատուցել ոչ ավելի, քան իր լրացուցիչ մասնագիտական ուսուցումը կազմակերպելու հետ կապված փաստացի ծախսերը~~, եթե այլ բան սահմանված չէ կողմերի միջեւ կնքված՝ մասնագիտական ուսուցման մասին պայմանագրով~~:»:

Հոդված 97. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 201.3-րդ եւ 201.4-րդ հոդվածներով.

«***Հոդված 201.3. Գործատուի կողմից աշխատանքային պրակտիկա կազմակերպելը***

~~1. Գործատուն իրավունք ունի իր մոտ կազմակերպելու աշխատանքային պրակտիկա՝ մինչեւ երկու ամիս ժամկետով, ոչ ավելի քան մեկ անգամ, պայմանագիր կնքելով աշխատանքային պրակտիկա անցնող անձի հետ՝ առանց երկարաձգման իրավունքի:~~

1. Գործատուն իրավունք ունի իր մոտ կազմակերպելու աշխատանքային պրակտիկա՝ կնքելով մինչեւ երկու ամիս ժամկետով պայմանագիր աշխատանքային պրակտիկա անցնող անձի հետ (այսուհետ՝ փորձնակի պայմանագիր), ոչ ավելի քան մեկ անգամ՝ առանց երկարաձգման իրավունքի:

2. Աշխատանքային պրակտիկա անցնող անձը (այսուհետ~~եւ~~՝ փորձնակ) այն քաղաքացին է, ով նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական կամ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում սովորելու ընթացքում կամ ավարտելուց հետո մեկ տարվա ընթացքում գործատուի կողմից ներգրավվում է ~~առանց վարձատրության կամ կողմերի համաձայնությամբ որոշված չափով վարձատրությամբ~~ աշխատանքի՝ որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնի անվանմամբ աշխատանքային փորձառություն ձեռք բերելու նպատակով, որի դեպքում վարձատրության հարցը որոշվում է կողմերի համաձայնությամբ:

3. Գործատուի մոտ փորձնակների թիվը չի կարող գերազանցել տվյալ պահին աշխատողների թվի տասը տոկոսը:

4. Գործատուի կողմից փորձնակ ներգրավելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ~~աշխատանքային փորձառություն ձեռք բերելու մասին~~փորձնակի՝ գրավոր ձեւով, երկու օրինակից կնքված քաղաքացիական-իրավական բնույթի պայմանագրով, որի մեկ օրինակը գործատուն հանձնում է փորձնակին:

5. Մինչեւ տասնութ տարեկան անձինք՝ գործատուի կողմից որպես փորձնակ աշխատանքի ներգրավվում եւ աշխատանքային փորձառություն են ձեռք բերում՝ սույն օրենսգրքի 17.1-ին ~~հոդվածով~~եւ 257-րդ հոդվածներով սահմանված առանձնահատկությունները պահպանելով:

6. Գործատուի մոտ աշխատանքային փորձառություն ձեռք բերելու ժամանակահատվածը փորձնակի համար աշխատանքային ստաժ չի համարվում:

7. Փորձնակը գործատուի մոտ աշխատանքի է ներգրավվում եւ աշխատանքային փորձառություն է ձեռք բերում ոչ ավելի, քան շաբաթական հինգ օր, օրական չորս ժամ եւ շաբաթական քսան ժամ տեւողությամբ՝ պահպանելով հանգստի եւ սնվելու համար ընդմիջումները:

Հոդված 201.4. ~~Աշխատանքային փորձառություն ձեռք բերելու մասին~~ Փորձնակի պայմանագիրը

1. Աշխատանքային փորձառություն ձեռք բերելու մասին փորձնակի պայմանագիրը կնքվում է գրավոր ~~պայմանագիր~~, որով սահմանվում են աշխատանքային փորձառություն ձեռք բերելու հետ կապված կողմերի իրավունքները եւ պարտականությունները, դրանց փոփոխման եւ դադարման հիմքերն ու կարգը, փորձնակի երաշխիքները, կողմերի համաձայնությամբ վարձատրություն նախատեսված լինելու դեպքում՝ վարձատրության չափը, ինչպես նաեւ աշխատանքային փորձառություն ձեռք բերելու հետ կապված այլ հարաբերությունները:

2. Փորձնակին տրվում է աշխատանքային փորձառություն ձեռք բերելու մասին հավաստագիր, որում նշվում է որպես փորձնակ ներգրավվելու ժամանակահատվածը, մասնագիտական եւ որակավորման կամ պաշտոնի անվանմանը համապատասխան ձեռք բերված գիտելիքների, կարողությունների կամ հմտությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

3. Աշխատանքային փորձառություն ձեռք բերելու մասին պայմանագիրը ենթակա է հաշվառման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

Հոդված 98. Օրենսգրքի 207-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Արյան կամ դրա բաղադրիչների հանձնման օրը պահպանվում է աշխատողի միջին օրական աշխատավարձը:»:

Հոդված 99. Օրենսգրքի 213-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 4-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով եւ 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ կետով.

«5) չաշխատած օրերի համար վճարված գումարը՝ եթե սույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 7-րդ, 12-րդ, 13-րդ կետերով, 111-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ մասերով, 110-րդ հոդվածով եւ 112-րդ հոդվածի 1-ին եւ 2.1-ին մասերով, 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ, 13-րդ կետերով նախատեսված դեպքերում աշխատողն ազատվում է աշխատանքից մինչեւ այն աշխատանքային տարվա ավարտը, որի համար նրան տրամադրվել էր արձակուրդ:».

2) 2-րդ մասի վերջին պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին մաս.

«2.1. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերում նշված դեպքերում գործատուն իրավունք ունի կատարելու պահումներ կամ գանձումներ, եթե կանխավճարի վերադարձման համար սահմանված ժամկետը լրանալու, հաշվարկային մեխանիկական սխալների հետեւանքով կատարված ավել վճարումը կատարելու, կանխավճարի չծախսված եւ ժամանակին չվերադարձված գումարը վերադարձնելու, աշխատողի հասցրած վնասը հայտնաբերվելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, պահումներ կամ գանձումներ կատարելու մասին ընդունել է համապատասխան իրավական ակտ: Սույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում նշված դեպքում գործատուն իրավունք ունի կատարելու պահումներ կամ գանձումներ, եթե մինչեւ սույն օրենսգրքով սահմանված կարգով աշխատողի հետ լրիվ վերջնահաշվարկ կատարելու օրն ընդունել է այդ մասին համապատասխան իրավական ակտ կամ աշխատողին աշխատանքից ազատելու (աշխատանքային պայմանագիրը լուծելու) մասին անհատական իրավական ակտում նշել է պահումներ կամ գանձումներ կատարելու մասին:».

~~3~~4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ մաս.

«4. Այն դեպքում, երբ աշխատողն ազատվում է աշխատանքից եւ սույն հոդվածով սահմանված կարգով պահումներ կամ գանձումներ կատարելուց հետո գործատուին ունեցած աշխատողի պարտքերը չեն մարվում ամբողջությամբ, ինչպես նաեւ այն դեպքում, երբ պահումներ կամ գանձումներ հնարավոր չէ կատարել, սակայն աշխատողն ունի գործա~~ռ~~տուի հանդեպ չմարված պարտքեր, ապա գործատուն իրավունք ունի չմարված պարքերը մարելու պահանջով դիմել դատարան:»:

Հոդված 100. Օրենսգրքի 214-րդ հոդվածից հանել «, բացառությամբ սույն օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով նախատեսված դեպքերի» բառերը:

Հոդված 101. Օրենսգրքի 216-րդ հոդվածում «կորոնավիրուսային հիվանդության (COVID-19)» բառերը փոխարինել «վարակիչ հիվանդությունների» բառերով, իսկ «գործատուին» բառից հետո լրացնել «, իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ նորմատիվ իրավական ակտերով, աշխատանքային պայմանագրով (կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով), պաշտոնի անձնագրով, գործատուի ներքին եւ անհատական իրավական ակտերով իրեն վերապահված գործառույթները» բառերով:

Հոդված 102. Օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ մասը «միջոցները,» բառից հետո լրացնել «աշխատողների օրական կամ շաբաթական աշխատաժամանակի հաշվառմանը, աշխատանքում բռնության կամ սեռական ոտնձգության արգելքին,» բառերով:

Հոդված 103. Օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասը «կատարելը» բառից հետո լրացնել «–կամ սույն օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարքագծի կանոնները որեւէ այլ կերպ խախտելը~~, այդ թվում՝ դրանց չենթարկվելը կամ դրանք չպահպանելը~~» բառերով:

Հոդված 104. Օրենսգրքի 242-րդ հոդվածում՝

1) վերնագրում եւ տեքստում «անվտանգությունը եւ առողջությունը» բառերը փոխարինել «անվտանգության ապահովումը եւ առողջության պահպանությունը» բառերով.

2) «պահպանման» բառը փոխարինել «պաշտպանության» բառով:

Հոդված 105. Օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ մասում «առողջության եւ անվտանգության» բառերը փոխարինել «անվտանգությունը եւ առողջության» բառերով, «արտադրության» բառից հետո լրացնել «կամ աշխատանքի» բառերը, իսկ «կազմակերպությունում» բառը հանել:

Հոդված 106. Օրենսգրքի 246-րդ հոդվածի 3-րդ մասում «Ա~~ա~~նվտանգության» բառից հետո լրացնել «ապահովման» բառը:

Հոդված 107. Օրենսգրքի 247-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «կազմակերպություններում» բառը փոխարինել «գործատուների մոտ» բառերով.

2) 3-րդ մասի առաջին նախադասությունում «Աշխատողները» բառը փոխարինել «Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում աշխատողները» բառերով:

Հոդված 108. Օրենսգրքի 248-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Գործատուն պարտավոր է ընդունել աշխատողների անվտանգության ապահովման եւ առողջության պահպանության վերաբերյալ ներքին իրավական ակտեր, եթե գործատուի կողմից

իրականացվող գործունեության տվյալ ոլորտի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված են աշխատողների անվտանգության ապահովմանը եւ առողջության պահպանությանը ներկայացվող պահանջներ:»:

Հոդված 109. Օրենսգրքի 249-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Մինչեւ տասնութ տարեկան անձինք աշխատանքի ընդունվելիս պարտավոր են անցնել պարտադիր նախնական բժշկական զննություն: Մինչեւ տասնութ տարեկան աշխատողները պարտավոր են ենթարկվել պարբերական բժշկական զննության՝ յուրաքանչյուր աշխատանքային տարվա ընթացքում մեկ անգամ:».

2) 2-րդ մասում «, իսկ աշխատանքի ընթացքում՝ պարբերաբար, անցնել բժշկական զննություն» բառերը փոխարինել «անցնել նախնական, իսկ աշխատանքի ընթացքում՝ պարբերական բժշկական զննություն» բառերով.

3) 4-րդ մասը «պարբերաբար» բառից հետո լրացնել «, յուրաքանչյուր աշխատանքային տարվա ընթացքում մեկ անգամ» բառերով.

4) 6-րդ մասում՝

ա. «Պարտադիր բժշկական զննումը» բառերը փոխարինել «Պարբերական բժշկական զննությունը» բառերով~~,~~.

բ. «հաշվին:» բառից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Բժշկական զննության արդյունքները գրանցվում են աշխատողի անձնական սանիտարական (բժշկական) գրքույկում:».

5) 7-րդ մասում «ցանկը, » բառից հետո լրացնել «սանիտարական գրքույկի ձեւը,» բառերով:

Հոդված 110. Օրենսգրքի 250-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «Կազմակերպությունում կամ կազմակերպության ստորաբաժանումներում վտանգ առաջանալու» բառերը փոխարինել «Աշխատավայրում վտանգ առաջանալու կամ աշխատողների աշխատանքային գործառույթների կատարման այլ վայրում վտանգի առաջացման մասին տեղեկություն ստանալու» բառերով.

2) 2-րդ մասի 5-րդ կետում եւ 3-րդ մասի առաջին նախադասությունում «կազմակերպության» բառը փոխարինել «գործատուի» բառով.

3) 3-րդ մասի երկրորդ նախադասությունից հանել «կազմակերպության» բառը.

4) 5-րդ մասում «Յուրաքանչյուր կազմակերպություն» բառերը փոխարինել «Բացառությամբ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձ գործատուների, յուրաքանչյուր գործատու» բառերով.

5) 6-րդ մասում «կազմակերպությունները, որտեղ արտադրվում, օգտագործվում, պահպանվում են» բառերը փոխարինել «գործատուները, որոնք արտադրում կամ օգտագործում կամ պահպանում են» բառերով.

6) 7-րդ մասում «փակցվեն» բառից հետո լրացնել «աշխատողների համար» բառերով, իսկ «Կազմակերպության» բառը փոխարինել «Գործատուի» բառով.

7) 9-րդ մասում «արտադրությունում դժբախտ պատահարները» բառերը փոխարինել «աշխատանքի վայրում դժբախտ դեպքերը» բառերով:

Հոդված 111. Օրենսգրքի 251-րդ հոդվածում՝

1) վերնագրում եւ 3-րդ մասում «Կազմակերպության» բառը փոխարինել «Գործատուի» բառով.

2) 1-ին մասում ~~հանել~~ «Կազմակերպությունում աշխատողների» բառերը փոխարինել «Աշխատողների» բառով, «սահմանված» բառից հետո լրացնել «դեպքերում եւ» բառերը, իսկ «համար» բառից հետո լրացնել «գործատուի մոտ» բառերը.

3) 2-րդ մասում «կազմակերպությունում» բառը փոխարինել «գործատուի մոտ» բառերով:

Հոդված 112. Օրենսգրքի 253-րդ հոդվածի վերջին նախադասությունում «Գործատուն» բառից հետո լրացնել «իր մոտ» բառերը, իսկ «կազմակերպության» բառը հանել:

Հոդված 113. Օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասում «կազմակերպություն» բառը փոխարինել «մոտ» բառով, իսկ «կազմակերպությունում» բառը՝ «գործատուի մոտ» բառերով:

Հոդված 114. Օրենսգրքի 255-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «կազմակերպությունում» բառը փոխարինել «գործատուի մոտ» բառերով.

2) 1-ին եւ 2-րդ մասերում «անվտանգության եւ առողջության պահպանության» բառերը փոխարինել «անվտանգության ապահովման եւ առողջության պահպանության» բառերով:

Հոդված 115. Օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասը «Աշխատանքի վայրում» բառերից հետո լրացնել «կամ աշխատանքային գործառույթները կատարելիս այլ վայրում» բառերով:

Հոդված 116. Օրենսգրքի 257-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել՝ շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝.

«**Հոդված 257. Մինչեւ տասնութ տարեկան անձանց համար արգելված աշխատանքները**

1. Արգելվում է մինչեւ տասնութ տարեկան անձանց ներգրավել ալկոհոլային խմիչքների, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, ծխախոտի, ծխախոտային այլ արտադրատեսակների կամ դրանց փոխարինիչների, էրոտիկա, պոռնոգրաֆիա, սարսափ բովանդակող տպագիր հրատարակությունների, ֆիլմերի, տեսահոլովակների, հեռուստառադիոհաղորդումների, պոռնկագրական բնույթի այլ նյութերի կամ առարկաների արտադրության, օգտագործման, գովազդի, առեւտրի կամ ցանկացած այլ եղանակով տարածմանը կամ իրացմանն ուղղված աշխատանքներում, ինչպես նաեւ մոլեխաղեր կազմակերպելուն կամ դրա գովազդելուն ուղղված աշխատանքներին:

2. Արգելվում է մինչեւ տասնութ տարեկան անձանց ներգրավել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներում, ինչպես նաեւ մինչեւ տասնութ տարեկան անձանց նրանց համար ծանր եւ վնասակար համարվող աշխատանքներում: Մինչեւ տասնութ տարեկան անձանց համար ծանր եւ վնասակար համարվող աշխատանքների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 117. Օրենսգրքի 258-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Արգելվում է հղի կամ մինչեւ մեկ տարեկան երեխա խնամող կանանց ներգրավել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներում, ինչպես նաեւ նրանց հղի կամ մինչեւ մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր եւ վնասակար համարվող աշխատանքներում: Հղի կամ մինչեւ մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր եւ վնասակար համարվող աշխատանքների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

2) 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5. Մինչեւ երկու տարեկան երեխա ունեցող կնոջը, բացի հանգստի եւ սնվելու համար տրամադրվող ընդմիջման ժամերից, յուրաքանչյուր երեք ժամը մեկ տրամադրվում է լրացուցիչ ընդմիջում՝ կես ժամից ոչ պակաս տեւողությամբ: Կնոջ ցանկությամբ այդ ընդմիջումները կարող են միավորվել եւ միացվել հանգստի եւ սնվելու համար ընդմիջմանը կամ տրամադրվել աշխատանքային օրվա սկզբին կամ տեղափոխվել աշխատանքային օրվա վերջ՝ աշխատանքային օրվա տեւողության համապատասխան կրճատումով: Սույն մասով սահմանված ընդմիջումների ժամանակահատվածում աշխատողը վարձատրվում է միջին ժամային աշխատավարձի չափով:»:

Հոդված 118. Օրենսգրքի 260-րդ հոդվածում՝

1) 1-ին եւ 2-րդ մասերը «Աշխատանքի վայրում» բառերից հետո լրացնել «կամ աշխատանքային գործառույթները կատարելիս այլ վայրում» բառերով.

2) 1-ին մասում «կազմակերպության» բառը փոխարինել «գործատուի» բառով:

Հոդված 119. Օրենսգրքի 261-րդ հոդվածի 1-ին մասում «Կազմակերպությունում» բառը փոխարինել «Գործատուի մոտ» բառերով:

Հոդված 120. Օրենսգրքի 262-րդ հոդվածի՝

1) վերնագրում «անվտանգության» բառից հետո լրացնել «ապահովման» բառը.

2) 1-ին մասում «Աշխատողների անվտանգության» բառերից հետո լրացնել «ապահովման» բառը:

Հոդված 121. Օրենսգրքի 264-րդ հոդվածում՝

1) վերնագրում «մարմինը» բառից հետո լրացնել «եւ աշխատանքային վեճերի հաշտարարությունը» բառերով,.

2) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Աշխատանքային վեճերով կարող է իրականացվել նաեւ հաշտարարություն՝ «Հաշտարարության մասին» օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 122. Օրենսգրքի 265-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Աշխատանքի պայմանների փոփոխման կամ աշխատանքային հարաբերությունների դադարեցման հետ համաձայն չլինելու դեպքերում աշխատողը աշխատանքի պայմանների փոփոխման կամ աշխատանքից ազատման (կամ աշխատանքային պայմանագրի լուծման) մասին անհատական իրավական ակտը ստանալու օրվանից հետո երկու ամսվա ընթացքում, իսկ սույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 12.2-րդ կետով սահմանված դեպքերում՝ աշխատանքային պայմանագիրն օրենքի ուժով լուծված համարվելու օրվանից հետո երկու ամսվա ընթացքում իրավունք ունի դիմելու դատարան:»:

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մաս.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում, եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են կամ աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցվել են առանց օրինական հիմքերի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ գործատուի ներքին կամ անհատական իրավական ակտերով կամ աշխատանքային պայմանագրով սահմանված պահանջների խախտմամբ, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: ~~Ընդ որում, առանց օրինական հիմքերի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ գործատուի ներքին կամ անհատական իրավական ակտերով կամ աշխատանքային պայմանագրով սահմանված պահանջների խախտմամբ աշխատանքի պայմանների փոփոխման կամ աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունների դադարեցման~~Այդ դեպքերում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը տվյալ գործատուի մոտ կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք:».

~~3) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝~~

~~«2. Տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով կամ գործատուի եւ աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար եւ աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով: Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված:».~~

43) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ մաս.

«3. Սույն հոդվածի 1.1-ին եւ 2-րդ մասերով նախատեսված միջին աշխատավարձի չափը որոշելու համար հաշվի է առնվում մինչեւ աշխատանքային պայմանագրի լուծումը աշխատողի համար հաշվարկված աշխատավարձի չափը՝ սույն օրենսգրքի 195-րդ հոդվածով սահմանված կարգով: Սույն հոդվածի 1.1-ին եւ 2-րդ մասերով նախատեսված դեպքերում միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի քանակով բազմապատկելու միջոցով:»:

Հոդված 123. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

~~1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո, բացառությամբ 20-րդ, 25-րդ հոդվածների, 72-րդ հոդվածի 4-րդ մասի «բ», «գ» պարբերությունների, 79-րդ հոդվածի, 80-րդ հոդվածի 7-րդ մասի, 82-րդ հոդվածի 5-րդ մասի եւ 97-րդ հոդվածի:~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երկու ամիս հետո, բացառությամբ սույն օրենքի 20-րդ, 25-րդ հոդվածների, 81-րդ հոդվածի 7-րդ կետի, 83-րդ հոդվածի 5-րդ կետի, 95-րդ, 97-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

2. Աշխատանքային հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում ծագած համարվելու մասին սույն օրենքի 6-րդ հոդվածի դրույթները տարածվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո կնքված աշխատանքային պայմանագրերի եւ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ընդունված՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերի հիման վրա ծագած աշխատանքային հարաբերությունների վրա:

3. Սույն օրենքի 122-րդ հոդվածի գործողությունը չի տարածվում մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ ծագած աշխատանքային վեճերի վրա: Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ ծագած աշխատանքային վեճերի նկատմամբ կիրառվում են Օրենսգրքի՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան նախորդող օրվա դրությամբ գործող խմբագրությամբ սահմանված նորմերը:

4. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից՝ վեցամսյա ժամկետում:

~~4. Սույն օրենքի 20-րդ եւ 25-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում հանրապետական, ճյուղային, տարածքային եւ կազմակերպության կոլեկտիվ պայմանագրերի հաշվառման կարգը սահմանող ենթաօրենսդրական ակտն ընդունվելուց հետո: Հանրապետական, ճյուղային, տարածքային եւ կազմակերպության կոլեկտիվ պայմանագրերի հաշվառման կարգը սահմանող ենթաօրենսդրական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում:~~

~~5. Սույն օրենքի 72-րդ հոդվածի 4-րդ մասի «բ» եւ «գ» պարբերությունները եւ 79-րդ հոդվածն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման մեջ համապատասխան լրացումներ կատարելուց հետո: Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման մեջ լրացումները կատարվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո չորս ամսվա ընթացքում:~~

~~6. Սույն օրենքի 80-րդ հոդվածի 7-րդ մասը եւ 82-րդ հոդվածի 5-րդ մասն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:~~

~~7. Սույն օրենքի 97-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից հինգ ամիս հետո:~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ, ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՆՁՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-508-30.01.2023-ԱՍ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկությանն վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	Կառավարություն	1-ին հոդվածի 2-րդ կետ	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետից հանել «այդ թվում՝» բառերը՝ նախագծի 3-րդ հոդվածով ՀՀ աշխատանքային օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացվող 3.3-րդ հոդվածի կարգավորումների հետ համապատասխանության ապահովման նպատակով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
2.	Կառավարություն	3-րդ հոդված	3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ ՝ **««Հոդված 3.3. Աշխատանքում բռնության կամ սեռական ոտնձգության արգելքը** 1. Աշխատանքում (աշխատավայրում) բռնությունը կամ սեռական ոտնձգությունն արգելվում են: 2. Բռնությունն աշխատավայրում կամ աշխատանքային պարտականությունների կատարման այլ վայրում (ներառյալ՝ գործուղումները) աշխատողի կամ	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			երրորդ անձի դեմ ուղղված բռնի կամ բռնության սպառնալիք պարունակող մեկանգամյա կամ կրկնվող արարք է, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել ֆիզիկական, հոգեկան, սեռական կամ տնտեսական վնասի կամ անձի համար թշնամական կամ նվաստացուցիչ միջավայրի ձևավորման: 3. Սեռական ոտնձգությունն աշխատավայրում կամ աշխատանքային պարտականությունների կատարման այլ վայրում (ներառյալ՝ գործուղումները) սեռական բնույթի անցանկալի արարք է, որն ունի ֆիզիկական կամ խոսքային կամ ոչ խոսքային դրսևորում (ներառյալ՝ սեռական բնույթի առաջարկներ, հպումներ) և որն ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում է անձի՝ աշխատանքի վերաբերյալ որոշումների կայացման վրա կամ ստեղծում է արժանապատվությունը նվաստացնող կամ սոցիալական մեկուսացման դրդող աշխատանքային միջավայր:»: Նշված առաջարկը ներկայացվում է նպատակ ունենալով սահմանել բռնության կամ սեռական ոտնձգության արգելքը ոչ միայն աշխատողի և գործատուի համար, այլ նաև, որպեսզի այդ արգելքը տարածվի նաև աշխատանքային հարաբերությունների մասնակիցների կողմից այլ անձանց նկատմամբ բռնությունների կամ սեռական ոտնձգությունների վրա:		
3.	Կառավարություն	6-րդ հոդվածի 2-րդ կետ	Հանել «եղանակով» բառը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
4.	Կառավարություն	7-րդ հոդվածի 2-րդ կետ	7-րդ հոդվածի 2-րդ կետով՝ Օրենսգրքի 16-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 2-րդ մասում՝ 1. հանել «իրականացնում են» բառերից հետո գրված «իրենց մարմինների,» բառերը և «պաշտոնատար անձանց,» բառերից հետո գրված «ինչպես նաև» բառերը, 2. «այլ անձանց» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև իրենց մարմինների» բառերը. 3. «որոնք» բառից հետո լրացնել «ձևավորվում և» բառերը,	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			4. «ակտերի,» բառից հետո գրված «գործատուի» բառը փոխարինել «իրավաբանական անձի» բառերով, 5. «և նրա հաստատած» բառերը փոխարինել «կամ գործատուի» բառերով, 6. «(ընդունած)» բառը գրել առանց փակագծերի և այդ բառից հետո լրացնել «ներքին կամ անհատական» բառերը: Վերոնշյալ առաջարկությունները խմբագրական բնույթի են:		
5.	Կառավարություն	9-րդ հոդված՝ Օրենսգրքում լրացվող 17.1-ին հոդվածի 4-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ մասեր	1. 9-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 17.1-ին հոդվածի 4-րդ մասում «249-րդ հոդվածի 1-ին մասին» բառերից հետո առաջարկվում է լրացնել «, 257-րդ հոդվածին» բառերը, իսկ 7-րդ մասի վերջում փակել չակերտով: 2. հանել 8-րդ և 9-րդ մասերը և այդ բովանդակությամբ կարգավորումները տեղափոխել նախագծի 116-րդ հոդված (որով փոփոխություն է նախատեսվում Օրենսգրքի 257-րդ հոդվածում)՝ հաշվի առնելով, որ **աշխատողների անվտանգությանը և առողջությանը վերաբերող կարգավորումները** տրված են Օրենսգրքի 23-րդ գլխում, որում էլ տեղ **<u>է գտել նաև Օրենսգրքի 257-րդ հոդվածը</u>:** Վերոգրյալով պայմանավորված էլ առաջարկվում է նախագծի 116-րդ հոդվածով Օրենսգրքի 257-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ, այլ ոչ թե ուժը կորցրած ճանաչել: Մասնավորապես, առաջարկվում է 116-րդ հոդվածում Օրենսգրքի 257-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. 1) հոդվածը վերնագրել «**Հոդված 257. Մինչև տասնութ տարեկան անձանց համար արգելված աշխատանքները**». 2) նախագծի 9-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 17.1-ին հոդվածի 9-րդ մասի կարգավորումը տեղափոխելով Օրենսգրքի՝ նոր խմբագրությամբ	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			շարադրվող 257-րդ հոդված՝ այն նախատեսել որպես հոդվածի 1-ին մաս. 3) նախագծի 9-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 17.1-ին հոդվածի 8-րդ մասի կարգավորումը տեղափոխելով Օրենսգրքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 257-րդ հոդված՝ այն նախատեսել որպես հոդվածի 2-րդ մաս, իսկ «նրանց» բառը փոխարինել «մինչև տասնութ տարեկան անձանց» բառերով (կարգավորումն առավել որոշակիացնելու նպատակով):		
6.	Կառավարություն	3-րդ հոդված, 9-րդ հոդված, 11-րդ հոդված, 13-րդ հոդված, 25-րդ հոդված, 27-րդ (լրամշակված նախագծի 28-րդ) հոդված, 29-րդ (լրամշակված նախագծի 30-րդ) հոդված, 42-րդ (լրամշակված նախագծի 43-րդ) հոդված, 95-րդ հոդված, 97-րդ հոդված	3-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 3.3-րդ, 9-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 17.1-ին, 11-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 18.1-ին, 13-րդ հոդվածով Օրենսգրքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 23-րդ, 25-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 59.1-ին, 27-րդ (լրամշակված նախագծի 28-րդ) հոդվածով Օրենսգրքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 64-րդ, 29-րդ (լրամշակված նախագծի 30-րդ) հոդվածով Օրենսգրքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 73-րդ, 42-րդ (լրամշակված նախագծի 43-րդ) հոդվածով Օրենսգրքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 99-րդ հոդվածի, 95-րդ հոդվածով Օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 201.1-ին, 97-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 201.3-րդ և 201.4-րդ հոդվածների վերնագրերն առաջարկում ենք շարադրել թավ տառատեսակով և առանց շեղագրի:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
7.	Կառավարություն	12-րդ հոդվածի 1-ին կետ	1-ին կետում «կետերը» բառը փոխարինել «կետերում» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
8.	Կառավարություն	14-րդ հոդվածի 2-րդ կետ	2-րդ կետում «բառով» բառը փոխարինել «բառերով» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
9.	Կառավարություն	18-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետեր	1-ին, 2-րդ և 3-րդ կետերում «մասը» բառերը գրել ներգոյական հոլովով («ը» վերջավորությունը փոխարինել «ում» վերջավորությամբ):	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

10.	Կառավարություն	25-րդ հոդված	«բովանդակությամբ» բառից հետո լրացնել «նոր՝» բառը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
11.	Կառավարություն	26-րդ հոդվածից հետո լրացվող նոր՝ 27-րդ հոդված	Առաջարկվում է լրացնել նոր 27-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 27.** Օրենսգրքի 11-րդ գլխի վերնագրում «**ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**» բառից հետո լրացնել «**, ԳՈՐԾԱԴՈՒԼԸ**» բառը: Ըստ այդմ հոդվածների համարակալումը փոխվել է: Առաջարկված փոփոխությունը կատարվել է հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասը, որի համաձայն՝ օրենսդրական ակտերում բովանդակությամբ համասեռ հոդվածները միավորվում են գլուխներում: Գլուխները կարող են միավորվել բաժիններում, իսկ բաժինները՝ մասերում: Անհրաժեշտության դեպքում բաժինները կարող են բաժանվել ենթաբաժինների՝ միավորելով առանձին գլուխներ: Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նկատել, որ Օրենսգրքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 73-րդ հոդվածում գործադուլի իրավունքը չի պայմանավորվում միայն կոլեկտիվ աշխատանքային վեճի առկայությամբ: Հետևաբար, նշվածով պայմանավորված էլ, առաջարկվում է Օրենսգրքի համապատասխան գլխի վերնագրում լրացնել նաև «**, ԳՈՐԾԱԴՈՒԼԸ**» բառը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
12.	Կառավարություն	35-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 36-րդ հոդվածի) 1-ին կետ	Նախագծի 35-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 36-րդ հոդվածի) 1-ին կետում «1.1» թվից հետո լրացնել «.» կետադրական նշանը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
13.	Կառավարություն	37-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 38-րդ հոդվածի) 2-րդ կետ	Նախագծի 37-րդ (լրամշակված նախագծի 38-րդ) հոդվածի 2-րդ կետն առաջարկում ենք խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «2) 3-րդ կետում «կազմակերպության» բառը փոխարինել «գործատուի» բառով, իսկ «նրա ցանկությամբ՝ նաև» բառերը հանել.»:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			Ներկայացված փոփոխությունը խմբագրական բնույթի է՝ հաշվի առնելով, որ նշված կետով Օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում կատարվող առաջին փոփոխությունը վերաբերում է «կազմակերպության» բառը «գործատուի» բառով փոխարինելուն, իսկ նույն կետում առաջարկվող երկրորդ փոփոխությունը վերաբերում է կետից «նրա ցանկությամբ՝ նաև» բառերը հանելուն, որոնք կետի շարադրանքում հերթականությամբ ավելի հետ են:		
14.	Կառավարություն	Նախագծի 38-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 39-րդ հոդվածի) 1-ին և 2-րդ կետեր	1-ին կետում՝ 1. «ա» ենթակետում՝ «մեկի կամ որդեգրողի» բառերից առաջ լրացնել «1-ին պարբերությունում» բառերը. 2. «բ» ենթակետից առաջարկում ենք հանել «1-ին մասի» բառերը: Վերոնշյալ առաջարկությունները խմբագրական բնույթի են և ներկայացվում են հստակեցման նպատակով: 2-րդ կետում՝ 1. «փոստային» բառից հետո հանել «եղանակով» բառը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
15.	Կառավարություն	39-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 40-րդ հոդվածի) 1-ին կետ	Առաջարկում ենք 39-րդ (լրամշակված նախագծի 40-րդ) հոդվածի 1-ին կետի՝ 1. «ա» ենթակետի վերջին «Հայաստանի Հանրապետությունում» բառերից հետո չակերտների ներսում գրված «.» կետադրական նշանը հանել, իսկ չակերտներից դուրս լրացնել «բառերով» բառը, 2. «գ» ենթակետում՝ «(սանիտարական գրքույկի)» բառերից առաջ չակերտների ներսում, բայց փակագծերից դուրս լրացնել «և տեղեկանքի» բառերը, իսկ «(սանիտարական գրքույկի)» բառերից հետո չակերտների ներսում, բայց փակագծերից դուրս լրացնել «ձևը» բառը: **Նշված առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախագծով առաջարկվող փոփոխություններով, ըստ էության, աշխատանքի ընդունվելիս նախատեսվում է աշխատողներից պահանջել տեղեկանք առողջական վիճակի մասին, այլ ոչ թե սանիտարական գրքույկ, իսկ տեղեկանքի ձև սահմանելու անհրաժեշտությունը բացակայում է:**	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

16.	Կառավարություն	47-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 48-րդ հոդվածի) 1-ին կետ	47-րդ (լրամշակված նախագծի 48-րդ) հոդվածի 1-ին կետում «վարձատրությունը» բառը փոխարինել «վարձատրության հարցը» բառերով: Առաջարկվող փոփոխությունն, ըստ էության հստակեցնող բնույթի է՝ տարընկալումներից խուսափելու նպատակով: Նշված ձևակերպմամբ առավել հստակ է երևում, որ նշված դեպքում վարձատրությունը պահպանելու կամ չպահպանելու, ինչպես նաև դրա չափի վերաբերյալ հարցը որոշվում է կողմերի համաձայնությամբ: Սույն կետում առաջարկվող փոփոխությունը չկատարելու պարագայում՝ կարգավորումը կարող է ընկալվել այնպես, որ վարձատրությունն ամեն դեպքում պահպանվում է և, միայն չափն է, որ կարող է որոշվել կողմերի համաձայնությամբ:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
		47-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 48-րդ հոդվածի) 3-րդ կետ	Հանել 47-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 48-րդ հոդված) 3-րդ կետը, քանի որ նախագծի նույն հոդվածի 2-րդ կետով նախատեսվում է Օրենսգրքի 108.1-ին հոդվածի 1-ին մասից հանել «նաև» և «անվանական» բառերը, որի արդյունքում Օրենսգրքի 108.1-ին հոդվածի 1-ին մասի համապատասխան կարգավորումն ունենում է հետևյալ շարադրանքը «... իսկ հանրային ծառայության մեջ գտնվող անձի դեպքում վճարվում է ամսական հատուցում՝ հիմնական աշխատավարձի հիսուն տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափը՝ ....», ինչն արդեն իսկ ենթադրում է, որ անձի կողմից ստացման ենթակա գումարը չի կարող պակաս լինել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափից: Նշված փոփոխությամբ պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի 47-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 48-րդ հոդված) 2-րդ կետում միջակետը փոխարինել վերջակետով:		

17.	Կառավարություն	48-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 49-րդ հոդվածի) 1-ին կետ	48-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 49-րդ հոդված) 1-ին կետում «վարձատրությունը» բառը փոխարինել «վարձատրության հարցը» բառերով: Նշված ձևակերպմամբ առավել հստակ է երևում, որ նշված դեպքում վարձատրությունը պահպանելու կամ չպահպանելու, ինչպես նաև դրա չափի վերաբերյալ հարցը որոշվում է կողմերի համաձայնությամբ: Սույն կետում առաջարկվող փոփոխությունը չկատարելու պարագայում՝ կարգավորումը կարող է ընկալվել այնպես, որ վարձատրությունն ամեն դեպքում պահպանվում է և, միայն չափն է, որ կարող է որոշվել կողմերի համաձայնությամբ:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
18.	Կառավարություն	49-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 50-րդ հոդվածի) 1-ին կետ 49-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 50-րդ հոդվածի) 3-րդ կետ	49-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 50-րդ հոդված) 1-ին կետի «բ» ենթակետում «կետում» բառից հետո առաջարկում ենք լրացնել ««մեկը, որդեգրողը» բառերը փոխարինել «կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկը» բառերով, իսկ» բառերով: Վերոնշյալ առաջարկությունը ներկայացվում է Օրենսգրքի նշված դրույթը Օրենսգրքում լրացվող 17.1-ին հոդվածի 3-րդ մասի, Օրենսգրքի 85-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունում կատարվող փոփոխությունների, 85-րդ հոդվածում լրացվող 1.2-րդ մասի, Օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ կետի կարգավորումներին համապատասխանեցնելու նպատակով: 49-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 50-րդ հոդված) 3-րդ կետով Օրենսգրքի 109-րդ հոդվածում լրացվող 3-րդ մասի 3-րդ կետն առաջարկում ենք հանել, իսկ այդ կետին հաջորդող կետերի հերթական համարները համապատասխանաբար փոփոխել «3)» և «4)» թվերով: Վերոգրյալով պայմանավորված՝ Օրենսգրքի 109-րդ հոդվածում լրացվող 3-րդ մասի 5-րդ (լրամշակված տարբերակում 4-րդ) կետում «1-4-րդ» բառերն առաջարկում ենք փոխարինել «1-3-րդ» բառերով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			Փոփոխությունը պայմանավորված է հետևյալով՝ Օրենսգրքի 127-րդ հոդվածում նախագծի 60-րդ (լրամշակված նախագծի 61-րդ) հոդվածով կատարված փոփոխության արդյունքում «օրվանից» բառը փոխարինվում է «օրվան հաջորդող օրվանից՝ մահվան փաստը գրանցող լիազոր մարմնի տրամադրած փաստաթղթի հիման վրա» բառերով (այս մասով փոփոխության վերաբերյալ առաջարկը ներկայացված է սույն ամփոփաթերթի 24-րդ կետում): Հետևաբար ստացվում է, որ աշխատողի մահվան դեպքում գործատուն միակողմանիորեն **լուծելու է աշխատանքային պայմանագիրն աշխատողի մահվան օրվան հաջորդող օրվանից՝** մահվան փաստը գրանցող լիազոր մարմնի տրամադրած փաստաթղթի հիման վրա: Այսպիսով, Օրենսգրքի 109-րդ հոդվածում լրացվող նոր 3-րդ մասի 3-րդ կետի և Օրենսգրքի 127-րդ հոդվածի՝ նախագծով առաջարկվող կարգավորումների համադրման արդյունքում ստացվում է, որ **աշխատողի վերջին աշխատանքային օր է համարվելու աշխատողի մահվան օրվան հաջորդող օրը:** Կարծում ենք, որ վերոգրյալը խնդրահարույց է լինում, քանի որ աշխատողն իր մահվան օրվան հաջորդող օրը չի կարող աշխատանքային հարաբերությունների մեջ լինել: Նշվածը կարող է խնդրահարույց լինել իրավակիրառ պրակտիկայի տեսանկյունից: Ուստի, ելնելով վերոգրյալից, առաջարկվում է կատարել սույն կետում նշված փոփոխությունը:		
19.	Կառավարություն	50-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 51-րդ հոդվածի) 1-ին կետ	1-ին կետում «նախադասությամբ» բառը փոխարինել «նախադասություններով» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

20.	Կառավարություն	51-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 52-րդ հոդվածի) 2-րդ կետ 51-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 52-րդ հոդվածի) 3-րդ կետ	1. 51-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 52-րդ հոդվածի) 2-րդ կետով Օրենսգրքի 112-րդ հոդվածում լրացվող 2.2-րդ մասում «լուծելու՝» բառի վրա դրված «՝» կետադրական նշանը հանել և այդ բառից հետո լրացնել «վերաբերյալ» բառը: Առաջարկությունը լեզվաբանական բնույթի է: 2. Նախագծի 51-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 52-րդ հոդվածի) 3-րդ կետով Օրենսգրքի 112-րդ հոդվածի 3-րդ մասում՝ չակերտով լրացվող բառերը վերցնել նաև փակագծերի մեջ, ինչպես նաև հանել չակերտի ներսում առջևից դրված ստորակետը:	**Ընդունվել է:** **Ընդունվել է:**	**Ընդունվել է:** **Ընդունվել է:**
21.	Կառավարություն	52-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 53-րդ հոդվածի) 1-ին կետի «ա» ենթակետ	52-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 53-րդ հոդված) 1-ին կետի «ա» ենթակետով Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1) գործատուի լուծարման (գործունեության դադարման), պետական հաշվառումից հանվելու, նոտար գործատուի դեպքում՝ պաշտոնից ազատվելու դեպքերում.»: Առաջարկվող խմբագրությամբ նախատեսվում է չթվարկել, թե որ գործատուն ինչպես է գործում, այլ ուղղակի կարգավորումը տալ առավել հակիրճ ձևակերպմամբ:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
22.	Կառավարություն	57-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 58-րդ հոդվածի) 4-րդ կետ	Նախագծի 57-րդ (լրամշակված նախագծի 58-րդ) հոդվածի 4-րդ կետով Օրենսգրքի 119-րդ հոդվածում լրացվող նոր՝ 3.1-ին մասում «աշխատողներն» բառն առաջարկվում է փոխարինել «աշխատողները տարվա ընթացքում» բառերով, իսկ «ժամային աշխատավարձի առնվազն երկու երրորդի» բառերը՝ փոխարինել «օրական աշխատավարձի առնվազն 50 տոկոսի» բառերով: Առաջարկվող փոփոխությամբ հստակեցվում է, որ աշխատողների ներկայացուցչական մարմիններում ընտրված աշխատողները աշխատողների ներկայացուցչական մարմինների միջոցառումներին	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			մասնակցելու կամ որպես աշխատողների ներկայացուցչական մարմնի անդամ՝ որակավորումը բարձրացնելու համար աշխատանքային պարտականությունների կատարումից մինչև 10 աշխատանքային օր ժամկետով ազատվում են **տարվա ընթացքում**: Այսինքն, հստակեցվում է ժամանակահատվածը, որի ընթացքում տրամադրվելու են ազատ օրերը: Մյուս կողմից, հաշվի առնելով, որ վերոնշյալ նպատակի համար ազատ ժամանակահատվածները տրամադրվելու են օրերով, նախատեսվում է այդ ժամանակահատվածների պահպանվող վարձատրության նվազագույն չափը ևս սահմանել օրական աշխատավարձից ելնելով: Միաժամանակ, աշխատանքային պարտականությունների կատարումից ազատված օրերի համար նախատեսվում է աշխատողին վճարել միջին օրական աշխատավարձի առնվազն 50 տոկոսի չափով՝ ելնելով աշխատողների և գործատուների շահերի հավասարակշռման սկզբունքից:		
23.	Կառավարություն	Նախագծի 58-րդ հոդված (լրամշակված նախագծի 59-րդ հոդված)	Առաջարկվում է Նախագծի 58-րդ (լրամշակված նախագծի 59-րդ) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 59.** Օրենսգրքի 122-րդ հոդվածում՝ 1) 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «1) կատարել է այնպիսի արարք, որի հետեւանքով գործատուն կրել է կամ կարող էր կրել նյութական վնաս.». 2) 3-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով եւ Օրենսգրքի 122-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ եւ 5-րդ կետերով. «4) չի պահպանել (խախտել է) աշխատողների անվտանգության ապահովման եւ առողջության պահպանության մասին իրավական ակտերի, աշխատանքների կազմակերպման եւ իրականացման կանոնների, հրահանգների պահանջները, որն առաջացրել է կամ կարող էր առաջացնել ծանր հետեւանքներ՝ վտանգելով անձանց կյանքն ու	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			առողջությունը կամ իրական սպառնալիք ստեղծելով անձանց կյանքի եւ առողջության համար կամ նրանց կյանքին ու առողջությանը պատճառելով վնաս. 5) անօրինական (առանց համաձայնեցման կամ տեղեկացման) օգտագործել է գործատուի կամ այլ աշխատողների համակարգչային տեխնիկան կամ տեղեկատվական համակարգերը (տեղեկատվական համակարգեր մուտք գործելու միջոցներ (մուտքանուն, գաղտնաբառ եւ այլն)), որի միջոցով ձեռք է բերել աշխատանքային կամ անձնական տվյալներ, իրականացրել է տվյալների անօրինական օգտագործում, ձայնագրում, ոչնչացում, վերափոխում, ուղեփակում, կրկնօրինակում, տարածում կամ թվային տեխնոլոգիաների միջամտությամբ իրականացրել է գործողություններ, այդ թվում՝ վիրուսային կամ ծրագրային կարգաբերումներ, որոնք կարող էին խաթարել կամ խաթարել են գործատուի բնականոն աշխատանքը:»: Ըստ էության, Նախագծի 58-րդ (լրամշակված նախագծի 59-րդ) հոդվածը նոր խմբագրությամբ շարադրելու արդյունքում հոդվածում նույնությամբ շարադրվել են առաջին ընթերցմամբ ընդունված նախագծի 58-րդ հոդվածով Օրենսգրքի 122-րդ հոդվածում լրացվող նոր՝ 3-րդ և 4-րդ կետերը, ինչպես նաև միաժամանակ առաջարկվում է նոր խմբագրությամբ շարադրել Օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին կետը: Մասնավորապես, Օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին կետի գործող կարգավորման համաձայն՝ գործատուն իրավունք ունի Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ, եթե աշխատողը՝ դրամական կամ ապրանքային արժեքներ սպասարկելիս կատարել է այնպիսի արարքներ, որի հետևանքով գործատուն կրել է նյութական վնաս:		

			Առաջարկվում է վերոնշյալ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) կատարել է այնպիսի արարք, որի հետևանքով գործատուն կրել է կամ կարող էր կրել նյութական վնաս.». Վերոնշյալ փոփոխությունն առաջարկվում է հետևյալ հիմնավորմամբ. • առաջարկվող տարբերակից հանելով **«դրամական կամ ապրանքային արժեքներ սպասարկելիս»** բառերը՝ հնարավորություն է տրվում, որպեսզի կարգավորումը կիրառելի լինի գործատուի բոլոր աշխատողների համար, այլ ոչ միայն այն աշխատողների, ում աշխատանքային պարտականությունների մեջ ուղղակի մտնում են դրամական կամ ապրանքային արժեքների սպասարկումը. • առաջարկվող տարբերակում լրացնելով **«կամ կարող էր կրել նյութական վնաս»** բառերը հնարավորություն կտրվի գործատուին վստահության կորստի հիմքով աշխատանքից ազատել այն աշխատողներին, ում չի հաջողվել (իրենց կամքից անկախ, քանի որ կանխվել է վնաս պատճառելու գործողությունը) ավարտին հասցնել նյութական վնաս պատճառելու մտադրությունը:		
24.	Կառավարություն	60-րդ հոդված (լրամշակված նախագծի 61-րդ հոդված)	Հոդվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «**Հոդված 61.** Օրենսգրքի 127-րդ հոդվածում «օրվանից» բառը փոխարինել «օրվան հաջորդող օրվանից՝ մահվան փաստը գրանցող լիազոր մարմնի տրամադրած փաստաթղթի հիման վրա» բառերով:»: Առաջարկվող փոփոխությամբ կստացվի, որ աշխատողի մահվան դեպքում գործատուն կլուծի պայմանագիրը աշխատողի մահվան օրվան հաջորդող օրվանից: Այսինքն, կատարվող փոփոխությամբ նշվում է աշխատանքային պայմանագրի լուծման կոնկրետ օր, ի տարբերություն նախագծով առաջարկվող կարգավորման, որտեղ սահմանվում է աշխատողի մահվան դեպքում	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			աշխատանքային պայմանագրի լուծում աշխատողի մահվան օրվանից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:		
25.	Կառավարություն	61-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 62-րդ հոդվածի) 1-ին կետ	61-րդ (լրամշակված նախագծի 62-րդ) հոդվածի 1-ին կետով Օրենսգրքի 128-րդ հոդվածի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 1-ին կետում «լուծվում է՝» բառերը փոխարինել «համարվում է լուծված» բառերով, իսկ «օրվանից հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում» բառերը՝ «օրվան հաջորդող օրվանից» բառերով: Առաջարկվող փոփոխությամբ կստացվի, որ ֆիզիկական անձ գործատուի մահվան դեպքում աշխատողի աշխատանքային պայմանագիրը կհամարվի լուծված ֆիզիկական անձ գործատուի մահվան օրվան հաջորդող օրվանից: Այսինքն, կատարվող փոփոխությամբ նշվում է աշխատանքային պայմանագրի լուծման կոնկրետ օր: Նման կոնկրետ օր սահմանելը կարևորվում է Օրենսգրքի 109-րդ հոդվածում նախագծով լրացվող 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսվող կարգավորման տեսանկյունից:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
26.	Կառավարություն	62-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 63-րդ հոդվածի) 2-րդ կետ	2-րդ կետում վերջին «(կամ)» բառը փակագծերի փոխարեն առաջարկվում է վերցնել չակերտների մեջ:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
27.	Կառավարություն	65-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 66-րդ հոդվածի) 1-ին կետ	1-ին կետում Օրենսգրքի 135-րդ հոդվածի՝ նոր խմբագրությամբ շարադրվող վերնագրից առաջ առաջարկում ենք լրացնել նաև հոդվածի համարը՝ «**Հոդված 135.**»: Առաջարկվող փոփոխությունը խմբագրական բնույթի է: Շտկվել է նաև 2-րդ կետի խմբագրական վրիպակը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
28.	Կառավարություն	70-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 71-րդ	1-ին կետում «բառերը» բառը փոխարինել «բառը» բառով, իսկ «բառերով» բառը «բառով» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

		հոդվածի) 1-ին կետ			
29.	Կառավարություն	72-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 73-րդ հոդվածի) 3-րդ կետ	1. 3-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «3) 4-րդ մասում՝ ա. առաջին նախադասությունում «իրենց» բառից հետո լրացնել «գրավոր» բառը. բ. երկրորդ նախադասությունում «աշխատանքի» բառից հետո լրացնել «միայն իրենց գրավոր համաձայնությամբ» բառերը.»: Այսինքն, առաջարկվում է՝ 1) «մասի» բառը գրել ներգոյական հոլովով («ի» վերջավորությունը փոխարինել «ում» վերջավորությամբ) և վրան լրացնել «՝» կետադրական նշանը. 2) լրացնել նաև Օրենսգրքի 144-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին նախադասությունում «իրենց» բառից հետո «գրավոր» բառը լրացնելու առաջարկությունը՝ որպես 3-րդ կետի «ա» ենթակետ հետևյալ խմբագրությամբ. «ա. առաջին նախադասությունում «իրենց» բառից հետո լրացնել «գրավոր» բառը.». 3) 3-րդ կետով Օրենսգրքի 144-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունում նախատեսված փոփոխությունը դիտարկել որպես 3-րդ կետի «բ» ենթակետ և «իրենց» բառից հետո լրացնել «գրավոր» բառը: Ներկայացված առաջարկությամբ նախատեսվում է առաջին ընթերցմամբ ընդունված նախագծով Օրենսգրքի 144-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունում կատարվող լրացման մեջ հստակեցնել, որ արտաժամյա աշխատանքի ներգրավվելու համար հաշմանդամություն ունեցող անձանց համաձայնությունը պետք է արտահայտված լինի **գրավոր**: Նշվածով պայմանավորված՝ կարգավորումների միատեսակությունն ապահովելու համար, համանման լրացում է առաջարկվում նաև նույն մասի 1-ին նախադասությունում՝ հղի կանանց և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողի արտաժամյա աշխատանքի	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

		72-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 73-րդ հոդվածի) 4-րդ կետ	ներգրավման համար Օրենսգրքով ներկայում սահմանված համաձայնության համար ևս նախատեսելով այն **գրավոր** արտահայտելու պայմանը: 2. 4-րդ կետի «գ» ենթակետի վերջին՝ «Այդ անձանց աշխատանքը համարվում է չնորմավորված:» նախադասությունը հանել, իրավակիրառական պրակտիկայում հնարավոր հավելյալ խնդիրներից խուսափելու նպատակով:		
30.	Կառավարություն	73-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 74-րդ հոդվածի)	«145-րդ» բառն առաջարկում ենք փոխարինել «144-րդ» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
31.	Կառավարություն	73-րդ հոդվածից (լրամշակված նախագծի 74-րդ հոդվածից) հետո լրացվող նոր՝ 75-րդ հոդված	Լրացնել նոր 75-րդ հոդված հետևյալ բովանդակությամբ՝ «**Հոդված 75.** Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասում «եւ ոչ լրիվ աշխատանքային ժամանակի պայմաններով» բառերը փոխարինել «, ոչ լրիվ աշխատանքային ժամանակի պայմաններով կամ հերթափոխով» բառերով:»: **Օրենսգրքի 147-րդ հոդվածի գործող կարգավորման համաձայն՝ ոչ աշխատանքային տոնական և հիշատակի օրերի նախօրյակին աշխատանքային օրվա տևողությունը կրճատվում է մեկ ժամով, բացառությամբ կրճատ և ոչ լրիվ աշխատանքային ժամանակի պայմաններով աշխատողների: Նշված բացառությունների մեջ առաջարկվում է լրացնել նաև հերթափոխով աշխատողներին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործնականում նշված կատեգորիայի աշխատողների դեպքում ևս անհնար է կրճատել նրանց աշխատանքային օրվա տևողությունը:** **Մասնավորապես առաջարկվում է Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասում «և ոչ լրիվ աշխատանքային ժամանակի պայմաններով» բառերը փոխարինել «, ոչ**	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			լրիվ աշխատանքային ժամանակի պայմաններով կամ հերթափոխով» բառերով: **Փոփոխություն նախատեսելով Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկվում է համապատասխանաբար փոփոխել նախագծի հաջորդող հոդվածների համարները (նախագծի 74-րդ հոդվածից մինչև նախագծի 78-րդ հոդվածը, քանի որ վերջինիս հաջորդող 79-րդ հոդվածն առաջարկվում է հանել (տե՛ս սույն ամփոփաթերթի 33-րդ կետը))՝ հաշվի առնելով նաև որ մինչ այդ նախագծում լրացվել է ևս մեկ նոր հոդված՝ 27-րդ համարակալմամբ:**		
32.	Կառավարություն	75-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 77-րդ հոդվածի) 1-ին կետ	1-ին կետով լրացվող 1.1-ին մասում «աշխատանքային օրվա (հերթափոխի) կեսի ավարտից հետո, եթե աշխատանքային օրվա (հերթափոխի) տևողությունը գերազանցում է 3 ժամը» բառերը փոխարինել «իրենց նախընտրած ժամին» բառերով՝ հնարավորություն տալով հղի կանանց եւ մինչեւ տասնութ տարեկան աշխատողներին չորս ժամը չգերազանցող աշխատանքային օրվա դեպքում հանգստանալու եւ սնվելու համար ընդմիջումը տրամադրել իրենց նախընտրած ժամին:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
33.	Կառավարություն	79-րդ հոդված	Առաջարկվում է նախագծից հանել 79-րդ հոդվածը: Քանի որ 72-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 73-րդ հոդվածի) 4-րդ կետի «գ» ենթակետի վերջին նախադասությունը լրամշակման արդյունքում հանվել է, դրանով պայմանավորված՝ առաջարկվում է օրենքի նախագծից հանել 79-րդ հոդվածը: Հաջորդող հոդվածների համարները համապատասխանաբար փոփոխվել են:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

34.	Կառավարություն	80-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 81-րդ հոդվածի) 3-րդ կետ 80-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 81-րդ հոդվածի) 6-րդ կետ	1. առաջարկում ենք «կազմին» բառից հետո հանել «՝բացառությամբ վարչական աշխատողների,» բառերը՝ տվյալ մասի ձևակերպումն առավել պարզեցնելու համար, քանի որ նշված բառերը տվյալ նորմում գրելով կամ չգրելով միևնույնն է, ստացվում է, որ ուսումնական հաստատությունների վարչական աշխատողներին պարտադիր չէ, որ ամենամյա արձակուրդը տրամադրվի սովորողների և ուսանողների ամառային արձակուրդի ժամանակ: 2. 6-րդ կետով Օրենսգրքի 164-րդ հոդվածում լրացվող 9-րդ մասն առաջարկվում է շարադրել հետևյալ բովանդակությամբ. ««9. Աշխատավայրում բռնության կամ սեռական ոտնձգության ենթարկված աշխատողին իր ցանկությամբ տրամադրվում է ամենամյա արձակուրդ, անկախ աշխատանքի կատարման ժամանակահատվածից։»: Առաջարկվող ձևակերպմամբ նախատեսվում է ամենամյա արձակուրդի տրամադրման կարգավորումը սահմանել այն աշխատողների համար ովքեր բռնության կամ սեռական ոտնձգության են ենթարկվել աշխատավայրում:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
35.	Կառավարություն	81-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 82-րդ հոդվածի) 1-ին կետ	1. «հոդվածում» բառի մեջ «ում» վերջավորությունը փոխարինել «ի» վերջավորությամբ. 2. հանել 1-ին կետը, քանի որ հավելյալ քննարկումների արդյունքներով չվճարվող արձակուրդի ժամանակահատվածը ամենամյա արձակուրդի իրավունք տվող ստաժում ներառելը համարվել է ոչ նպատակահարմար: 3. 2-րդ կետում խմբագրական վրիպակները շտկել և 2-րդ կետի փոփոխությունը նախատեսել առանց համարակալման:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
36.	Կառավարություն	82-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 83-րդ	Նախագծի 82-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 83-րդ հոդվածի) 1-ին կետով Օրենսգրքի 167-րդ հոդվածի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 1-ին մասի 4-րդ կետում	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

		հոդվածի) 1-ին կետ	«զորահավաքային զինվորական» բառերից հետո «ծառայության» բառն առաջարկում ենք փոխարինել «ծառայություն» բառով:		
37.	Կառավարություն	84-րդ հոդված (լրամշակված նախագծի 85-րդ հոդված)	1. 2-րդ կետում առկա խմբագրական վրիպակները շտկվել են, 2. 3-րդ կետում «տրվել» բառը փոխարինել «տրամադրվել» բառով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
38.	Կառավարություն	85-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 86-րդ հոդվածի) 2-րդ կետ	2-րդ կետում «մասը» բառը գրել ներգոյական հոլովով («ը» վերջավորությունը փոխարինել «ում» վերջավորությամբ):	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
39.	Կառավարություն	86-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 87-րդ հոդվածի) 1-ին կետի «ա.» և «բ.» ենթակետեր	Նախագծի 86-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 87-րդ հոդվածի) 1-ին կետի՝ 1. «ա» ենթակետում «բառից» բառը փոխարինել «թվից» բառով: Առաջարկությունը տեխնիկական բնույթի է: 2. «բ.» ենթակետում «մահացած անդամի (ամուսին, զավակ, ծնող, որդեգրող, որդեգրված, խնամատար ծնող, հոգեզավակ, խնամակալ, հոգաբարձու, պապ, տատ, թոռ, հարազատ, համահայր կամ համամայր եղբայր կամ քույր) թաղման դեպքում» բառերն առաջարկում ենք փոխարինել «անդամի մահվան դեպքում» բառերով: Արդյունքում Օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի փոփոխությունը կունենա հետևյալ բովանդակությունը. «4) ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ մինչեւ երեք աշխատանքային օր.»: Այսինքն, առաջարկվում է նշված դրույթում կոնկրետ չթվարկել, թե ովքեր են ընտանիքի անդամները:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
40.	Կառավարություն	88-րդ հոդված (լրամշակված նախագծի 89-րդ հոդված)	88-րդ (լրամշակված նախագծի 89-րդ) հոդվածն առաջարկվում է խմբագրել հետևյալ բովանդակությամբ. **«Հոդված 89.** Օրենսգրքի 180-րդ հոդվածի 2-րդ մասում «Ժամային,» բառից հետո լրացնել «օրական,» բառը, իսկ «այլ ձեւեր, » բառերը հանել:»:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			Սույն կետի առաջարկությամբ կարգավորումը համապատասխանեցվում է Օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում նախագծով առաջարկվող փոփոխությանը:		
41.	Կառավարություն	92-րդ հոդված	Հանել 92-րդ հոդվածը՝ Օրենսգրքի 197-րդ հոդվածը անփոփոխ թողնելով, որով սահմանված է, որ աշխատողի մահվան դեպքում նրան հասանելիք աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների վճարումը կատարվում են մահացածի ընտանիքի անդամին՝ առանց մասնավորեցնելու, թե ովքեր են այդ անդամները: Գործող կարգավորման համաձայն՝ վերոնշյալ գումարները վճարվում են այն անձին, ով կներկայացնի մահվան վկայականը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
42.	Կառավարություն	95-րդ հոդված՝ Օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 201.1-ին հոդվածի 1-ին մաս	1. 1-ին մասում «աշխատանքի ընդունվող անձի» բառերից հետո առաջարկում ենք լրացնել «(այսուհետ՝ աշակերտ)» բառերով, իսկ «աշխատանքի ընդունվող անձին» բառերը փոխարինել «աշակերտին» բառով՝ նպատակ ունենալով առավել հստակեցնել կարգավորումը՝ սահմանելով աշակերտի հասկացությունը: Միաժամանակ, առաջարկվում է «վարձատրություն՝» բառից հետո լրացնել «առնվազն» բառը՝ նպատակ ունենալով շեշտադրել, որ աշակերտի համար նշվածից ավել չափով վարձատրություն ևս կարող է նախատեսվել:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
		95-րդ հոդված՝ Օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 201.1-ին հոդվածի 2-րդ մաս	2. 2-րդ մասում «աշխատանքի ընդունվող անձի» բառերն առաջարկում ենք փոխարինել «աշակերտի» բառով, իսկ «պայմանագրով» բառից հետո լրացնել «(այսուհետ՝ աշակերտի պայմանագիր), որը ենթակա է հաշվառման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերը: Նախատեսվում է Օրենսգրքում ուղիղ սահմանել աշխատանքի ընդունվող անձի մասնագիտական ուսուցման պայմանագրի անունը՝ սահմանելով, որ այն համարվում է աշակերտի պայմանագիր (որով կապահովվի նաև այն, որ Օրենսգրքի 201.1-ին հոդվածի համաձայն	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

		95-րդ հոդված՝ Օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 201.1-ին հոդվածի 3-րդ մաս	կնքվող պայմանագրերը տարանջատվեն Օրենսգրքում նախագծով լրացվող 201.2-րդ հոդվածով նախատեսված պայմանագրերից), և միաժամանակ նախատեսվում է հստակեցնել, որ այն ենթակա է հաշվառման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: 3. 3-րդ մասում առաջարկվում է՝ 1. առկա «մասնագիտական ուսուցման մասին» բառերը փոխարինել «աշակերտի» բառերով: Առաջարկությունը բխում է նախորդ կետում ներկայացված առաջարկությունից: 2. «հատուցել» բառից հետո լրացնել «ոչ ավելի, քան» բառերը, 3. «, եթե այլ բան սահմանված չէ կողմերի միջեւ կնքված պայմանագրով» բառերը հանել՝ նպատակ ունենալով կարգավորել հոդվածում նշված հատուցման առավելագույն շեմը և որպեսզի հնարավոր չլինի կողմերի միջև կնքված պայմանագրով սահմանել հատուցման ավելի մեծ չափ:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
43.	Կառավարություն	96-րդ հոդված	96-րդ հոդվածով՝ Օրենսգրքում լրացվող 201.2-րդ հոդվածի 5-րդ մասում առաջարկվում է՝ 1. «հատուցել» բառից հետո լրացնել «ոչ ավելի, քան» բառերով, 2. «, եթե այլ բան սահմանված չէ կողմերի միջեւ կնքված՝ մասնագիտական ուսուցման մասին պայմանագրով» բառերը հանել՝ նպատակ ունենալով կարգավորել հոդվածում նշված հատուցման առավելագույն շեմը և որպեսզի հնարավոր չլինի կողմերի միջև կնքված պայմանագրով սահմանել հատուցման ավելի մեծ չափ:	**Ընդունվել է:** **Ընդունվել է:**	**Ընդունվել է:** **Ընդունվել է:**
44.	Կառավարություն	97-րդ հոդված՝ Օրենսգրքում լրացվող նոր	1. 97-րդ հոդվածով՝ Օրենսգրքում լրացվող 201.3-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

		201.3-րդ հոդվածի 1-ին մաս	«1. Գործատուն իրավունք ունի իր մոտ կազմակերպելու աշխատանքային պրակտիկա՝ կնքելով մինչեւ երկու ամիս ժամկետով պայմանագիր աշխատանքային պրակտիկա անցնող անձի հետ (այսուհետ՝ փորձնակի պայմանագիր), ոչ ավելի քան մեկ անգամ՝ առանց երկարաձգման իրավունքի:»: Առաջարկվող նոր խմբագրության պարագայում հստակեցվում է կնքվող պայմանագրի անվանումը, մասնավորապես, որ այն հանդիսանում է փորձնակի պայմանագիր, ինչպես նաև կատարվում է նախադասության որոշակի շարահյուսական փոփոխություն:		
		97-րդ հոդված՝ Օրենսգրքում լրացվող նոր 201.3-րդ հոդվածի 2-րդ մաս	2. 97-րդ հոդվածով՝ Օրենսգրքում լրացվող 201.3-րդ հոդվածի 2-րդ մասում «այսուհետև» բառը փոխարինել «այսուհետ» բառով, «առանց վարձատրության կամ կողմերի համաձայնությամբ որոշված չափով վարձատրությամբ» բառերն առաջարկվում է հանել, իսկ «նպատակով» բառից հետո լրացնել «, որի դեպքում վարձատրության հարցը որոշվում է կողմերի համաձայնությամբ» բառերը: Նշված փոփոխության պարագայում նախագծով ներկայացված կարգավորումը բովանդակային առումով փոփոխության չի ենթարկվում, այլ ներկայացված կարգավորման միտքը շարադրվում է այլ խմբագրությամբ:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
		97-րդ հոդված՝ Օրենսգրքում լրացվող նոր 201.3-րդ հոդվածի 4-րդ մաս	3. 97-րդ հոդվածով՝ Օրենսգրքում լրացվող 201.3-րդ հոդվածի 4-րդ մասում «աշխատանքային փորձառություն ձեռք բերելու մասին» բառերն առաջարկվում է փոխարինել «փորձնակի» բառով: Առաջարկությունը բխում է Օրենսգրքում լրացվող 201.3-րդ հոդվածի 1-ին մասում փոփոխություն կատարելու վերաբերյալ վերևում ներկայացված առաջարկությունից՝ որտեղ կիրառվում է «փորձնակի պայմանագիր» հասկացությունը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

		97-րդ հոդված՝ Օրենսգրքում լրացվող նոր 201.3-րդ հոդվածի 5-րդ մաս	4. 97-րդ հոդվածով՝ Օրենսգրքում լրացվող 201.3-րդ հոդվածի 5-րդ մասում «հոդվածով» բառը փոխարինել «և 257-րդ հոդվածներով» բառերով, քանի որ Օրենսգրքում լրացվող 17.1-ին հոդվածի 8-րդ և 9-րդ մասերի կարգավորումները տեղափոխվել են Օրենսգրքի 257-րդ հոդված, որոնցով սահմանված են, թե որ աշխատանքներում չեն կարող ներգրավվել մինչև տասնութ տարեկան աշխատողները:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
		97-րդ հոդված՝ Օրենսգրքում լրացվող նոր 201.4-րդ հոդված	5. 97-րդ հոդվածով՝ Օրենսգրքում լրացվող նոր 201.4-րդ հոդված. 1. Վերնագրում «Աշխատանքային փորձառություն ձեռք բերելու մասին պայմանագիրը» բառերի փոխարեն առաջարկում ենք շարադրել նոր խմբագրությամբ, թավ և առանց շեղագրի՝ հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 201.4. Փորձնակի պայմանագիրը**»: Առաջարկությունը բխում է Օրենսգրքում լրացվող 201.3-րդ հոդվածի 1-ին մասում փոփոխություն կատարելու վերաբերյալ վերևում ներկայացված առաջարկությունից, որով տրվում է փորձնակի պայմանագրի հասկացությունը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
		97-րդ հոդված՝ Օրենսգրքում լրացվող նոր 201.4-րդ հոդված 1-ին մաս	2. Օրենսգրքում լրացվող 201.4-րդ հոդվածի 1-ին մասում «մասին» բառից հետո առաջարկվում է լրացնել «փորձնակի պայմանագիրը» բառերը, իսկ «պայմանագիր» բառն առաջարկվում է հանել: Առաջարկությունը բխում է Օրենսգրքում լրացվող 201.3-րդ հոդվածի 1-ին մասում փոփոխություն կատարելու վերաբերյալ վերևում ներկայացված առաջարկությունից, որով տրվում է փորձնակի պայմանագրի հասկացությունը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
45.	Կառավարություն	99-րդ հոդված	99-րդ հոդվածի 2-րդ անգամ թվագրված 3-րդ կետի համարակալումն առաջարկում ենք փոխարինել «4» թվով	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			և նշված կետում «գործոտուի» բառում 2-րդ «ո» տառը փոխարինել «ա» տառով:		
46.	Կառավարություն	102-րդ հոդված	102-րդ հոդվածով Օրենսգրքի 218-րդ հոդվածում առաջարկվող փոփոխության մեջ «աշխատաժամանակի հաշվառմանը,» բառերից հետո առաջարկում ենք լրացնել «աշխատանքում բռնության կամ սեռական ոտնձգության արգելքին,» բառերով: Օրենսգրքում լրացվող 3.3-րդ հոդվածին զուգահեռ՝ առաջարկվում է աշխատանքում բռնության կամ սեռական ոտնձգության արգելքին վերաբերող հարցերը ևս ներառել կազմակերպության ներքին կարգապահական կանոններով կանոնակարգվող հարցերի մեջ:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
47.	Կառավարություն	103-րդ հոդված	103-րդ հոդվածով Օրենսգրքի 220-րդ հոդվածում կատարվող լրացումից առաջարկվում է հանել «, այդ թվում՝ դրանց չենթարկվելը կամ դրանք չպահպանելը» բառերը, քանի որ «խախտել» բառն արդեն իսկ իր մեջ ներառում է չպահելը, չկատարելը, չպահպանելը, չենթարկվելը բառերը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
48.	Կառավարություն	111-րդ հոդվածի 2-րդ կետ	2-րդ կետն առաջարկվում է խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «2) 1-ին մասում «Կազմակերպությունում աշխատողների» բառերը փոխարինել «Աշխատողների» բառով, «սահմանված» բառից հետո լրացնել «դեպքերում եւ» բառերը, իսկ «համար» բառից հետո լրացնել «գործատուի մոտ» բառերը:»: Սույն կետի առաջարկությունը խմբագրական բնույթի է և բովանդակային փոփոխություն չի ենթադրում:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
49.	Կառավարություն	116-րդ հոդված	Առաջարկվում է հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 116.** Օրենսգրքի 257-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «**Հոդված 257. Մինչեւ տասնութ տարեկան անձանց համար արգելված աշխատանքները**	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			1. Արգելվում է մինչեւ տասնութ տարեկան անձանց ներգրավել ալկոհոլային խմիչքների, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, ծխախոտի, ծխախոտային այլ արտադրատեսակների կամ դրանց փոխարինիչների, էրոտիկա, պոռնոգրաֆիա, սարսափ բովանդակող տպագիր հրատարակությունների, ֆիլմերի, տեսահոլովակների, հեռուստառադիոհաղորդումների, պոռնկագրական բնույթի այլ նյութերի կամ առարկաների արտադրության, օգտագործման, գովազդի, առեւտրի կամ ցանկացած այլ եղանակով տարածմանը կամ իրացմանն ուղղված աշխատանքներում, ինչպես նաեւ մոլեխաղեր կազմակերպելուն կամ դրա գովազդելուն ուղղված աշխատանքներին: 2. Արգելվում է մինչեւ տասնութ տարեկան անձանց ներգրավել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներում, ինչպես նաեւ մինչեւ տասնութ տարեկան անձանց համար ծանր եւ վնասակար համարվող աշխատանքներում: Մինչեւ տասնութ տարեկան անձանց համար ծանր եւ վնասակար համարվող աշխատանքների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:» Սույն առաջարկությունը պայմանավորված է հետևյալով. Նախագծի 9-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 17.1-ին հոդվածից սույն ամփոփաթերթի 5-րդ կետում ներկայացված առաջարկությամբ հանվել են 8-րդ և 9-րդ մասերը՝ այդ բովանդակությամբ կարգավորումները նախագծի 116-րդ հոդված տեղափոխելու նպատակով, քանի որ **աշխատողների անվտանգությանը և առողջությանը վերաբերող կարգավորումները** տրված են Օրենսգրքի 23-րդ գլխում, որում էլ տեղ **<u>է գտել նաև Օրենսգրքի 257-րդ հոդվածը</u>:** <u>Ըստ այդմ, առաջարկվել է</u> Նախագծի 9-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 17.1-ին		

			հոդվածից հանել 8-րդ և 9-րդ մասերը և այդ կարգավորումները նախատեսել Օրենսգրքի 257-րդ հոդվածում, քանի որ դրանք վերաբերում են աշխատողների անվտանգությանը և առողջությանը: Վերոգրյալով պայմանավորված էլ առաջարկվում է նախագծի 116-րդ հոդվածով Օրենսգրքի 257-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ, այլ ոչ թե ուժը կորցրած ճանաչել: Մասնավորապես, առաջարկվում է 116-րդ հոդվածում Օրենսգրքի 257-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. 1) հոդվածը վերնագրել «**Հոդված 257. Մինչև տասնութ տարեկան անձանց համար արգելված աշխատանքները**». 2) նախագծի 9-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 17.1-ին հոդվածի 9-րդ մասի կարգավորումը տեղափոխելով Օրենսգրքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 257-րդ հոդված՝ այն նախատեսել որպես հոդվածի 1-ին մաս. 3) նախագծի 9-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող 17.1-ին հոդվածի 8-րդ մասի կարգավորումը տեղափոխելով Օրենսգրքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 257-րդ հոդված՝ այն նախատեսել որպես հոդվածի 2-րդ մաս, իսկ «նրանց» բառը փոխարինել «մինչև տասնութ տարեկան անձանց» բառերով (կարգավորումն առավել որոշակիացնելու նպատակով):		
50.	Կառավարություն	117-րդ հոդվածի 1-ին կետ	Նախագծի 117-րդ հոդվածի 1-ին կետով Օրենսգրքի 258-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 1-ին մասում «նրանց» բառն առաջարկվում է փոխարինել «հղի կամ մինչեւ մեկ տարեկան երեխա խնամող կանանց» բառերով: Առաջարկը խմբագրական բնույթի է և ունի հստակեցնող նշանակություն:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

51.	Կառավարություն	119-րդ հոդված	«բառով» բառն առաջարկում ենք փոխարինել «բառերով» բառով: Առաջարկությունը խմբագրական բնույթի է:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
52.	Կառավարություն	121-րդ հոդվածի 1-ին կետ	1-ին կետի վերջում առաջարկվում է լրացնել «բառերով» բառը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
53.	Կառավարություն	122-րդ հոդվածի 2-րդ կետ 122-րդ հոդվածի 3-րդ կետ	1. Նախագծի 122-րդ հոդվածի 2-րդ կետով Օրենսգրքի 265-րդ հոդվածում լրացվող 1.1-ին մասում «Ընդ որում, առանց օրինական հիմքերի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ գործատուի ներքին կամ անհատական իրավական ակտերով կամ աշխատանքային պայմանագրով սահմանված պահանջների խախտմամբ աշխատանքի պայմանների փոփոխման կամ աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունների դադարեցման» բառերը հանել, փոխարենը առաջարկվում է լրացնել «Այդ» բառը: Առաջարկվող փոփոխությունը լեզվաբանական է: 2. Առաջարկվում է հանել 3-րդ կետը, քանի որ բովանդակային առումով այն գրեթե կրկնում է Օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը և, այդ առումով, փոփոխության անհրաժեշտությունը բացակայում է: Փոփոխվել է այդ կետին հաջորդող կետի հերթական համարը:	**Ընդունվել է:** **Ընդունվել է:**	**Ընդունվել է:** **Ընդունվել է:**
54.	Կառավարություն	123-րդ հոդվածի 1-ին մաս	1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երկու ամիս հետո, բացառությամբ սույն օրենքի 20-րդ, 25-րդ հոդվածների, 81-րդ հոդվածի 7-րդ կետի, 83-րդ հոդվածի 5-րդ կետի, 95-րդ, 97-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:»: Մասնավորապես, հավելյալ քննարկումների արդյունքներով պաշտոնական հրապարկման օրվանից մեկ ամիս հետո ուժի մեջ մտնելու փոխարեն առաջարկվում	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			է նախատեսել, որ օրենքն ուժի մեջ է մտնելու պաշտոնական հրապարակման օրվանից երկու ամիս հետո՝ հաշվի առնելով նախատեսվող փոփոխությունների ծավալը: Բացի այդ, այն հոդվածների համար, որոնք ենթադրում են համապատասխան ենթաօրենսդրական ակտերի ընդունում, ինչպես նաև ամենամյա արձակուրդի տրամադրման վերաբերյալ կարգավորումներ նախատեսող երկու հոդվածների համապատասխան կետերի (81-րդ հոդվածի 7-րդ կետի, 83-րդ հոդվածի 5-րդ կետի), աշակերտի մասնագիտական ուսուցման կազմակերպման և պայմանագրի հաշվառման (նախագծի 95-րդ հոդված) և փորձնակի ինստիտուտի ներդրման վերաբերյալ (նախագծի 97-րդ հոդված) կարգավորումների համար նախատեսվում է սահմանել ուժի մեջ մտնելու ավելի ուշ՝ մեկ միասնական ժամկետ, այն է, նույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:		
		123-րդ հոդվածի 4-7-րդ մասեր	2. 4-7-րդ մասերն առաջարկվում է հանել՝ հաշվի առնելով նույն հոդվածի 1-ին մասը նոր խմբագրությամբ շարադրելը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
		123-րդ հոդվածի 3-րդ մասից հետո լրացվող նոր 4-րդ մաս	3. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ մաս. «4. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից՝ վեցամսյա ժամկետում:»: Սույն առաջարկությունը պայմանավորված է նույն հոդվածի 1-ին մասը նոր խմբագրությամբ շարադրելու և նույն հոդվածի 4-7-րդ մասերը հանելու հանգամանքով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
55.	Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյան	Նախագծի 102-րդ հոդված	Նախագծի 102-րդ. «աշխատողների օրական կամ շաբաթական աշխատաժամանակի հաշվառմանը,» բառերից հետո լրացնել «աշխատանքային	**Ընդունվել է:** Նախագծի 102-րդ հոդվածում «աշխատաժամ	**Ընդունվել է:**

			հարաբերություններում բռնության կամ սեռական ոտնձգության արգելքը,» բառերով:	անակի հաշվառմանը,» բառերից հետո լրացվել են «աշխատանքում բռնության կամ սեռական ոտնձգության արգելքին,» բառերը: Լրացման մեջ «աշխատանքային հարաբերություններում» բառերի փոխարեն լրացվել է «աշխատանքում» բառը՝ հաշվի առնելով նախագծով Օրենսգրքում լրացվող 3.3-րդ հոդվածի վերնագրում կատարված փոփոխությունը:	
56.	Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյան	Նախագծի 52-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 52-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետ «զ. սույն օրենսգրքով նախատեսված բռնության կամ սեռական ոտնձգության արգելքը աշխատավայրում կամ աշխատանքային պարտականությունների կատարման այլ վայրում խախտելու դեպքում.»:	**Չի ընդունվել:** Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման նոր հիմք	**Չի ընդունվել**

				նախատեսելը դեռևս քննարկված չէ շահագրգիռ կողմերի հետ և առանց համապարփակ քննարկումների նման կարգավորում նախատեսելը գտնում ենք ոչ նպատակահար մար: Ավելին, հաշվի առնելով, որ Օրենսգրքի 218-րդ հոդվածում կատարվող լրացումներում նախագծի 1-ին ընթերցումից հետո առաջարկվում է լրացնել նաև, որ կազմակերպության ներքին կարգապահակ ան կանոնները ներառում են նաև աշխատանքում բռնության կամ սեռական ոտնձգության	

				արգելքին վերաբերող հարցերը, ստացվելու է այնպես, որ աշխատանքում բռնության կամ սեռական ոտնձգության համար անձը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության: Միաժամանակ, գտնում ենք, որ նոր ներմուծվող ինստիտուտի (նախագծով ՀՀ աշխատանքային օրենսգրքում լրացվող 3.3-րդ հոդված) դեռևս չգործարկման դեպքում նման իրավունք գործատուին տալը ճիշտ չէ, և պարունակում է ռիսկ, որ այն կարող է ընտրանքային կիրառվել:	

				Առաջարկում ենք ներկայացված առաջարկը քննարկման առարկա դարձնել առանձին նախաձեռնության շրջանակում:	
57.	Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյան	Նախագծի 52-րդ հոդվածի 2-րդ կետ	Նախագծի 52-րդ հոդվածի 2-րդ կետով լրացվող 1.1. մասի առաջին պարբերությունում «հաշմանդամության կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողը» բառերը փոխարինել «հաշմանդամություն ունեցող անձը» բառերով:	**Չի ընդունվել:** Նախագծի 52-րդ (լրամշակված նախագծի 53-րդ) հոդվածով Օրենսգրքի 113-րդ հոդվածում լրացվող 1.1-ին մասի կարգավորման նպատակը՝ հաշմանդամության կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների համար որոշակի նախապատվության իրավունքի սահմանումն է, և այդ շրջանակի	**Չի ընդունվել**

				ընդլայնումը ներկա փուլում գտնում ենք ոչ նպատակահարմար, քանի որ կարծում ենք, որ այն բոլոր շահագրգիռ կողմերի հետ համակողմանի քննարկումների կարիք ունի:	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
1.	Կառավարություն	1-ին հոդված	Օրենսգրքի 156-րդ հոդվածում լրացվող 2.1-ին մասում «փորձնակի» բառից հետո առաջարկվում է լրացնել «և մասնագիտական ուսուցում անցնող աշակերտի» բառերը: Առաջարկությունը բխում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 201.1-ին հոդվածի 2-րդ մասում լրացում կատարելու առաջարկությունից, համաձայն որի՝ սահմանվում է, որ աշակերտի պայմանագիրը ենթակա է հաշվառման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Այդ հաշվառման իրավական հիմքերն ապահովելու նպատակով էլ նախատեսվում է կատարել սույն կետով նշված լրացումը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
2.	Կառավարություն	2-րդ հոդված	2-րդ հոդվածում՝ «հինգ» բառն առաջարկում ենք փոխարինել «վեց» բառով՝ պայմանավորված «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» հոդվածի 1-ին մասով նախատեսված վեցամսյա ժամկետով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
«ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ, ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԵՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՆՁՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					

1.	Կառավարություն	1-ին հոդված	Հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի՝ առաջին ընթերցմամբ ընդունված նախագծում ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 201.1-ին հոդվածի 2-րդ մասում լրացում կատարելու առաջարկությունը, համաձայն որի՝ սահմանվում է, որ աշակերտի պայմանագիրը ենթակա է հաշվառման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի՝ առաջին ընթերցմամբ ընդունված նախագծի վերաբերյալ սույն ամփոփաթերթում ներկայացված 1-ին առաջարկությունը՝ օրենքի նախագծի 1-ին հոդվածում առաջարկվում է կատարել լրացումներ, որոնց համաձայն՝ սահմանվում է, թե տեղեկատվական բազան ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով մասնագիտական ուսուցում անցնող աշակերտի վերաբերյալ ինչ տվյալներ է ներառում: Մասնավորապես, առաջարկվում է օրենքի նախագծի 1-ին հոդվածով «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքի 7-րդ հոդվածում լրացվող 2-րդ մասում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները. 1. «գործատուի կողմից աշխատանքային պրակտիկա» բառերից հետո լրացնել «և մասնագիտական ուսուցում» բառերով, իսկ «շրջանակներում ներգրավված փորձնակի» բառերից հետո՝ «և աշակերտի» բառերով. 2. 1-ին և 2-րդ կետերից հանել «փորձնակի» բառերը. 3. 3-րդ կետում «աշխատանքային պրակտիկան» բառերից հետո լրացնել «կամ մասնագիտական ուսուցումը» բառերով. 4. 4-րդ կետից հանել «փորձնակի» բառը, «աշխատանքային պրակտիկայի» բառերից հետո լրացնել «կամ մասնագիտական ուսուցման» բառերով, իսկ «սկզբի»	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			բառից առաջ լրացնել «կամ մասնագիտական ուսուցման» բառերով. 5. 5-րդ կետում «պրակտիկան» բառից հետո լրացնել «կամ մասնագիտական ուսուցումն» բառերով. 6. 6-րդ կետում «փորձնակն անցնելու է» բառերը փոխարինել «փորձնակը կամ աշակերտն անցնելու են» բառերով, իսկ «աշխատանքային պրակտիկան» բառերից հետո լրացնել «կամ մասնագիտական ուսուցումը» բառերով:		
2.	Կառավարություն	2-րդ հոդված	2-րդ հոդվածում «հինգ» բառն առաջարկում ենք փոխարինել «վեց» բառով՝ հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» հոդվածի 1-ին մասով նախատեսված վեցամսյա ժամկետով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**